ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 327(075.8)
ԳՄԴ 66.4g73
Գ 206

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհուրդը:

Գալստյան Ն. Ս.
Գ 206 Միջազգային տարածաշրջանագիտության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ/Գալստյան Ն. Ս.: - Եր., ԵՊՀ հրատ., 2021, 136 էջ:

Ուսումնական ձեռնարկը ներառում է միջազգային տարածաշրջանագիտության՝ որպես միջազգային տարածաշրջանների միջգիտակարգային ուսումնասիրության ոլորտի հասկացութային համակարգին, մեթոդական մոտեցումներին և մեթոդներին վերաբերող թեմաներ, որոնց ուսումնասիրությամբ կհամալրվեն ուսանողների՝ նշված ոլորտին առնչվող տեսական ու մեթոդական գիտելիքները:

Ձեռնարկը կարող է իր համեստ նպաստն ունենալ միջազգային տարածաշրջանների ձևավորման ու կառուցվածքայնացման, այդ տարածաշրջաններում և դրանց միջև փոխազդեցությունների գործընթացների, ինչպես նաև պետությունների արտաքին քաղաքականության վրա ազդող տարածաշրջանային գործոնների ուսումնասիրության գործընթացում:

Ձեռնարկը նախատեսված է միջազգային հարաբերությունների և պետությունների արտաքին քաղաքականության խնդիրներով մասնագիտացող ուսանողների համար:

ՀՏԴ 327(075.8)
ԳՄԴ 66.4g73

ISBN 978-5-8084-2498-2

© ԵՊՀ հրատ., 2021
© Գալստյան Ն. Ս., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 5
1.1. Միջազգային տարածաշրջանագիտության օբյեկտն ու առարկան 5
1.2. Միջազգային տարածաշրջանագիտության գործառույթները 10
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ 11
ԹԵՄԱ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ 13
2.1. Միջազգային տարածաշրջանագիտության մեջ կիրառվող մոտեցումները 14
2.2. Միջազգային տարածաշրջանագիտության մեջ կիրառվող մեթոդները 16
ԹԵՄԱ 3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐԴԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԻՊԱԲԱՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 23
3.1. Տարածաշրջանի մեկնաբանությունները 23
3.2. Տարածաշրջանների տիպաբանման մոտեցումները 26
3.3. Տարածաշրջանների աստիճանակարգային կառուցվածքը 34
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ 39
ԹԵՄԱ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅՆԱՑՈՒՄ 41
4.1. Տարածաշրջանայնացման մեկնաբանությունները 41
4.2. Տարածաշրջանայնացման հիմնապատճառներն ու նպաստող գործոնները 48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ 52
ԹԵՄԱ 5. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ 54
5.1. Միջպետական տարածաշրջանային ինտեգրման բնորոշումը 54
5.2. ՄՏԻ հիմնապատճառները և նպաստող գործոնները 55
5.3. ՄՏԻ մակարդակները 60
5.4. Տարածաշրջանային միջպետական ինտեգրման մեկնաբանման ընդհանուր և հատուկ տեսությունները 66

5.4.1. Միջազգային հարաբերությունների տեսությունները և տարածաշրջանային միջպետական ինտեգրումը..... 66
5.4.2. ՄՏԻ հատուկ տեսությունները 69
5.4.2.1. Ֆեդերալիզմ 69
5.4.2.2. Նոր ֆունկցիոնալիզմ.....70
5.4.2.3. Միջկառավարական մոտեցում.....72
5.4.2.4. Քաղաքական ցանց 73
5.4.2.5. Տարբերակված (ճկուն) ինտեգրում 74
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....77
ԹԵՄԱ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ..... 80
6.1. Միջազգային տարածաշրջանայնության բնորոշումները... 80
6.2. Հին և նոր, փակ և բաց, կոշտ և փափուկ տարածաշրջանայնություն 84
6.3. Միջտարածաշրջանայնություն 92
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....100
ԹԵՄԱ 7. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ 103
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ 103
7.1. Միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակները. տարածաշրջանը՝ որպես վերլուծության ենթամակարդակ 103
7.2. Տարածաշրջանային անվտանգության համալիրներ..... 107
7.3 ՏԱՀՏ համալրումը նոր չափումներով.....113
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....117
ԹԵՄԱ 8. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳ.....119
8.1. Տարածաշրջանի կառուցվածքը 119
8.1.1. Պետությունների աստիճանակարգումը միջազգային համակարգում 119
8.1.2. Պետությունների աստիճանակարգումը տարածաշրջանային ենթահամակարգում 122
8.1.3. Տարածաշրջանի «բևեռային» կառուցվածքը..... 126
8.2. Տարածաշրջանային կարգ 127
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ..... 134

ԹԵՄԱ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Այս թեմայի շրջանակում կանդրադառնանք միջազգային տարածաշրջանագիտության՝ համանման խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող այլ գիտաճյուղերին, մասնավորապես երկրագիտության, աշխարհաքաղաքականության և քաղաքական աշխարհագրության հետ փոխառնչություններին, ինչպես նաև միջազգային տարածաշրջանագիտության օբյեկտին, առարկային ու գործառույթներին:

1.1. Միջազգային տարածաշրջանագիտության օբյեկտն ու առարկան

Տարածաշրջանների նկատմամբ հետաքրքրությունը սկսել է աճել դեռևս եվրոպական գաղութային նվաճումների ժամանակաշրջանում, սակայն այն գիտական ձևակերպման հետաքրքրությունն ստացել է Երկրորդ աշխարհամարտից հետո: Այդուհանդերձ, այս ոլորտում ցայսօր ակադեմիական բանավեճերը շարունակվում են: Խնդրի էությունը լավ պատկերացնելու համար հարկ է նախևառաջ նկատել, որ հայաստանյան գիտական միջավայրում աստիճանաբար ամրացող «տարածաշրջանագիտություն» բառեզրը ճշգրիտ չի արտացոլում գիտական ճանաչողության այս ուղղությունը: Դրա «գիտություն» բառարմատը կարող է տպավորություն ստեղծել՝ իբր տարածաշրջանագիտությունն ինքնուրույն, անկախ, կայացած գիտակարգ է, մինչդեռ այն իրականում **միջգիտակարգային ուսումնասիրությունների ուղղություն** է, որն իր օբյեկտի՝ տարածաշրջանի ճանաչողության համար մեկ «հովանոցի» տակ **համակցում է այլ գիտաճյուղերի** (նախևառաջ՝ քաղաքագիտության, տնտեսագիտու-

թյան, սոցիոլոգիայի, պատմագիտության, մշակութաբանության) **հասկացութային համակարգերն ու մեթոդները**: Այսպիսի համակցված մոտեցմամբ որևէ տարածաշրջանի ուսումնասիրության արդյունքում, անշուշտ, ստեղծվում է գիտելիք: Այդպիսի գիտելիք ու այդպիսի ուսումնասիրություն իրականացնելու կարողություն ու հմտություն ունեցողը, անշուշտ, տվյալ տարածաշրջանի մասնագետ է: Այդուամենայնիվ, գիտական ճանաչողության այս ոլորտն առավել ճշգրիտ բնորոշում է «**տարածաշրջանային ուսումնասիրություններ**» (անգլ.՝ Area/Regional studies, ռուս.՝ регионоведение) բառեզրը: Ուստի «տարածաշրջանագիտություն» բառեզրը՝ որպես «տարածաշրջանային ուսումնասիրությունների» հոմանիշ, պետք է կիրառել միայն պայմանականորեն՝ նկատի ունենալով ոչ թե գիտություն, գիտակարգ՝ տարածաշրջանի մասին, այլ տարածաշրջանի ճանաչողությանն ուղղված ուսումնասիրությունների ուղղություն: Այս ձեռնարկում առաջնորդվում ենք հենց այս մոտեցմամբ:

Մեկ այլ խնդիր է այն, որ տարբեր պետություններում գլխավորապես տարածաշրջանագիտության ոլորտում ակադեմիական տարբեր ավանդույթների պատճառով ցայսօր չկա միասնական մոտեցում միջազգային տարածաշրջանագիտության օբյեկտի շուրջ. որոշ երկրներում տարածաշրջանագիտությունը նույնացվում է պետության «ներքին» (վարչական, պատմամշակութային) տարածաշրջանների ուսումնասիրության հետ՝ համարվելով, փաստորեն, երկրագիտություն (անգլ.՝ country studies, ռուս.՝ страноведение) կամ դրա մաս (օրինակ՝ երկրամասագիտություն), իսկ այլ երկրներում այն միջազգային տարածաշրջանների ուսումնասիրության ուղղություն է և ներկայանում է միջազգային «տարածագիտություն» կամ «տարածաշրջանագիտություն» (անգլ.՝ International Area/Regional studies, ռուս.՝ между-

народное /зарубежное регионоведение) անվանումով [1, pp. 1-7]: Մեր ձեռնարկի շրջանակում մենք առաջնորդվում ենք երկրորդ մոտեցմամբ՝ տարածաշրջանագիտությունը դիտարկելով որպես միջազգային տարածաշրջանների գիտական ուսումնասիրության ուղղություն, որը, ինչպես բնորոշում են որոշ հեղինակներ, ուսումնասիրում է աշխարհի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական համակարգերի ձևավորման ու գործառնման օրինաչափությունները՝ հիմք ընդունելով դրանց պատմական, իրավաքաղաքական, ժողովրդագրական, կրոնամշակութային, բնաշխարհագրական և այլ առանձնահատկությունները, ինչպես նաև այդ տարածաշրջանների տեղն ու դերը միջազգային հարաբերությունների համակարգում և դրա ենթահամակարգերում [2, c. 70]:

Ինչպես ընդհանրապես տարածաշրջանագիտությունը, միջազգային տարածաշրջանագիտությունը ևս ինքնուրույն գիտաճյուղ չէ, քանի որ թե՛ նրա ուսումնասիրության առարկան, թե՛ մեթոդները «վերցված» են այլ գիտաճյուղերից՝ քաղաքագիտությունից (հատկապես միջազգային հարաբերությունների տեսությունից ու քաղաքական աշխարհագրությունից), տնտեսագիտությունից (մասնավորապես միջազգային տնտեսագիտությունից), պատմագիտությունից, մշակութաբանությունից, աշխարհագրությունից և այլն: Օրինակ՝ միջազգային տարածաշրջանագիտությունը սերտ առնչություններ ունի *երկրագիտության* հետ, որի օբյեկտն առանձին երկրներն են. այն զբաղվում է առանձին երկրների համալիր ուսումնասիրությամբ և դրանց համեմատությամբ: Ակնհայտ են միջազգային տարածաշրջանագիտության առնչությունները նաև *աշխարհաքաղաքականության* ու *քաղաքական աշխարհագրության* հետ, որոնք համապատասխանաբար զբաղվում են աշխարհագրական գործոնների՝ միջազգային

համակարգում պետությունների քաղաքականության ու նրանց փոխհարաբերությունների վրա ազդեցության, քաղաքական երևույթների և գործընթացների տարածքային կազմակերպման ուսումնասիրությամբ (տե՛ս նաև ***Գծապատկեր 1***):

Այսպիսով՝ միջազգային տարածաշրջանագիտության ***օբյեկտը*** միջազգային (աշխարհաքաղաքական կամ մակրոտարածաշրջան) տարածաշրջաններն են, ավելի կոնկրետ՝ ողջ աշխարհի ու դրա առանձին մասերի մասշտաբով տարածաշրջանային սոցիալական համակարգերի և փոխհարաբերությունների՝ առարկայորեն (աշխարհագրորեն, պատմականորեն, աշխարհաքաղաքականորեն, քաղաքագիտորեն, մշակութաբանորեն և այլն) պայմանավորված համեմատաբար ամբողջական բազմազանությունը [3, c. 37]: Իսկ միջազգային տարածաշրջանագիտության ***առարկան*** այդ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական, կրոնամշակութային, բնաշխարհագրական զարգացումն է: Այսինքն՝ միջազգային տարածաշրջանագիտությունն ուսումնասիրում է տարածաշրջանի պետությունների փոխհարաբերությունները, նրանց տարածաշրջանային խմբավորումները, տարածաշրջանի ներքին գործընթացները, որևէ խնդրի տարածաշրջանային դրսևորումները, ինչպես նաև երկու և ավելի տարածաշրջանների փոխազդեցությունները՝ միջտարածաշրջանայնության դրսևորումները:

Միջազգային տարածաշրջանագիտության զարգացման արդյունքում ձևավորվել է ուսումնասիրությունների այդ ուղղության մի մեծ «ընտանիք», որը ներառում է ասիական, ամերիկյան, աֆրիկյան, եվրոպական ուսումնասիրություններն իրենց բաղադրիչներով ու ենթաբաղադրիչներով, օրինակ՝ հայագիտությունը (անգլ.՝ Armenian studies, Armenology, ռուս.՝ арменистика, арменология, арменоведение) կովկասագիտության (անգլ.՝ Caucasian

studies, Caucas(i)ology, ռուս.՝ кавказоведение, кавказиология), վերջինս՝ միջինարևելյան ուսումնասիրությունների (անգլ.՝ Middle Eastern studies, ռուս.՝ средневосточние исследования), իսկ դա էլ՝ ասիական ուսումնասիրությունների (կամ արևելագիտության) (անգլ.՝ Asian/Oriental studies, ռուս.՝ востоковедение, ориенталистика) մաս:

Գծապատկեր 1. Միջազգային տարածաշրջանագիտության կապն այլ գիտաճյուղերի հետ



1.2. Միջազգային տարածաշրջանագիտության գործառույթները

Ինչպես գիտական ճանաչողության յուրաքանչյուր ուղղություն, միջազգային տարածաշրջանագիտությունը ևս ունի իր ***գործառույթները*** [4, c. 21], որոնցից մենք կարևորում ենք հետևյալները.

- տեղեկատվական-լուսավորչական գործառույթը, որի նպատակը միջազգային այս կամ այն տարածաշրջանի մասին տվյալների հավաքումն է և դրա փոխանցումն օգտագործողին՝ հետազոտողին, որոշումների ընդունման կենտրոններին, ինչպես նաև այդ տվյալների հանրայնացման միջոցով մարդկանց ճանաչողական գիտելիքներն այդ տարածաշրջանների մասին հարստացնելը,
- գիտահետազոտական գործառույթը, որի նպատակը միջազգային տարածաշրջանի ներսում կամ դրան առնչվող գործընթացների, զարգացման միտումների, օրինաչափությունների ու առանձնահատկությունների վերհանումն ու ուսումնասիրությունն է,
- գործնական-կանխատեսողական գործառույթը, որի նպատակը միջազգային տարածաշրջանի մասին փաստական ու հետազոտական տվյալների, տեղեկության միջոցով արդյունավետ քաղաքականության մշակմանն աջակցելն է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞վ էր պայմանավորված միջազգային տարածաշրջանների նկատմամբ գիտական հետաքրքրության աճը գաղութացման ու ապագաղութացման ժամանակաշրջաններում:

2. Ինչո՞վ է պայմանավորված միջազգային տարածաշրջանների գիտական ճանաչողության միջգիտակարգային մոտեցման անհրաժեշտությունը:

3. Ի՞նչ նշանակություն ունի միջազգային տարածաշրջանագիտությունը սոցիալական (հասարակական) և հումանիտար գիտություններում:

4. Ինչպե՞ս կարող են փոխազդել միջազգային տարածաշրջանագիտությունն ու երկրագիտությունը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Pitman L. (2015). Supporting Research in Area Studies. A guide for academic libraries. Chandos Publishing: “Waltham”, 111 p., pp. 1-13.

Барыгин И. (2009). Международное регионоведение: Учебник для вузов. Санкт-Петербург: «Питер», 384 с., с. 26-44, 88-94.

Воскресенский А. (ред.) (2014). Мировое комплексное регионоведение: Учебник. Москва: «Магистр», 416 с., с. 42-79, 368-383.

Гладкий Ю., Чистобаев А. (2003). Регионоведение: Учебник. Москва: «Гардарики», 384 с., с. 31-32, 33-48.

Иванова М. (2011). Введение в регионоведение: Учебное пособие. Томск: Томский политехнический университет, 175 с., с. 16-30.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] L. Pitman (2015). Supporting Research in Area Studies. A guide for academic libraries, Chandos Publishing: “Waltham”

[2] А. Воскресенский (2014). Е. Колдунова, А. Киреева, Становление концептуального поля мирового комплексного/зару-

бежного регионоведения и мировой полиити// *Мировое комплексное регионоведение: Учебник*, А. Воскресенский (ред.), Москва, «Магистр», с. 42-79.

[3] И. Барыгин (2009). Международное регионоведение: Учебник для вузов, Санкт-Петербург: «Питер».

[4] М. Иванова (2011). Введение в регионоведение: Учебное пособие, Томск: Томский политехнический университет, с. 175.

ԹԵՄԱ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այս թեմայի շրջանակում կանդրադառնանք միջազգային տարածաշրջանագիտության շրջանակում կիրառվող համագիտական, մասնագիտական, գիտակարգային և միջգիտակարգային այն մեթոդներին ու մեթոդական մոտեցումներին, ինչպիսիք են դիտարկման, նկարագրման, համեմատության, վիճակագրության, մոդելավորման, քարտեզագրման, բովանդակային ու իրադարձային վերլուծության, փորձագիտական հարցազրույցի ու հարցման մեթոդները և համակարգային, խնդրային, պատմական, տարածքային, տիպաբանական, համալիր մոտեցումները:

Ցանկացած երևույթի գիտական ճանաչողություն հիմնված է այդ երևույթի ուսումնասիրության մեթոդի կամ դրանց համալիրի մշակման, ընտրության և կիրառման վրա: Ժամանակի ընթացքում գիտության տարբեր ճյուղեր ձևավորել ու զարգացրել են սեփական հասկացութային համակարգերը, մեթոդական մոտեցումներն ու մեթոդները: Բայց հանրային կյանքի բարդացման և դրա գիտական ճանաչողության մեծացող պահանջմունքի արդյունքում ի հայտ են եկել ուսումնասիրության միջգիտակարգային ոլորտներ կամ ուղղություններ, որոնք չունեն մեթոդական սեփական գործիքակազմ և կիրառում են ինչպես համագիտական, այնպես էլ տարբեր գիտաճյուղերի մեթոդներն ու մեթոդական մոտեցումները: Ինչպես նշեցինք, միջազգային տարածաշրջանագիտությունն ինքնուրույն գիտակարգ չէ և չունի մեթոդական սեփական գործիքակազմ: Իր առջև դրված գիտական խնդիրները լուծելու համար միջազգային տարածաշրջանագիտությունը կիրառում է համագիտական, մասնագիտական, գի-

տակարգային և միջգիտակարգային մեթոդների և մեթոդական մոտեցումների մեծ համալիր: Համառոտ անդրադառնանք տարածաշրջանագիտական գրականության [3, c. 95-122, 4, c. 144-162, 5, c. 11-29, 6, 7, c. 12-39] մեջ առավել հաճախ հիշատակվող և կարևորվող մեթոդներին ու մոտեցումներին:

2.1. Միջազգային տարածաշրջանագիտության մեջ կիրառվող մոտեցումները

Համակարգային մոտեցմամբ տարածաշրջանը դիտարկվում է որպես համակարգ (և միջազգային-գլոբալ համակարգի ենթահամակարգ), որին բնորոշ են համակարգի բոլոր հատկանիշները՝ կառուցվածքային տարրերն ու դրանց կապերը (պետություններ, տարածաշրջանային միջպետական և ոչ պետական կազմակերպություններ, շարժումներ, կազմակերպված ոչ պետական խմբավորումներ, այդ բոլորի միջև փոխհարաբերություններ, դրանք կարգավորող նորմեր և այլն), ներքին (ներտարածաշրջանային) և արտաքին (արտարածաշրջանային կամ գլոբալ) միջավայրերն ու դրանց փոխազդեցությունները և այլն:

Համակարգային մոտեցմանը սերտորեն առնչվում են ***կառուցվածքային*** (ուշադրության կենտրոնացումը համակարգի կառուցվածքային տարրերի միջև կապերի, փոխազդեցությունների վրա) և ***գործառութային*** (ուշադրության կենտրոնացումը համակարգի ու դրա կառուցվածքային տարրերի՝ ներքին ու արտաքին միջավայրում գործառնության վրա) ***մոտեցումները***:

Համակարգային մոտեցմանը կապված է նաև ***տարածքային մոտեցումը***, որի շրջանակում տարածաշրջանը ներկայացվում է որպես մարդ-հասարակություն-բնություն փոխազդեցության տարածական կազմակերպում սահմանազատված և

բաղադրատարրերի ու գործընթացների որոշակի ամբողջականություն ունեցող տարածքում:

Խնդրային մոտեցմամբ ուսումնասիրվում են տվյալ տարածաշրջանին (կամ դրա բոլոր երկրներին), տարածաշրջանի կոնկրետ տիպի պետություններին բնորոշ կամ անհատական (միայն մեկ պետությանը բնորոշ) խնդիրները՝ դրանց պատճառները, նպաստող գործոնները, զարգացումը, ազդեցությունը տվյալ երկր(ներ)ի կամ ընդհանրապես տարածաշրջանի վրա:

Պատմական մոտեցմամբ տարածաշրջանը դիտարկվում է որպես տարածաժամանակային միավոր՝ վերհանելով տարածաշրջանի, տարածաշրջանային այս կամ այն գործընթացի, խնդրի ձևավորումն ու զարգացումը, դրանց պատմական համատեքստը, զարգացման հանգուցային շրջափուլերը, օրինաչափություններն ու միտումները թե՛ ընդհանրապես, թե՛ պատմական առանձին շրջափուլերում:

Տարածաշրջանագիտության մեջ ***տիպաբանական մոտեցման*** կիրառումը ենթադրում է ուսումնասիրության օբյեկտի՝ տարածաշրջանների խմբավորում դրանց *որակական* ընդհանրացված հատկանիշների հիման վրա, իսկ ***դասակարգման մոտեցումը***՝ տարածաշրջանների խմբավորում դրանց *քանակական* հատկանիշների հիման վրա: Այս մոտեցումների կիրառումը նշանակալիորեն դյուրացնում է տարածաշրջանների հատկապես համեմատական ուսումնասիրությունը՝ թույլ տալով բացահայտել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Եթե վերը նշված մոտեցումները վերաբերում են ուսումնասիրության օբյեկտին և/կամ առարկային, ապա ***համալիր (միջգիտակարգային) մոտեցումը*** առնչվում է թե՛ դրանց՝ ենթադրե-

լով օբյեկտի համակողմանի ուսումնասիրություն, թե՛ ուսումնասիրության մեթոդներին՝ ենթադրելով տարածաշրջանների ուսումնասիրության համար համագիտական, մասնագիտական ու գիտակարգային տարբեր մեթոդների համաժամանակյա կիրառում:

Որպես մեթոդական մոտեցումներ՝ միջազգային տարածաշրջանագիտության մեջ կիրառվում են նաև ***միջազգային հարաբերությունների տեսությունները***:

2.2. Միջազգային տարածաշրջանագիտության մեջ կիրառվող մեթոդները

Դիտարկման մեթոդը կիրառվում է օբյեկտի անմիջական ուսումնասիրության համար՝ հիմնվելով անհատական ընկալման վրա: Այս մեթոդի բացառիկ արժեքավորությունն այն է, որ դրա միջոցով հետազոտողը չմիջնորդավորված ձևով ստանում է տվյալներ օբյեկտի ու դրա հատկանիշների մասին, իսկ հարաբերական թերությունն այն է, որ այս միջոցով տեղեկություն ստանալու դեպքում խիստ մեծ է սուբյեկտիվ գործոնների ազդեցության հավանականությունը՝ պայմանավորված հետազոտողի գաղափարական ու արժեքային նախընտրություններով, կողմնորոշումներով, ինչպես նաև դիտարկման միջոցների անկատարությամբ:

Նկարագրման մեթոդը կիրառվում է սեփական կամ այլ հետազոտության արդյունքները գիտական ձևակերպումներով ընդհանրացնելու, ամփոփելու ժամանակ՝ քննվող խնդիրը նրա առավել կարևոր հատկանիշների հիման վրա բնութագրելու նպատակով:

Համեմատության մեթոդը կիրառվում է, օրինակ, երկու և ավելի տարածաշրջաններ կամ միևնույն տարածաշրջանը ժամանակային տարբեր միջակայքերում համեմատելիս՝ նպատակ ունենալով վերհանել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները տարածական, ժամանակային կամ տարածաժամանակային դիտանկյուններից: Ինչպես բոլոր մեթոդները, համեմատությունը ևս պահանջում է ուսումնասիրության ընթացքում որոշակի կանոնների պահպանում.

ա. որակական ընդհանրությունները բացահայտելը պետք է նախորդի քանակական տարբերությունների վերհանելուն,

բ. երևույթները պետք է նախևառաջ համեմատել ըստ առավել նշանակալի հատկանիշների,

գ. համեմատության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և վերլուծել համեմատվող օբյեկտների գործառնման ու զարգացման օբյեկտիվ պայմանները:

Նախնական տվյալների հավաքման, մշակման և վերլուծության քանակական մեթոդներից միջազգային տարածաշրջանագիտության մեջ լայնորեն կիրառվում են սոցիալ-տնտեսական և մաթեմատիկական ***վիճակագրության*** մեթոդները: Դրանցից սոցիալ-տնտեսականը կիրառվում է նախևառաջ տարածաշրջանի կամ երկրների մասշտաբով սոցիալական, տնտեսական և այլ երևույթների ու գործընթացների ուսումնասիրության, իսկ մաթեմատիկականը՝ վիճակագրական վերլուծության արդյունքների ճշգրտությունն ու հուսալիությունը գնահատելու համար:

Մոդելավորման մեթոդը ենթադրում է օբյեկտի հետազոտում դրա մոդելի հիման վրա: Մոդելավորումն իրականացվում է երեք փուլով՝

ա. ուսումնասիրվող օբյեկտի հիմնարար հատկանիշների հիման վրա դրա մոդելի կառուցում,

բ. մոդելի ուսումնասիրություն,

գ. ստացված արդյունքների տեղափոխում օբյեկտի վրա:

Ներկայումս, կապված համակարգչայնացման տարածման և գիտության տեսականացման զարգացման հետ, մաթեմատիկական մոդելավորումն իր տեղը զիջել է մոդելավորման վերացական, համարժեքային և նմանակման տեսակներին: Այս մեթոդը, ակնհայտ օգտակարությանը զուգահեռ, ունի նաև թերություններ: Օրինակ՝ մի կողմից, տարածաշրջանային համակարգի մոդելը պետք է արտացոլի դրա ներքին գործընթացների ու երևույթների փոխազդեցությունների բարդ ամբողջությունը, մյուս կողմից, որպեսզի մոդելը լինի պարզ ու հասկանալի դրա հիման վրա որոշում ընդունողների համար, այն անհրաժեշտաբար պետք է պարզեցվի՝ վերացականացվի, ինչն էլ հղի է սխալ արդյունքների հավանականությամբ:

Տարածաշրջանագիտության մեջ աշխարհագրությունից փոխառնված մեթոդներից է ***քարտեզագրումը***՝ քարտեզի հիման վրա տարածաշրջանի ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական, սոցիալ-աշխարհագրական և քաղաքաաշխարհագրական գործընթացների ու երևույթների ուսումնասիրությունը: Քարտեզը հետազոտողի տեսողական հնարավորություն է տալիս ամբողջական ու մանրամասնված պատկերացում կազմելու ուսումնասիրվող տարածաշրջանի այս կամ այն հատկանիշի օրինաչափությունների մասին:

Հասարակական գիտությունների մեթոդներից տարածաշրջանագիտության մեջ լայնորեն կիրառվում են բովանդակային, իրադարձային ու իրավիճակային վերլուծության, ճանաչողական քարտավորման, փորձագիտական և հանրային հարցման մեթոդները: ***Բովանդակային վերլուծության*** մեթոդը կիրառվում է տեքստային և հաղորդակցության նյութերի (օրինակ՝ նորմատի–

իրավական ակտերի, ՀԼՄ հրապարակումների, հայտարարությունների, ծրագրերի, ձայնագրությունների, տեսաձայնագրությունների, արխիվային նյութերի, նամակների, հուշերի) *քանակական* և *որակական* ուսումնասիրության համար: Հետազոտվող նյութի բովանդակության մեջ այս կամ այն բառի, բառակապակցության, մտքի կրկնվելու հաճախակիության վերհանումը հնարավորություն է տալիս բացահայտելու, օրինակ, այդ նյութի քաղաքական ուղղվածությունը, հասարակական-քաղաքական կյանքի հրատապ խնդիրները, քաղաքական հայացքների էվոլյուցիան և այլն:

Իրադարձային վերլուծության մեթոդը կիրառելի է հրապարակային այնպիսի տեղեկության մշակման ժամանակ, որը ցույց է տալիս, թե ով երբ և ինչ է ասում կամ անում ում կամ ինչի նկատմամբ: Վերլուծության նյութ են ծառայում ՀԼՄ-ների և պաշտոնական հրապարակումներն այս կամ այն իրադարձության մասին: Վիճակագրական այս մեթոդի օգնությամբ կարելի է ցույց տալ քաղաքականության սուբյեկտների փոխազդեցությունների ու հաղորդակցությունների քանակական բնութագրիչները, կազմել դրանց կորելյացիաները, իրադարձությունների կամ սուբյեկտների գործողությունների կարևորության դիագրամ՝ ընթացիկ քաղաքական գործընթացի մատրից:

Իրադարձայինին սերտորեն կապված է ***իրավիճակային վերլուծության*** մեթոդը, որը կիրառվում է ոչ թե կոնկրետ իրադարձության, այլ տվյալ պահին առկա իրավիճակի վերլուծության համար, հիմք է ծառայում կոնկրետ պայմանների առկայության դեպքում կանխատեսումների ու ռազմավարությունների մշակման համար:

Ճանաչողական քարտավորման մեթոդն իր հերթին թույլ է տալիս ելույթների, հայտարարությունների հիման վրա վերհա-

նել, թե ինչպես է այս կամ այն գործիչն ընկալում տվյալ իրադարձությունը կամ իրավիճակը, նրա դատողության կառուցվածքը (ի՞նչն է ինչին նպաստում կամ խոչընդոտում, ինչի՞ արդյունք է և այլն), մտադրությունները՝ բացահայտելով նրա կողմից որոշումների ընդունման վրա ազդող հավանական գործոնները:

Փորձագիտական հարցումները հաճախ կիրառվում են հետազոտվող խնդրի մասին տվյալների սակավության կամ հետազոտության ժամանակի սղության դեպքում՝ նպատակ ունենալով այդ խնդրի իմացության հարցում բարձր որակավորում և հեղինակություն ունեցող անձանցից ստացած տեղեկության, կարծիքի, գնահատականի միջոցով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում լրացնել «տեղեկատվական բացը»: Այս տեսակի հարցումներն իրականացվում են անհատական կամ խմբային, մեկանգամյա կամ փուլային, հարցազրուցի կամ հարցաթերթի լրացման միջոցով:

Հանրային (զանգվածային) հարցման մեթոդը կիրառվում է կոնկրետ իրավիճակի կամ իրադարձության մասին հանրային կարծիքը տվյալ պահին կամ դրա փոփոխությունները ժամանակային կտրվածքով վերհանելու համար: Միջազգային տարածաշրջանագիտության մեջ հանրային հարցումները կիրառվում են ինչպես կոկրետ խնդրի, իրադարձության, իրավիճակի մասին որևէ մի պետության բնակչության կարծիքը վերհանելու, այնպես էլ երկու և ավելի պետությունների բնակիչների կարծիքը համադրաբար վերլուծելու համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ առավելություն և թերություն ունի միջազգային տարածաշրջանագիտության մեթոդական զինանոցի միջգիտակարգային բնույթը:

2. Միջգիտակարգային մեթոդական մոտեցմամբ իրականացված տարածաշրջանագիտական ի՞նչ ուսումնասիրություններ կարող եք նշել: Ինչպե՞ս է միջգիտակարգայնությունն ազդել վերլուծության ու դրա արդյունքների վրա:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Барыгин И. (2009). Международное регионоведение: Учебник для вузов. Санкт-Петербург: «Питер», 384 с., с. 94-117.

Воскресенский А. (ред.) (2014). Мировое комплексное регионоведение: Учебник. Москва: «Магистр», 416 с.

Гладкий Ю., Чистобаев А. (2003). Регионоведение: Учебник. Москва: «Гардарики», 384 с.

Иванова М. (2011). Введение в регионоведение: Учебное пособие. Томск: Томский политехнический университет, 175 с., с. 278-297.

Иванова М., Штанько А. (2007). Введение в регионоведение. Методы регионоведческих исследований: Учебное пособие, Москва–Томск: Изд-во Томского политехнического университета, 98 с., с. 15-91.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] И. Барыгин (2009). Международное регионоведение: Учебник для вузов, Санкт-Петербург: «Питер».

[2] М. Иванова (2011). Введение в регионоведение: Учебное пособие, Томск: Томский политехнический университет, с. 175.

[3] К. Кулматов, А. Митрофанова (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[4] А. Воскресенский, Е. Колдунова, С. Лунев (2014). Категория пространства-времени и тренд макрорегионализации. Глобализация и регионализация, регионализм и региональная интеграция // *Мировое комплексное регионоведение: Учебник*, А. Воскресенский, ред., Москва, «Магистр», 2014, pp. 135-175.

[5] В. Дергачёв, Л. Вардомский (2015). Регионоведение: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальностям «Регионоведение», «Международные отношения», 2 ред., Москва: ЮНИТИ-ДАНА.

ԹԵՄԱ 3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐԴԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԻՊԱԲԱՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ է կատարվում համաշխարհային տարածության տարածաշրջանային բաժանմանը, տարածաշրջանի արդի բնորոշումներին, դրանց հիմքում ընկած մոտեցումներին, ինչպես նաև միջազգային տարածաշրջանների տեսակներին, դրանց տիպաբանման հիմքում ընկած մոտեցումներին ու սկզբունքներին:

3.1. Տարածաշրջանի մեկնաբանությունները

Մասնագիտական գրականության մեջ չկա տարածաշրջանի համընդհանուր բնորոշում: Տարածաշրջանի բնորոշման համար տարբեր գիտաճյուղերում կիրառվում են տարբեր **մոտեցումներ**.

- *վարչատարածքային* (վարչաքաղաքական, իրավական) մոտեցմամբ տարածաշրջանը պետության տարածքային-կառուցվածքային միավոր է, որի սահմանները որոշվում են իրավական ակտերով, և բոլորովին պարտադիր չէ, որ հաշվի առնեն տվյալ տարածքի բնաշխարհագրական, պատմաքաղաքական, սոցիալ-մշակութային առանձնահատկությունները,
- *փիլիսոփայական* մոտեցմամբ տարածաշրջանն ինքնուրույն «աշխարհ» է, որին բնորոշ են ինքնատիպ մտածողությունը, աշխարհայացքը, ավանդույթները,
- *պատմական* մոտեցումը շեշտադրում է տվյալ տարածքի պատմաքաղաքական ու պատմամշակութային զարգացման առանձնահատկությունները,

- *տնտեսական* մոտեցումը շեշտադրում է տվյալ տարածքում արտադրական վառ արտահայտված մասնագիտացվածությունն ու տնտեսվարման ընդհանրությունները,
- և եթե *աշխարհագրական* մոտեցումը հիմք է ընդունում ֆիզիկաաշխարհագրական և բնակլիմայական միջավայրի միատարրությունը, ապա *աշխարհաքաղաքական* մոտեցումը՝ կոնկրետ տարածքի վրա պետությունների աշխարհագրական հարևանությունը, նրանց սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, պատմաքաղաքական սերտ փոխկապվածությունը, որոնց պատճառով այդ պետությունները շատ ավելի կապված են միմյանց, քան այդ տարածքից դուրս գտնվող պետությունների հետ:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են նաև տարածաշրջանի բնորոշման *համակցված* մոտեցումներ, օրինակ՝ տարածաշրջանը պատմականորեն զարգացած տարածքային հանրույթ է, որն ունի ֆիզիկական բովանդակություն, սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային միջավայր, ինչպես նաև այլ տարածաշրջաններից և տարածքային այլ միավորներից տարբերվող տարածական կառուցվածք [1, c. 34]:

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ տարածաշրջանը տարածք է, որն իր հիմնարար հատկանիշներով տարբերվում է այլ տարածքներից, առանձնանում է բաղադրատարրերի փոխկապակցվածությամբ ու ամբողջականությամբ, որն այդ տարածքի օրինաչափ զարգացման արդյունք է:

Ինչպես կարծում են ***Հարմ դե Բլիջը*** և ***Փիթեր Մյուլերը***, տարածաշրջանները գիտական կառուցակարգեր են, որոնք թույլ են տալիս մարդկանց անել տարածական ընդհանրացումներ, և դրանք հիմնված են արհեստական՝ մարդու կողմից սահմանված

չափանիշների վրա: Որպես բոլոր տարածաշրջանների համար **ընդհանրական չափանիշներ՝** նրանք նշում են տարածքը, սահմանները, տեղադրությունը, միատարրությունը, փոխկապակցվածությունը: *Տարածքը* երկրագնդի վրա այդ տարածաշրջանի զբաղեցրած մակերեսն է՝ իր ցամաքային, ջրային ու օդային բաղադրիչներով: Տարածաշրջանի *սահմանները* շատ հաճախ գծում է բնությունը (լեռնաշղթաներ, գետեր, ծովեր և այլն), իսկ երբեմն, երբ այդ սահմաններն ակնհայտ չեն, մարդն (մասնագետը) ինքն է դրանք «գծում»՝ հիմք ընդունելով հենց այդ նպատակով սահմանված որևէ չափանիշ: Տարածաշրջանի տեղորոշման համար կա՛մ կիրառվում են աշխարհագրական կոորդինատները (բացարձակ տեղադրություն)՝ Ամազոնի ավազան, Հնդկաչին, կա՛մ տվյալ տարածաշրջանի տեղադրությունն այլ տարածաշրջանների համեմատությամբ (հարաբերական տեղադրություն)՝ Արևելյան Եվրոպա, Հասարակածային Աֆրիկա: Բոլոր տարածաշրջաններին բնութագրական են մարդկային (օրինակ՝ մշակութային) կամ ֆիզիկական (օրինակ՝ բնական) որոշակի *միատարրությունը*, համասեռությունը: Եթե տարածաշրջանն աչքի է ընկնում ներքին ակնհայտ համասեռությամբ, ապա մենք գործ ունենք ***ձևային*** տարածաշրջանի հետ: Իսկ եթե տարածաշրջանը ձևավորվում է քաղաքակենտրոն փոխազդեցությունների շնորհիվ, ապա մենք գործ ունենք ***գործառութային*** տարածաշրջանի հետ, որն ունի իր միջուկը և ծայրամասը [2, p. 9]:

Որոշ հեղինակներ տարածաշրջանի բնորոշման հատկանիշներից կարևորում են 1. աշխարհագրորեն մոտ գտնվող կամ սոցիոմշակութային միևնույն տարածության մաս կազմող 2. երկուսից ավելի պետությունների առկայությունը, 3. որոնց միջև տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ փոխազդեցությունների ծավալը գերազանցում է դրանց՝ արտաքին աշխարհի

հետ փոխազդեցությունների ծավալին: 4. Տարածաշրջանն ունի սեփական «տարածաշրջանային նախագիծ»՝ տարածաշրջանի զարգացման երկարաժամկետ ծրագիր, որը նախատեսում է տարածաշրջանային ամբողջականության պաշտպանություն և ամրապնդում [3, c. 36-37]:

3.2. Տարածաշրջանների տիպաբանման մոտեցումները

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարածաշրջանների տիպաբանական մի քանի տասնյակ մոտեցումներ, որոնցից յուրաքանչյուրի հիմքում ընկած են տարբեր սկզբունքներ ու չափանիշներ: Տարածաշրջանների տիպաբանական մոտեցումները հաճախ բաժանում են երեք խմբի [1, c. 22-23, 4, c. 9].

- *պարզ* մոտեցման հիմքում տարածաշրջանի որևէ մեկ հատկանիշ է, օրինակ՝ բնաշխարհագրական որևէ մի առանձնահատկություն կամ տնտեսական մասնագիտացման որևէ մի ոլորտ,
- *բարդ* մոտեցման հիմքում տարածաշրջանի մի քանի (օրինակ՝ բնաշխարհագրական) փոխկապակցված հատկանիշներ են,
- *համալիր* մոտեցման հիմքում տվյալ տարածքում մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներին առնչվող հատկանիշներն են: Այդպիսին են, օրինակ, պատմամշակութային տարածաշրջանները, որոնց տիպաբանման հիմքում համակցված են բնական ու սոցիալական հատկանիշները:

Որոշ հեղինակներ էլ [1, c. 23] բոլոր տարածաշրջանները բաժանում են երկու խմբի.

- *միատարր* կամ համասեռ, որոնք առանձնանում են նրանց բնորոշ միակ հատկանիշով կամ հատկանիշների համախմբով, ինչպես, օրինակ, կլիմայական տարածաշրջանները,
- *հանգուցային* կամ գործառութային, որոնք առանձնանում են մեկ կետից տարածվող կամ մեկ կետում կուտակվող նյութական, հոգևոր կամ տեղեկութային հոսքերով: Բնական հանգուցային տարածաշրջանի օրինակ է գետի ավազանն իր վերգետնյա ու ստորգետնյա ջրահավաք համալիրով, իսկ սոցիալ-տնտեսական հանգուցային տարածաշրջաններ են վարչական շրջանները, արդյունաբերական կենտրոնների արտադրանքի սպառման ու հումքային գոտիները:

Ջոզեֆ Հոբսն իր հերթին առանձնացնում է տարածաշրջանի երեք տեսակ [5, p. 5].

1. *ձևային* (համասեռ, միատարր), երբ դրա ողջ բնակչությունն ունի միևնույն բնութագրիչը կամ բնութագրիչների ամբողջությունը: Դրա վառ օրինակ հեղինակը համարում է վարչաքաղաքական միավորները (պետությունը կամ վարչատարածքային միավորը), որոնց սահմանները հստակորեն որոշված ու քարտեզագրված են,

2. *գործառութային* (հանգուցային), որը կենսագործունեության որևէ ոլորտի վրա շեշտադրմամբ (հաճախ՝ տնտեսական) տարածական միավոր է: Դրա կենտրոնում ակտիվության այդ ձևը շատ ինտենսիվ է, մինչդեռ դեպի ծայրամաս այդ ակտիվության կարևորությունն ու ինտենսիվությունը նվազում են,

3. *տեղային* (երևակայական, կենցաղային) տարածաշրջանը գոյություն ունի մեծ թվով մարդկանց գիտակցության մեջ, անգամ կարող է կարևոր լինել, օրինակ, մշակութային ինքնության

կամ տնտեսվարման հարցերում, բայց անպայմանորեն չունի պաշտոնական կամ հստակ սահմաններ: Այսպիսի տարածաշրջանները ձևավորվում են մարդկանց կամ մշակութային հանրույթների կողմից, ծառայում տարածքի տեղորոշման կամ տարածաշրջանային ինքնության ձևավորման գործին՝ օգնելով մեր աշխարհաճանաչողությանը:

Կիրառելով տիպաբանական տարբեր չափանիշներ (հատկանիշներ)՝ ***Ալեքսեյ Վոսկրեսենսկին*** և մի շարք այլ հեղինակներ առանձնացնում են (միջազգային) տարածաշրջանների միաժամանակ մի քանի տիպեր [6, c. 139-142, 7]:

1. **Աշխարհագրական**, որոնց առանձնացման հիմքում ֆիզիկաաշխարհագրական հատկանիշներն են մայրցամաքներ ու աշխարհամասեր ձևավորող տեկտոնական սալերը, լեռնազանգվածները և այլն: Այդպիսի հատկանիշներով առանձնացվող *մակրոտարածաշրջաններ* են Ասիան, Աֆրիկան, Ամերիկան, Եվրոպան, Ավստրալիա-Օվկիանիան, որոնք բաժանվում են աշխարհագրական *մեզոտարածաշրջանների*՝ Կենտրոնական, Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Արևմտյան, Հյուսիսային, Հարավային և Արևելյան Եվրոպա, Ավստրալիա և Նոր Զելանդիա, Հյուսիսարևելյան, Հարավարևելյան, Հարավային, Արևմտյան և Կենտրոնական Ասիա, Հյուսիսային (արաբական) Աֆրիկա և Ենթասահարյան Աֆրիկա, Միկրոնեզիա, Պոլինեզիա, Մելանեզիա: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են *ենթատարածաշրջանների*՝ Սկանդինավիան, Կարիբյան ավազանը, Միջերկրծովյան ավազանը, Իբերական թերակղզին, Մերձավոր ու Միջին Արևելքը և այլն:

2. **Պատմամշակութային**, որը հիմնված է պատմամշակութային հատկանիշների՝ ընդհանուր պատմության, ընդհանուր լեզվի ու մշակութային պատկանելության, ընդհանուր էթնոսի և

ընդհանուր ծագման վրա: Այս չափանիշով առանձնացվող *մակրոտարածաշրջաններն* են չինականը (ՉԺՀ-ն և Չինաստանի Հանրապետությունը), կորեականը, վիետնամականը (Վիետնամը, Լաոսը, Կամբոջան), հնդկականը (Հնդկաստանը, Նեպալը, Բութանը, Շրի-Լանկան, Բանգլադեշը), հնդիրանականը (Պակիստանը, Աֆղանստանը, Իրանը, Տաջիկստանը), թյուրքականը (Թուրքիան, Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը), արաբականը (Հյուսիսային Աֆրիկայի, Լևանտի և Արաբական թերակղզու պետությունները), ռուսականը (ՌԴ-ն, Ուկրանինան, Բելառուսը), եվրոպականը (արևմտաեվրոպական և արևելաեվրոպական երկրները): Դրանք բաժանվում են մեզոտարածաշրջանների՝ Ֆիննոսկանդիա (Իսլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Դանիա), Մերձբալթիկա (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, երբեմն՝ նաև Լեհաստան), Բալկաններ (Սլովենիա, Խորվաթիա, Բոսնիա-Հերցեգովինան, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլղարիա, Հունաստան), Բենիլյուքս (Բելգիա, Նիդերլանդներ և Լյուքսեմբուրգ), Կենտրոնական Եվրոպա (Ավստրիա, Չեխիա, Հունգարիա, Սլովակիա, Ռումինիա) և այլն: Հյուսիսամերիկյան և լատինաամերիկյան, աֆրիկյան տարածաշրջանները աշխարհաքաղաքական ավանդույթների, ինտեգրման ձգտման, էթնոլեզվական, էթնոմշակութային ու էթնոհոգեբանական միասնության շնորհիվ միավորվում են տարածաշրջանային հանրույթների մեջ: Եվ եթե Հյուսիսային Ամերիկան բաժանվում է անգլախոս (ԱՄՆ, «մնացած Կանադա») և ֆրասախոս (Կանադայի Քվեբեկ նահանգը) Ամերիկաների, ապա Լատինաամերիկյան մակրոտարածաշրջանը բաժանվում է մի քանի տարածաշրջանների՝ Կարիբյան ավազան (Մեծ և Փոքր Անթիլյան կղզիներ), Կենտրոնական Ամերիկա (Մեքսիկա, Բելիզ, Նիկարագուա, Կոստա Ռիկա, Պանամա, Սալվադոր, Գվատե-

մալա, Հոնդուրաս), Հարավային Ամերիկա (չտարանջատելով պորտուգալախոս Բրազիլիան իսպանախոս Ամերիկայից): Շատ ավելի խրթին է Աֆրիկայի բաժանումը տարածաշրջանների: Պայմանականորեն այն բաժանվում է արաբական և ոչ արաբական Աֆրիկաների (Արևադարձային Աֆրիկա, Ենթասահարյան Աֆրիկա, «Սև Աֆրիկա»):

3. **Կրոնամշակութային (քաղաքակրթական)**, որի հիմքում պատմական զարգացման, աշխարհագրական դիրքի (մեծ մասամբ), ինչպես նաև բնական ու աշխատանքային ռեսուրսների, տնտեսվարման մասնագիտացման (պակաս չափով) ընդհանրություններն են: Այդ չափանիշով առանձնացվող տարածաշրջաններն են կոնֆուցիա-բուդդիստականը, հինդուիստականը, մուսուլմանականը, ուղղափառ-քրիստոնեականը, արևմտաքրիստոնեականը, լատինաամերիկյանը, աֆրիկյանը, խաղաղօվկիանոսյանը (կամ ճապոնականը): Հեղինակները նկատում են, որ մակրոտարածաշրջանների բաժանումը մշակութաքաղաքակրթական ցուցիչների հիման վրա, ի տարբերություն նախորդ երկու տիպաբանությունների, պակաս կայուն ու հաստատուն է:

4. **Միջազգային-քաղաքական**, որի հիմքում տվյալ տարածքում տարածաշրջանային միջազգային-իրավական ռեժիմի (միջազգային տնտեսական, քաղաքական կամ ռազմական կազմակերպության) առկայությունն է: Այդպիսի չափանիշով առանձնացվում են, օրինակ, ՆԱՏՕ-ի, ԱՍԵԱՆ-ի, ԵՄ-ի, ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի, ԱՄԿ-ի, ԱՊՀ-ի տարածք-տարածաշրջանները:

5. **Աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական**, որոնք ձևավորվում են դրանց մաս կազմող պետությունների տնտեսաքաղաքական և ռազմաքաղաքական տևական փոխգործակցության, ինչպես նաև նույնքան տևական պատմական հակամարտությունների և վեճերի արդյունքում: Այդ չափանիշնե-

րով առանձնացվող աշխարհաքաղաքական մակրոտարածաշրջաններից են Հյուսիսային Ամերիկան (ԱՄՆ անվիճելի առաջնորդությամբ), Արևմտյան Եվրոպան (տարածաշրջանային տերությունների համույթ), Արևելյան Ասիան (որտեղ առաջնորդության համար մրցակցում են ՉԺՀ-ն և Ճապոնիան), Հարավային Ասիան (որտեղ գերակայում է Հնդկաստանը), Իսլամական «կիսալուսինը» (որում հաճախ ներառում են նաև Միջին Ասիայի պետությունները), հետխորհրդային պետությունների «եվրասիական փունջը» և այլն: Աշխարհատնտեսական մակրոտարածաշրջաններից են ամերիկյանը, եվրոպականը, Ասիա-խաղաղօվկիանոսյանը, Հարավարևելյան Ասիան, Հարավային Ամերիկան, այդպիսի տարածաշրջանի վերածվելու միտում նկատվում է արաբական Մաղրիբում, Պարսից ծոցում, հետխորհրդային տարածքում և այլուր:

Բյորն Հեթնեն [8, pp. 277-278] իր հերթին, ըստ միջազգային համակարգում զբաղեցրած դիրքի, մաս կազմող պետությունների քաղաքական կայունության, տնտեսական զարգացվածության և այդ պետությունների միջև փոխազդեցության, առանձնացնում է մակրոտարածաշրջանի երեք տեսակ՝ հանգուցային (միջուկ), միջանկյալ և ծայրամասային:

1. **Հանգուցային** տարածաշրջանները (Եռյակը՝ Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան և Արևելյան Եվրոպան), ըստ հեղինակի, քաղաքականապես կայուն են, տնտեսապես զարգացած և նշանակալի ազդեցություն ունեն համաշխարհային քաղաքատնտեսության վրա: Դրանց տարբերությունն այն է, որ, ի տարբերություն մյուս երկուսի, Եվրոպան բարձր մակարդակի ինստիտուցիոնալացված է (ԵՄ), Հյուսիսային Ամերիկան քիչ թե շատ ինստիտուցիոնալացված է ՆԱՖԹԱ-ի տեսքով, իսկ Արևելյան Ասիան նշանակալիորեն զիջում է մյուս երկուսին ինստիտուցիո-

նալացվածության հարցում, և այստեղ պահպանվում է տարածաշրջանային գերակայության համար կոշտ մրցակցությունը:

2. **Միջանկյալ** տարածաշրջանները (Հարավարևելյան Ասիան՝ ԱՍԵԱՆ-ի, Լատինական Ամերիկան՝ ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի տեսքով) կախված են հանգուցայիններից, փորձում են նմանակել դրանց և ձգտում են ներառվել դրանցում, երբ ապահովեն տնտեսական ու քաղաքական համապատասխան պայմաններ: Հանգուցային տարածաշրջանները հաճախ խրախուսում են միջանկյալների զարգացումը՝ հետագայում իրենց կառուցվածքում դրանց ներառելու նպատակով, սակայն երբեմն միջանկյալները հանգուցայինների համար տնտեսական պոտենցիալ մրցակիցներ են:

3. **Ծայրամասային** տարածաշրջանները (Հարավային Ասիան՝ ՍԱԱՌԿ, Աֆրիկան՝ ՍԱԴԿ, հետխորհրդային տարածքը՝ ԱՊՀ տեսքով, Միջին Արևելքը) քաղաքականապես անկայուն են, տնտեսապես թերզարգացած: Դրանց ինքնակազմակերպմանը խոչընդոտում են ներտարածաշրջանային հակամարտությունները: Համաշխարհային գործընթացների վերահսկման նպատակով հանգուցային տարածաշրջանները հաճախ են միջամտում ծայրամասայինների ներտարածաշրջանային գործընթացներին: Հատկանշական է, որ Հարավային Ասիայում և Աֆրիկայում ներկայումս նկատվում են կայունացման ու ինքնակազմակերպման միտումներ, որոնք կարող են բարձրացնել այդ տարածաշրջանների կարգավիճակը համաշխարհային քաղաքականության մեջ: Այդպիսի ձգտում ունի նաև Ռուսաստանը, որը ներկայումս փորձում է իր շուրջը համախմբել հետխորհրդային տարածքը:

Կախված նրանից, թե տվյալ տարածքը որքանով է «տարածաշրջանայնացված», այսինքն՝ որքանով են դրանում դրսևոր-

վում մակրոտարածաշրջանի հատկանիշները, Հեթնեն նշում է տարածաշրջանի չորս տեսակ-մակարդակ [9, pp. 10-11].

1. տարածաշրջանը՝ բնականորեն սահմանազատված աշխարհագրական միավոր («**նախատարածաշրջան**»), որը չունի կազմակերպական ամրագրում տարածաշրջանային կազմակերպությունների տեսքով,

2. տարածաշրջանը՝ սոցիալական համակարգ («**պարզունակ տարածաշրջան**»), որը ենթադրում է այն բնակեցնող մարդկային հանրույթների միջև սոցիալական փոխազդեցության որոշակի մակարդակ, որի շրջանակներում մաս կազմող հանրույթների անվտանգությունը փոխկապակցված ու փոխկախված է միմյանցից և տարածաշրջանային համակարգից,

3. տարածաշրջանը՝ տարածաշրջանային կառույցի շրջանակներում տնտեսական, քաղաքական, ռազմական կամ մշակութային ոլորտներում կազմակերպված փոխգործակցող երկրների համախումբ («**ձևային տարածաշրջան**»),

4. տարածաշրջանը՝ քաղաքացիական հասարակություն, երբ կազմակերպական ամրագրումը դյուրացնում, խթանում է հանրույթների միջև սոցիալական փոխազդեցություններն ու դիրքորոշումների համաձայնեցումը («**տարածաշրջանային անիշխանական ընկերակցություն**», որն ավելին է, քան անիշխանությունը, բայց պակաս է, քան ընկերակցությունը), որտեղ առաջնային նշանակություն է տրվում մշակութային ընդհանրություններին,

5. տարածաշրջանը՝ **սուբյեկտ**՝ օժտված ինքնությամբ, գործառական հատկանիշներով և որոշումների ընդունման համակարգով, որի հիմքում ընկած են տարածաշրջանային անվտանգության ու տնտեսական բարգավաճման խնդիրները: Ըստ որում, այս գործընթացի վերջնական արդյունքը կարող է դառ-

նալ «տարածաշրջանային պետության» կազմավորումը, որը տարածաշրջանային առումով նման կլինի կայսրության, իսկ քաղաքական կարգի առումով կներկայացնի հանուն անվտանգության ու բարեկեցության առավելագույն մակարդակի ձեռքբերման վերազգային կազմավորման մեջ կամավոր ընդգրկված պետական կազմավորումների խումբ:

3.3. Տարածաշրջանների աստիճանակարգային կառուցվածքը

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել համաշխարհային տարածության տարածաշրջանային աստիճանակարգային բաժանման փորձերի (տե՛ս, օրինակ, Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Համաշխարհային տարածության աստիճանակարգային կառուցվածքը [1, c. 26]

Հաճախ որպես համաշխարհային տարածության բաղադրիչներ նշվում են.

- **մակրոտարածաշրջանը** – միջազգային կամ համաշխարհային տարածաշրջան, համաշխարհային տարածության բաժանման ամենամեծ միավորը, որը կարող է ընդգրկել աշխարհամասեր (օրինակ՝ Եվրոպա, Ասիա): Այն ներառում է երկու և ավելի մեզոտարածաշրջաններ:,
- **ենթատարածաշրջանը** կամ **մեզոտարածաշրջանը** – համաշխարհային տարածության բաժանման երկրորդ մակարդակն է (օրինակ՝ Հյուսիսային, Հարավային, Արևմտյան և Արևելյան Եվրոպա), որը բաղկացած է երկու և ավելի միկրոտարածաշրջաններից,
- **միկրոտարածաշրջանը** – համաշխարհային տարածության բաժանման ստորին մակարդակը՝ պետության ներքին տարածաշրջանը, որը կարող է համընկնել այդ պետության վարչատարածքային միավորների սահմաններին:

Այդ բաժանման մեջ երբեմն հիշատակվում է նաև **անդրսահմանային տարածաշրջանը**՝ երկու կամ ավելի պետության երկու կամ ավելի միկրոտարածաշրջան ներառող տարածաշրջանը (օրինակ՝ եվրատարածաշրջանները), որը համարվում է միկրոտարածաշրջանի տարատեսակ:

Ֆրեդրիկ Սյոդերբաումը [10, pp. 93-94] նշում է միկրոտարածաշրջանի կամ անդրսահմանային տարածաշրջանի հինգ տեսակ՝ ֆիզիկաաշխարհագրական, մշակութային, տնտեսական, վարչական և քաղաքական: *Ֆիզիկաաշխարհագրական* միկրոտարածաշրջանների սահմանները ձևավորվել են բնապատմական ճանապարհով: Գետերը, լճերը, լեռները պատմականորեն սահմանափակել և ուղղորդել են մարդկային տարբեր համայնքների շփումները: Այդպես են ձևավորվել, օրինակ, մեծ

գետերի ավազանների տարածաշրջանները՝ Զամբեզիի ավազանն Աֆրիկայում, Մեկոնգի ավազանը Հարավարևելյան Ասիայում, Ամազոնի ավազանը Հարավային Ամերիկայում կամ Մեծ լճերը Հյուսիսային Ամերիկայում: *Մշակութային* տարածաշրջանները կարող են ծագել ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջանների հիմքի վրա, սակայն դրանց տարբերիչ հատկանիշը դրանցում բնակվող մարդկային համայնքների ընդհանուր ինքնությունն է՝ ընդհանուր մշակույթը, պատմությունը, լեզուն, կրոնը: Այդպիսին են, օրինակ, Քվեբեկը Կանադայում, Ֆլանդրիան Բելգիայում, լոզիների տարածքը Հարավային Աֆրիկայում, Քրդստանը Միջին Արևելքում:

Տնտեսական միկրոտարածաշրջանները, ինչպես անվանումն է հուշում, ձևավորվում են տնտեսական՝ արտադրության, արդյունաբերականացման, ուրբանիզացման և այլ հիմքերով: Այսպիսի տարածաշրջանի օրինակ են եվրատարածաշրջանները: *Վարչական* միկրոտարածաշրջանները գործառութային բնույթ ունեն, ստեղծվում են պետությունների կողմից՝ տարածքային կառավարումը և վարչարարությունը դյուրացնելու նպատակով: Դրանք անպայմանորեն չունեն ֆիզիկաաշխարհագրական, մշակութային կամ տնտեսական հիմք, կառավարման ընտրովի մարմինների տեսքով արտահայտվող քաղաքական ինքնավարություն: Այդպիսի տարածաշրջանների օրինակներ են Հայաստանի մարզերը: Ի տարբերություն վարչականների՝ *քաղաքական* միկրոտարածաշրջաններն ունեն կառավարման ընտրովի մարմիններ: Այդպիսին են, օրինակ, լանդերը Գերմանիայում և Ավստրիայում, նահանգները՝ ԱՄՆ-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Միջազգային տարածաշրջանագիտության մեջ տարածաշրջանի բնորոշման ո՞ր մոտեցումներն են կիրառելի և ի՞նչ առումներով:

2. Տարածաշրջանի ի՞նչ չափանիշներ և հատկանիշներ են նշվում մասնագիտական գրականության մեջ: Բավարա՞ր են արդյոք դրանք տարածաշրջանի բնորոշման համար:

3. Տարածաշրջանների տիպաբանման ի՞նչ մոտեցումներ են նշվում մասնագիտական գրականության մեջ, և ի՞նչ չափանիշների, սկզբունքների վրա է հիմնվում դրանցից յուրաքանչյուրը:

4. Որո՞նք են համաշխարհային տարածության բաղադրիչները, և ի՞նչ հարաբերակցություն ունեն դրանք:

5. Միկրոտարածաշրջանի ի՞նչ տեսակներ կան, և ի՞նչ չափանիշների վրա է հիմնվում այդ տիպավորումը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

De Blij H. and Muller P. (2010). *Geography. Realms, Regions, and Concepts*. Hoboken, N.J.: Wiley, 619 p., pp. 5-9.

Hettne B. (2005). *Regionalism and World Order*. In: M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, eds. *Global Politics of Regionalism. Theory and Practice*. Basingstoke: Palgrave, pp. 269-286.

Hobbs J. (2009). *World regional geography*. Belmont, CA: Brooks/Cole, Cengage Learning, 686 p., pp. 4-5.

Söderbaum F. **(**2005). Exploring the Links Between Micro-Regionalism and Macro-Regionalism. In: M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, eds. *Global Politics of Regionalism. Theory and Practice*. London: Pluto Press, pp. 87-103.

Барыгин И. (2009). Международное регионоведение: Учебник для вузов. Санкт-Петербург: «Питер», 384 с., с. 66-86.

Воскресенский А. (ред.) (2014). Мировое комплексное регионоведение: Учебник. Москва: Магистр, 416 с., с. 95-99.

Гладкий Ю., Чистобаев А. (2003). Регионоведение: Учебник. Москва: «Гардарики», 384 с., с. 21-26.

Иванова М. (2011). Введение в регионоведение: Учебное пособие. Томск: Томский политехнический университет, 175 с., с. 9-14.

Кулматов К. Н., Митрофанова А. В. (2010). *Региональные аспекты международных отношений. Учебник.* Москва: «Восток-Запад», 536 с., с. 30-39.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Համաձայնեցնելով դասավանդողի հետ, ղեկավարվելով նրա տված մեթոդական ու տեխնիկական ցուցումներով և առաջնորդվելով Վոսկրեսենսկու առաջարկած մոտեցումներից որևէ մեկով՝ ընտրե՛ք որևէ մակրոտարածաշրջան և օգտագործելով տարածաշրջանի բնորոշման ու տիպաբանման նաև մյուս մոտեցումները՝ 500-600 բառային ծավալով կազմե՛ք դրա բնութագիրը ու սահմանված ժամկետում ներկայացրե՛ք դասավանդողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] Ю. Гладкий, А. Чистобаев (2003). Регионоведение: Учебник, Москва: «Гардарики».

[2] H. De Blij and P. Muller (2010). Geography. Realms, Regions, and Concepts, Hoboken: Wiley.

[3 К. Кулматов, А. Митрофанова (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[4] М. Иванова (2011). Введение в регионоведение: Учебное пособие, Томск: Томский политехнический университет, p. 175.

[5] J. Hobbs (2009). World regional geography, Belmont: Brooks/Cole, Cengage Learning.

[6] А. Воскресенский (2002). Региональные подсистемы международных отношений и регионы (к постановке проблемы) // *Восток – Запад – Россия. Сборник статей*, Москва: «Прогресс-Традиция», pp. 129-144.

[7] Эксперты СВФУ, Современные макрорегионы: проблемы классификации, 04.06.2019. [Online]. Available: https://russiancouncil.ru/blogs/svfu-experts/sovremennye-makroregiony-problemy-klassifikatsii/ [03. 08. 2019].

[8] B. Hettne (2005). Regionalism and World Order // *Global Politics of Regionalism. Theory and Practice*, M. Farrell, B. Hettne and L. Van Langenhove, Eds., Basingstoke, Palgrave, pp. 269-286.

[9] B. Hettne (1999). Globalization, the New Regionalism and East Asia// in *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 1-24.

[10] F. Söderbaum (2005). Exploring the Links Between Micro-Regionalism and Macro-Regionalism, in *Global Politics of Regionalism. Theory and Practice*, M. Farrell, B. Hettne and L. Van Langenhove, Eds., London, Pluto Press, pp. 87-103.

ԹԵՄԱ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅՆԱՑՈՒՄ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ կկատարենք միջազգային տարածաշրջանայնացման էությանն ու մեկնաբանություններին, այդ գործընթացի հիմնապատճառներին ու նպաստող գործոններին, մասնավորապես կքննենք, թե մասնագիտական գրականության մեջ ինչ մոտեցումներ կան միջազգային տարածաշրջանայնացման մեկնաբանման հարցում, ինչպիսի հարաբերակցություն են տեսնում հեղինակները տարածաշրջանայնացման ու համաշխարհայնացման միջև, ինչ գործոններ են նպաստում տարածաշրջանայնացման առաջացմանը:

4.1. Տարածաշրջանայնացման մեկնաբանությունները

Մասնագիտական գրականության մեջ տարածաշրջանայնացման բնորոշման ու մեկնաբանության հարցում միակարծություն չկա: Դա վերաբերում է ոչ միայն տարածաշրջանայնացման մակարդակին (միկրոմակարդակ, մեզոմակարդակ, թե մակրոմակարդակ), այլ նաև հենց մակրոմակարդակում տարածաշրջանների ձևավորմանը: Վերջին իմաստով (համաշխարհային) տարածաշրջանայնացումը մի դեպքում նույնացվում է տարածաշրջանային տերությունների ծագմանը կամ վերելքին (տարածաշրջանայնացման չձևայնացված ընկալում), մի դեպքում՝ տարածաշրջանային տնտեսաքաղաքական ինտեգրացիոն խմբավորումների ձևավորմանը (տարածաշրջանայնացման քաղաքատնտեսական ընկալում), իսկ այլ դեպքում համարվում է նախորդ իմաստներով տարածաշրջանայնացման քաղաքական հիմք, շարժառիթ, խթան [1, c. 107]:

Ուշագրավ է մասնագետների վերաբերմունքը ***տարածաշրջանայնացման և համաշխարհայնացման առնչություններին***: Այսպես, հեղինակների մի խումբ տարածաշրջանայնացումը համարում է համաշխարհայնացման բաղկացուցիչ մաս, համաշխարհայնացումը՝ մակրոտարածաշրջանների ինտեգրման գործընթաց, որի մեխանիզմը հենց տարածաշրջանայնացումն է՝ տնտեսապես ինտեգրված մեծ տարածությունների ձևավորումը: Այսինքն՝ տարածաշրջանայնացումը համաշխարհայնացման փուլերից մեկն է: Օրինակ՝ Վոսկրեսենսկիի կարծիքով տարածաշրջանայնացումն սպասարկում է դրան մասնակցող պետությունների տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային և պատմական շահերը: Ավելին, «հին» տարածաշրջանների միավորումը մակրոտարածաշրջաններում՝ մակրոտարածաշրջանայնացումը, նա համարում է համաշխարհայնացման միջանկյալ փուլ, որի սկիզբը տարածաշրջանային տնտեսաքաղաքական ինտեգրումն է [1, c. 108]:

Հեղինակների մեկ այլ խումբ տարածաշրջանայնացումը համարում է համաշխարհայնացմանն այլընտրանք, դրա մարտահրավերներին հակազդելու, դիմակայելու մեխանիզմ: Եվ եթե համաշխարհայնացման արդյունքն աշխարհի տեխնոլոգիական ու մշակութային միօրինակացումն է, ապա տարածաշրջանայնացման հիմքը հարևան երկրների ու տարածաշրջանների ձգտումն է՝ տարածաշրջանային առևտրատնտեսական արտոնությունների ու հավաքական հովանավորչության միջոցով պահպանել սեփական մշակութային ու տնտեսական ինքնությունը, սահմանափակել համաշխարհայնացման բացասական ազդեցությունն ազգային տնտեսությունների վրա [2, c. 57-58]: Օրինակ, ինչպես նկատում է Հեթնեն [3, p. 7], եթե համաշխարհայնացումը ձգտում է համասեռացման թե՛ համաշխարհային, թե՛

տարածաշրջանային մակարդակներով՝ ջնջելով սահմանները պետությունների և տարածաշրջանների միջև, ապա տարածաշրջանայնացումը՝ որպես պատասխան, ձգտում է բազմազանեցման համաշխարհային մակարդակով, բայց համասեռացնում է տարածաշրջանների ներքին միջավայրը և, ինչպես համաշխարհայնացումը (գուցե ավելի մեծ չափով ու ավելի ինտենսիվորեն), կրճատում է ազգային-պետական ինքնիշխանությունը՝ վերանայելով ազգային պետության դերը միջազգային թատերաբեմում:

Հեթնեի համոզմամբ տարածաշրջանայնացումն ազդում է միջազգային համակարգի տարբեր մակարդակների՝ ողջ համակարգի, միջտարածաշրջանային հարաբերությունների, առանձին տարածաշրջանների ներքին կառուցվածքի վրա, ու ինքն էլ ազդվում է դրանցից: Ըստ Հեթնեի բնորոշման՝ տարածաշրջանայնացումը հարաբերականորեն տարասեռ տարածաշրջանը վերածում է մշակութային, անվտանգության, տնտեսական և քաղաքական իմաստներով համեմատաբար միասեռ տարածաշրջանի: Տարածաշրջանի պետությունների համանմանեցումն այդ չորս չափումներով կարող է լինել ինչպես բնական-օբյեկտիվ զարգացման, այնպես էլ քաղաքական-սուբյեկտիվ որոշման, բայց առավել հաճախ՝ միաժամանակ այդ երկուսի արդյունք: Տարածաշրջանայնացման շարժընթացը, հեղինակի կարծիքով, վերոնշյալ չորս չափումների փոխազդեցության վկայություն է, որն էլ իր հերթին արտացոլվում է միջազգային համակարգի վերոնշյալ մակարդակներում, ինչպես նաև ազգային ու ենթաազգային մակարդակներում [3, pp. xxi-xxiv]:

Որոշ հեղինակներ առանձնացնում են տարածաշրջանայնացման երկու խումբ մեկնաբանություններ՝ պետականակենտրոն և կոգնիտիվիստական: Ըստ ***պետականակենտրոն*** մեկնա-

բանությունների՝ տարածաշրջանայնացումը պետությունների միջև գիտակցված համաձայնությունների արդյունք է. տարածաշրջանային կազմակերպությունների և ռեժիմների ստեղծման միջոցով պետությունները փորձում են լուծել տարատեսակ խնդիրներ: Պետականակենտրոն մեկնաբանություններն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի: Դրանցից *առաջին ենթախմբի* շրջանակում տարածաշրջանայնացումը դիտարկվում է որպես «դրսից» ճնշման արդյունք, արտաքին տնտեսական և/կամ քաղաքական մարտահրավերներին դիմակայելու մեխանիզմ: Այդպիսի սպառնալիքի աղբյուր կարող են լինել ինչպես տարածաշրջանային գերիշխանը (օրինակ՝ ԱՍԵԱՆ-ի ստեղծումն ի հակակշիռ Վիետնամի), այնպես էլ արտատարածաշրջանային խոշոր տերությունը (օրինակ՝ եվրոպական ինտեգրումն ընդդեմ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կամ ՆԱՏՕ-ն՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի): Ավելին, այդ խմբավորումը կարող է անգամ ներառել տարածաշրջանային գերիշխանին՝ նրա հզորությունը տարածաշրջանային ինստիտուցիոնալ համակարգի միջոցով զսպելու նպատակով (օրինակ՝ Գերմանիայի ներառումը ԵՄ-ում և ՆԱՏՕ-ում): Տեսական այս հոսանքի ներկայացուցիչների դիտարկմամբ աշխարհագրորեն հարևան ու զարգացման գրեթե նույն մակարդակի վրա գտնվող պետությունների միավորումը տարածաշրջանային խմբավորման մեջ չի թուլացնում ազգային պետությունը, քանի որ այդ ինտեգրման շարժիչ ուժը հենց ազգային պետությունն է, մինչդեռ մասնավոր հատվածը կամ ոչ կառավարական այլ դերակատարներ որոշիչ դեր չեն խաղում ինտեգրման մեջ: Տարածաշրջանայնացման այս տեսակի օրինակներ են եվրոպական ինտեգրումը և դրա առաջին կազմակերպությունների (ԱՊԵԸ, ԵՏԸ, ԵԸ) ստեղծումը, հարավամերիկյան ինտեգրումն ու ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի հիմնադրումը: Այս դեպքում, փաստորեն, տարածաշրջանը հա-

մախմբվում է՝ համաշխարհային տնտեսության մեջ տարածաշրջանի պետությունների մուտքը դյուրացնելու, միաժամանակ հովանավորչության միջոցով տարածաշրջանային շուկան արտաքին «ներթափանցումներից» պաշտպանելու և, ըստ էության, տարածաշրջանային տնտեսական ինքնաբավ տարածություն ձևավորելու նպատակով: Սա իր հերթին հանգեցնում է «փակ» տարածաշրջանայնության ձևավորմանն այդ տարածաշրջանում [4, c. 59-62]:

Պետականակենտրոն մեկնաբանությունների *երկրորդ ենթախմբի* շրջանակում տարածաշրջանայնացումը դիտարկվում է ոչ թե որպես միջպետական-միջկառավարական գործարքների, այլ շուկաների, քաղաքացիական հասարակության դերակատարների փոխներթափանցման, սերտ փոխազդեցության արդյունք: Փոխկապակցության ու փոխկախվածության այսպիսի «բնական» աճը հանգեցնում է նրան, որ տարածաշրջանի ներսում տնտեսական փոխազդությունների ծավալն սկսում է գերակշռել տարածաշրջանի ու արտաքին աշխարհի միջև փոխազդությունների ծավալի նկատմամբ: Փաստորեն, այս մոտեցմամբ տարածաշրջանայնացման խթանը «վարից վեր» է. գալիս է ոչ կառավարական դերակատարներից՝ ի տարբերություն նախորդի, որի շարժումը «վերից վար» է, այսինքն՝ խթանողը հենց պետական դերակատարներն են: Ստացվում է նաև, որ այսպիսի «բնական» տարածաշրջանայնացման դեպքում տարածաշրջանային կազմակերպությունները կամ ռեժիմները (օրինակ՝ ՆԱՖԹԱ-ն) պարզապես ամրագրում են ներտարածաշրջանային՝ արդեն գոյություն ունեցող, բնականորեն ձևավորված փոխազդեցությունները [4, c. 62]:

Տարածաշրջանայնացման մեկնաբանությունների երկրորդ՝ ***կոգնիտիվիստական*** խմբի հանգուցային հասկացությունները

տարածաշրջանային ինքնությունն ու ինքնագիտակցությունն են: Այս մոտեցման ելակետն այն է, որ տարածաշրջանային գիտակցությունն ի հայտ է գալիս տնտեսական կամ քաղաքական տարածաշրջանի ձևավորումից առաջ: 1990-ական թթ. ի հայտ եկած այս մոտեցման շրջանակում ևս առանձնացվում է երկու հոսանք: Դրանցից առաջինի՝ *կոնստրուկտիվիստականի* շրջանակում տարածաշրջանը համարվում է ոչ թե ինչ-որ «բնական», «ի վերուստ տրված» իրողություն, այլ ձևավորվում է տարածաշրջանը բնակեցնող մարդկանց մտքում: Ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային ինքնության ձևավորման համար անհրաժեշտ են, մի կողմից, ընդհանուր մշակույթի, պատմության, ավանդույթների, տնտեսվարման կամ քաղաքական ընդհանուր անցյալի մասին պատկերացումներ, իսկ մյուս կողմից՝ «ուրիշի», «օտարի» կերպարը: Որպես օրինակ հեղինակը նշում է, որ ԵՄ-ն, ինտեգրման խորացմանը զուգահեռ, ավելի ու ավելի ստիպված է լինում հակադրվել իր «ուրիշին»՝ ԱՄՆ-ին, Ռուսաստանին, մուսուլմանական աշխարհին: Կոգնիտիվիստական մեկնաբանությունների երկրորդ՝ «*հակակոնստրուկտիվիստական*» (պրիմորդիալիստական) հոսանքի ներկայացուցիչների համոզմամբ տարածաշրջանային ինքնությունը բնական է: Տարածաշրջանը, ըստ այդմ, քաղաքակրթական՝ տնտեսաքաղաքամշակութային միավոր է, որն ի հայտ է եկել բնական ճանապարհով՝ այն բնակեցնող ժողովուրդների ընդհանուր պատմության, մշակույթի, ավանդույթների, լեզվի հիման վրա [4, c. 64-65, 67-68]:

Այսպիսով՝ տարածաշրջանայնացումը կարող ենք բնորոշել որպես տարածաշրջանի ներսում տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ տեսակի կապերի ձևավորման ու զարգացման և, որպես դրա հետևանք, միջազգային հարաբերությունների համակարգում ազգային մակարդակից տարածաշրջանային

մակարդակ իշխանական լիազորությունների փոխանցման գործընթաց: Դրա արդյունքը կարող է լինել ինչպես տարածաշրջանային վերպետական (ԵՄ-ի նման) կամ միջպետական (ԱՍԵԱՆ) կազմակերպության, այնպես էլ պարզապես տարածաշրջանի պետությունների սերտ փոխազդեցությունը կանոնակարգող միջազգային-իրավական ռեժիմի ստեղծումը՝ առանց դրա կազմակերպական ամրագրման:

Տարածաշրջանայնացումը համեմատաբար նոր երևույթ է համաշխարհային քաղաքականության մեջ: Դրա սաղմնային ձևերը՝ միջպետական առևտրատնտեսական ու ռազմադաշինքային խմբավորումները, կարելի է տեսնել՝ հատկապես միջնադարից սկսած և հատկապես ապագաղութացման շրջանում: Սակայն այդ խմբավորումները գլխավորապես կոչված էին սպասարկելու այս կամ այն մեծ տերության շահերը: Այսինքն՝ այդ խմբավորումներն ինքնին համաշխարհային քաղաքականության սուբյեկտ չէին, դրանց մեծամասնությունն անգամ ձևավորվում ու խթանվում էր հովանավոր խոշոր տերության կողմից և միջազգային քաղաքականության մեջ ներգրավված էր ընդամենը որպես այդ տերության կցորդ: Այդպիսին էին, օրինակ, ՆԱՏՕ-ի, ՍԵՆՏՕ-ի, ՍԵԱՏՕ-ի, ԱՆԶՅՈՒՍ-ի, ՎՊԿ-ի և դրանց հետ փոխկապակցված տնտեսական մի շարք խմբավորումների կարգավիճակն ու նշանակությունը համաշխարհային քաղաքականության մեջ: Մասնագիտական գրականության մեջ պատմական այս շրջանն ընդունված է համարել «հին» տարածաշրջանայնության ժամանակաշրջան, իսկ սառը պատերազմից հետո սկսվեց «նոր» տարածաշրջանայնության ժամանակաշրջանը, որի գլխավոր խթանն արդեն ոչ այնքան մեծ տերությունների մրցակցությունն է, որքան համաշխարհայնացումը: Այս շրջանում նախկինում ստեղծված խմբավորումների մի մասը փլուզվել է (ՎՊԿ,

ՏՓԽ), մի մասը՝ վերաիմաստավորվել (ԱՍԵԱՆ, ՆԱՏՕ), ի հայտ են եկել նաև նորերը (ՆԱՖԹԱ, ՇՀԿ, ԵԱՏՄ): Առաջ են քաշվել նաև ամբողջ աշխարհամասեր և անգամ մայրցամաքներ ընդգրկող առևտրատնտեսական տարածությունների գաղափարներ ու նախագծեր (համաամերիկյան, համաաֆրիկյան, համաեվրասիական և այլն):

4.2. Տարածաշրջանայնացման հիմնապատճառներն ու նպաստող գործոնները

Տարածաշրջանայնացման զարգացման տրամաբանությունը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ նաև այն գործոնները, որոնք ծնում և խթանում են այդ գործընթացը: Համադրելով տարբեր հեղինակների մոտեցումները [5, c. 396-398, 1, c. 108-110, 6, pp. 42-43]՝ կարող ենք նշել տարածաշրջանայնացման վրա ազդող հետևյալ գործոնները.

- համաշխարհային գործընթացները և նախևառաջ տարածաշրջանայնացման աճող ազդեցությունը միջազգային հարաբերությունների համակարգի վրա,
- աշխարհաքաղաքական գործոնները, նախևառաջ աշխարհաքաղաքական տարածաշրջանի աշխարհագրական տեղադրությունը, առկա բնական պաշարներն ու դրանց տեղաբաշխումը, ենթակառուցվածքային համակարգերը, տարածաշրջանի պատմությունը,
- տնտեսական գործոնները՝ նկատի ունենալով, որ տնտեսական համագործակցությունը կարևոր դեր է խաղում սահմանամերձ պետությունների ու տարածաշրջանների մերձեցման գործում,

- կրոնամշակութային գործոնները, որոնց շրջանակներում կարևորվում է տարածաշրջանի ժողովուրդների կրոնամշակութային ընդհանրությունը, որը լրացուցիչ խթան է տարածաշրջանի համախմբման համար,
- արդի իրողություններին այլևս չհամապատասխանող ժամանակակից պետության ինստիտուտի ճգնաժամը երկարաժամկետ հեռանկարում, ներկայիս միտումների պահպանման դեպքում՝ կանխատեսելով ավանդական ազգային պետության վերացում, որն իր տեղը կզիջի տարածաշրջաններին ու վերազգային ինստիտուտներին,
- դեպի մակրոտարածաշրջանայնացում տանող տարածաշրջանային ինտեգրումը տալիս է հնարավորություն՝

1. անդամ պետություններին մասնակցելու համաշխարհայնացմանը խնայող ձևով՝ չենթարկվելով համաշխարհային տնտեսության ճնշումներին,
2. առաջ մղելու տարածաշրջանի պակաս զարգացած պետություններին՝ նրանց տրամադրելով արտոնություններ ու ապահովելով ներդրումներ դրանց տնտեսություններում,
3. բարելավելու տարածաշրջանի առավել զարգացած պետությունների բիզնես շրջանակների դիրքերը՝ նրանց համար արտոնյալ պայմաններով մուտք ապահովելով աշխարհագրական ավելի մեծ տարածք,
4. ամրապնդելու տարածաշրջանի պետությունների աշխարհաքաղաքական դիրքերը, քանի որ շուկաների մասշտաբի ընդլայնման միջոցով ինտեգրացիոն խմբավորումն ունակ է հավաքականորեն ավելի լավ պաշտպանելու իր անդամներին արտատարածաշրջանային դերակատարների հետ մրցակցությունից,

- տարածաշրջանի պետությունների միջև 1. տնտեսական փոխլրացումն ու փոխկախվածությունը, 2. տնտեսական ինտեգրման մեկնարկն ու զարգացումը, որի արդյունքում նրանց միջև փոխադարձ առևտուրը կազմում է նրանցից յուրաքանչյուրի արտաքին առևտրի մոտ կեսը, 3. շարժումը դեպի արժութային ինտեգրում, 4. փոխգործակցության նոր ձևերի ի հայտ գալը, 5. մշակութային-քաղաքակրթական որոշակի մերձությունը և միաժամանակ նրանց տարբերություններն այլ տարածաշրջաններից, ինչպես նաև 6. այդ պետությունների հասարակություններում ընդհանուր՝ տարածաշրջանային ինքնության ձևավորումը, 7. տարածաշրջանի խոշոր պետությունների աջակցությունը ներտարածաշրջանային տնտեսական համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը, 8. տարածաշրջանի պետություններում նրանց զարգացման առանձնահատկությունների տեսահայեցակարգային ընդհանուր հիմնավորումների ի հայտ գալը,
- այն հանգամանքը, որ 1. տարածաշրջանը համաշխարհային շուկայական մրցակցության աճող ճնշման և քաղաքական կարգավորման ու կառավարման հաշտեցման առավել համապատասխան և կենսունակ հարթությունն է, 2. տարածաշրջանային մակարդակում ավելի հեշտ է բանակցել համաշխարհայնացման կառավարման համար անհրաժեշտ խորը ինտեգրման և կանոնների շուրջ, 3. զարգացող շատ երկրների համար տարածաշրջանայնացումը կարող է լինել համաշխարհային տնտեսության մեջ վերահսկելի ու սակարկելի ինտեգրման գործընթաց, 4. զարգացած երկրների համար տարածաշրջանայնացումն ստեղծում է բարենպաստ պայմաններ՝ վերանայելու 1945 թվականից հետո շուկայի ազատականացման ու սոցիալական ապահովության միջև կնքված գործարքի պայմանները, 5. թե՛

տարածաշրջանների կարևորության մասին գաղափարը, թե՛ տարածաշրջանի կոնկրետ ձևանմուշներ սկսեցին տարածվել աշխարհում ինտեգրացիոն տարբեր խմբավորումների մրցակցության, ուսուցման, աջակցության ու փոխպայմանավորման միջոցով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է դրսևորվում մասնագիտական շրջանակում տարածաշրջանայնացման հարցում միակարծության բացակայությունը, ինչի՞ն է նույնացվում այդ երևույթը:

2. Ինչպե՞ս են մեկնաբանում մասնագետները տարածաշրջանայնացման ու համաշխարհայնացման առնչությունները:

3. Ի՞նչ գործոնների ազդեցությամբ է սկզբնավորվում ու զարգանում տարածաշրջանայնացումը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Fawcett L. (2005). Regionalism from an Historical Perspective //M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, eds. *Global Politics of Regionalism. Theory and Practice*, London: Pluto Press, 321 p., pp. 21-37.

Hettne B. (2005). *Regionalism and World Order*. In: M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, Eds., *Global Politics of Regionalism. Theory and Practice*. London: Pluto Press, 321 p., pp. 269-286.

Hurrell A. (2005). The Regional Dimension in International Relations Theory // M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, Eds., *Global Politics of Regionalism. Theory and Practice*, London, Pluto Press, 2005, pp. 38-53.

Бусыгина И. (2002). Концептуальные основы европейского регионализма. Западная Европа // Шмелёв, Н., ред., *Европа: вчера, сегодня, завтра*, Москва: «Экономика», 823 с., с. 395-404.

Воскресенский А. (2017)" Регионализация в международных отношениях // А. Торкунов, А. Мальгина, ред., *Современные международные отношения: Учебник*, Москва: «Аспект Пресс», 688 с., с. 103-117.

Воскресенский А., Колдунова Е., Лунев И. (2014). Регионы, международно-молитические регионы, глобальные регионы// Воскресенский А., *Мировое комплексное регионоведение: Учебник*. Москва: «Магистр», 416 с., с. 179-187.

Дергачёв В., Вардомский Л. (2015). Регионоведение: Учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальностям «Регионоведение», «Международные отношения», 2-ое изд., Москва: ЮНИТИ-ДАНА, 519 с., с. 57-61.

Кулматов К., Митрофанова А. (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад», 536 с., с. 59-70.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] А. Воскресенский (2017). Регионализация в международных отношениях // *Современные международные отношения: Учебник*, А. Торкунов and А. Мальгина, ред., Москва, «Аспект Пресс», с. 103-117.

[2] В. Дергачёв, Л. Вардомский (2015). Регионоведение: Учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальностям «Регионоведение», «Международные отношения», 2 ред., Москва: ЮНИТИ-ДАНА.

[3] B. Hettne (1999), Globalization and the New Regionalism: The Second Great Transformation // *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 1-24.

[4] К. Кулматов, А. Митрофанова (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[5] И. Бусыгина (2002). Концептуальные основы европейского регионализма. Западная Европа// *Европа: вчера, сегодня, завтра*, Н. Шмелёв, ред., ред., Москва: «Экономика», pp. 395-404.

[6] A. Hurrell (2005). The Regional Dimension in International Relations Theory// *Global Politics of Regionalism" Theory and Practice*, M. Farrell, B. Hettne and L. Van Langenhove, Eds., London, Pluto Press, pp. 38-53.

[7] L. Fawcett (2005). Regionalism from an Historical Perspective// *Global Politics of Regionalism. Theory and Practice*, M. Farrell, Hettne, B. and L. Van Langenhove, Eds., Basingstoke, Palgrave, pp. 21-37.

ԹԵՄԱ 5. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ կկատարենք տարածաշրջանային միջպետական ինտեգրման բնորոշմանը, դրա հիմնապատճառներին ու նպաստող գործոններին՝ սկզբնավորման նախապայմաններին, հիմնապայմաններին և նպատակներին, տարածաշրջանային ինտեգրման փուլերին/մակարդակներին, դրա մեկնաբանման ընդհանուր ու հատուկ տեսություններին:

5.1. Միջպետական տարածաշրջանային ինտեգրման բնորոշումը

Տարածաշրջանային միջպետական ինտեգրումը (ՄՏԻ) տարածաշրջանայնացման ձևերից մեկն է, Հեթնեի տերմինաբանական մոտեցմամբ՝ նախատարածաշրջանից տարածաշրջան-սուբյեկտի մակարդակին անցման գործընթացը: «Ինտեգրում» հասկացության տարատեսակ բնորոշում-սահմանումներից [1, էջ 12-13] այստեղ մենք կառաջնորդվենք այն մոտեցմամբ, որ *ինտեգրումը նախապես ինքնավար միավորների (պետությունների) միջև փոխգործակցության ինտենսիվ ձևանմուշների ստեղծման, պահպանման ու զարգացման, նոր ամբողջության (ինտեգրացիոն համայնքի, հանրույթի, ընկերակցության) մեջ այդ միավորների կամավոր ու փոխշահավետ միավորման սոցիալ-տնտեսական, տնտեսաքաղաքական, իրավաքաղաքական, սոցիոմշակութային, երբեմն էլ նաև ռազմաքաղաքական գործընթաց է*: Այլ կերպ ասած՝ կարելի է առանձնացնել «ինտեգրում» հասկացության երկու՝ լայն և նեղ ըմբռնումներ: Լայն առումով ինտեգրումը նախկինում միմյանցից անջատ-անկախ մասերի միավորումն է

նոր ամբողջի մեջ, իսկ նեղ առումով՝ ընդհանուր հատկանիշների ու շահերի հիման վրա պետությունների կամավոր միավորման ու նրանց միջև կապերի ինտենսիվացման գործընթաց: Դրա արդյունքում նրանք ստանում են այնպիսի օգուտ, որն անհասանելի կլիներ ինքնուրույն-անկախ գործելու դեպքում:

5.2. ՄՏԻ հիմնապատճառները և նպաստող գործոնները[1]

ՄՏԻ ուսումնասիրության համար առաջնայինը, անշուշտ, դրա հիմնապատճառների և նպաստող գործոնների հարցն է: Բայց, ինչպես հայտնի է, ՄՏԻ յուրաքանչյուր գործնական օրինակ յուրահատուկ է իր նախադրյալներով, նպաստող գործոններով, պատճառներով, զարգացման առանձնահատկություններով և հնարավորություններով: Այսպես, մասնագիտական գրականության մեջ նշվում են ՄՏԻ հնարավորությունը, գործընթացի կայունությունը և զարգացման հնարավորությունները պայմանավորող մի շարք **փոփոխականներ**՝ 1. մասնակից-պետությունների թիվը, 2. դրանց չափերը, 3. զարգացման մակարդակները, 4. պետությունների փոխկախվածության աստիճանը, 5. քաղաքական համակարգը, 6. աշխարհայացքային ընկալումները, արժեքներն ու նորմերը, 7. համագործակցության ոլորտները, 8. ազդեցության ձևը, 9. ժամկետները [2, pp. 51-57]:

Նշվում են նաև ՄՏԻ **սկզբնավորման** համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար հետևյալ ***նախապայմանները*** [3, pp. 128-131].

- ***Աշխարհագրական հարևանությունը, ընդհանուր սահմանների առկայությունը, պատմականորեն զարգացած***

[1] Ժողովածուի այս բաժինը հեղինակի՝ ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտության հիմունքներ» ձեռնարկում ընդգրկված դասախոսությունների 1.3 մասի լրամշակված տարբերակն է:

տնտեսաքաղաքական կապերը: Որպես կանոն, միավորումն առավել դյուրին է հաղորդակցության խնդիրները հեշտ լուծող սահմանակից պետությունների միջև: Բացի դրանից՝ աշխարհագրական գործոնները (ռելիեֆի ձևը, գետերի կամ լճերի առկայությունը և այլն) կարող են տնտեսապես ինչպես միավորել, այնպես էլ տարանջատել պետությունները:

- Այդ պետությունների ***տնտեսական զարգացման և տնտեսությունների շուկայականության մակարդակների համադրելիությունը***: Որպես կանոն, ինտեգրումն առավել արդյունավետ է տնտեսապես զարգացած երկրների միջև, իսկ զարգացող երկրների ինտեգրումն սկսվում է տարատեսակ անցումային համաձայնագրերի կնքմամբ, որոնք ուղղված են նրանց զարգացման մակարդակների հավասարեցմանը: Բացի դրանից՝ զարգացող երկրները չեն կարող անմիջապես ինտեգրվել զարգացած և կապիտալի ազատ տեղաշարժի հարցեր քննարկող երկրների խմբավորումներում:
- Տնտեսական ու զարգացման, տնտեսական կառավարման, ֆինանսավորման, քաղաքական համագործակցության և այլ ոլորտներում ինտեգրվող պետությունների ***խնդիրների ընդհանրությունը***:
- ***«Ցուցադրական» էֆեկտը***. ինտեգրացիոն խմբավորում ստեղծած պետություններում, որպես կանոն, նկատվում է տնտեսական առաջընթաց, որը հոգեբանական որոշակի ազդեցություն է ունենում այլ, հատկապես հարևան պետությունների վրա:
- ***«Դոմինոյի» էֆեկտը,*** երբ տարածաշրջանի պետությունների մի մասը դառնում է ինտեգրացիոն խմբավորման անդամ, խմբավորումից դուրս գտնվող պետությունները բախվում են խմբավորմանն անդամակցող պետությունների հետ տնտեսական կապերի վերակողմնորոշման խնդրին: Արդյունքում խմբա-

վորումից դուրս գտնվող երկրները ձգտում են ինչ-որ կերպ ներգրավվել ինտեգրման գործընթացներում:

- Պետությունների ***քաղաքական կամքի, առաջատար պետության*** կամ մեկից ավելի երկրներից բաղկացած նախաձեռնող ***«միջուկի» առկայությունը***:

Որոշ հեղինակներ էլ պնդում են, որ արդյունավետ և լիարժեք **ինտեգրում հնարավոր է** միայն երեք ***հիմնապայմանների*** առկայության դեպքում [4].

1. պետությունները պետք է ունենան ***տնտեսական զարգացման բավական բարձր մակարդակ***՝ հիմնված տնտեսության ճյուղերի փոխլրացման ու մրցակցության վրա այն պայմանով, որ այն կունենա խթանող, այլ ոչ թե կազմաքանդող դեր: Թույլ զարգացած ու համանման տնտեսական հնարավորություններ ունեցող երկրներն ավելի շուտ կլինեն մրցակիցներ, քան գործընկերներ,

2. անգամ տնտեսապես զարգացած երկրներն ունակ կլինեն ինտեգրվելու, եթե նրանց ***տնտեսությունները շուկայական են և ապակենտրոնացված***,

3. ինտեգրումը կարող է լինել կայուն և անշրջելի միայն գործընկեր-երկրներում ***ժողովրդավարական քաղաքական համակարգերի առկայության*** դեպքում, այլապես ներքին իրավիճակն ու արտաքին քաղաքականությունը կմնան ինքնաբուխ, դժվար կանխատեսելի և անհուսալի:

Անշուշտ, պետություններն ստեղծում են ինտեգրացիոն խմբավորումներ իրենց ***ընդհանուր նպատակների*** իրագործման համար, որոնցից գլխավորներ են համարվում [5, pp. 4-6, 7].

- շուկայի սահմանների և տարողունակության ընդլայնումը, տրանսակցիոն ծախսերի կրճատումը, արտադրական գոր-

ծոնների նոր համակցությունը, ԱՈՒՆ-ների խթանումը (*մասշտաբի տնտեսության առավելություններ*),

- *տնտեսության կառուցվածքային վերակազմավորման խթանումը* և *աջակցությունն* ազգային *արդյունաբերության համեմատաբար երիտասարդ ճյուղերի զարգացմանը*,
- ազգային *արտադրական մրցունակության աճի խթանումը*, համաշխարհայնացման մարտահրավերների դեմ համատեղ պայքարը,
- *մասնակից-երկրների դիրքերի ամրապնդումը* միջազգային բազմակողմ առևտրային բանակցություններում,
- *մասնակից-երկրների բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումը*, որի արդյունքում էլ աստիճանաբար վերանում են նրանց միջև հակամարտության հնարավորությունները,
- *արտաքին քաղաքական բարենպաստ միջավայրի ստեղծումը*. ՄՏԻ խմբավորումն աստիճանաբար վերածվում է նաև միջազգային քաղաքականության ակտիվ ու ազդեցիկ դերակատարի:

Կորդ Յակոբյաթն [6, c. 2-13] առանձնացնում է տարածաշրջանային խմբավորումների կազմավորման երկու ուղղություն: ***Առաջինի*** հիմքը երկրների միջև **<u>առևտրատնտեսական</u>** հարաբերությունների խորացումն է: Ինտեգրվող երկրների միջև ապրանքաշրջանառությունն էապես գերազանցում է այլ երկրների հետ նրանցից յուրաքանչյուրի ապրանքաշրջանառության ծավալը: Այսպիսով՝ տնտեսական խորացող կապերը նպաստում են նաև այդ երկրների միջև քաղաքական հաղորդակցության ուղիների ընդլայնմանը, դրդում իրականացնելու ինտեգրացիոն նախաձեռնություններ նաև քաղաքականության ոլորտում: ***Երկրորդ*** ուղղության հիմքը ***<u>քաղաքական</u>*** որոշումն է, այլ ոչ թե տնտեսա-

կան շահավետությունը: Այս դեպքում տարածաշրջանային խմբավորումը միշտ չէ, որ հաշվի է առնում աշխարհագրական կամ պատմական առանձնահատկությունները:

Տարածաշրջանային ինտեգրման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ իրականում այդ երկու ուղղությունները փոխկապակցված են, և կարելի է առանձնացնել միայն առաջինի կամ երկրորդի գերակշռությունը ՄՏԻ կոնկրետ օրինակում: Սակայն ակնհայտ է, որ արդյունավետ ինտեգրման համար գերազանցապես քաղաքական կամքի շեշտադրումը բավական չէ, իսկ ինտեգրման չափազանց արագ տեմպի դեպքում ըստ արժանվույնս հաշվի չի առնվում դրա հետ անխուսափելիորեն կապված ազգային-պետական ինքնավարության որոշակի կորուստը: Դրա վկայությունը Երկրորդ աշխարհամարտից հետո տարբեր տարածաշրջաններում (Հարավարևելյան Ասիա, Աֆրիկա, Հարավային Ամերիկա) արևմտաեվրոպական ինտեգրման փորձի կիրառման ձախողումներն են, երբ գերազանցապես մասնակիցների քաղաքական կամքի հենքի վրա ստեղծված ինտեգրացիոն կառույցներն ունենում էին զուտ հայտարարագրային (դեկլարատիվ) բնույթ: Այդ միավորումների մեծ մասի գործունեությունն ունեցել է ցածր արդյունավետություն, քանի որ հաշվի չեն առնվել աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական գործոնները: Բացառություն կարելի է համարել ԱՍԵԱՆ-ը, որտեղ ինտեգրման փորձերը նախապես ունեցել են արտահայտված քաղաքական բնույթ՝ ուղղված լինելով անվտանգության տարածաշրջանային կառույցի ստեղծմանը, բայց հետագայում այդ կառույցն իր առջև դրեց բացառապես տնտեսական խնդիրներ: Այսինքն՝ ԱՍԵԱՆ-ը գերազանցապես քաղաքական խնդիրներից անցում կատարեց գերազանցապես տնտեսական խնդիրներին:

5.3. ՄՏԻ մակարդակները[2]

Մասնագիտական գրականության մեջ կա ***ՄՏԻ մակարդակների երկու մոտեցում՝*** նեղ ու լայն: *Նեղ* մոտեցմամբ ՄՏԻ մեկնարկային մակարդակն ազատ առևտրի գոտին է, բարձրագույնը՝ արժութային միությունը, իսկ *լայն* մոտեցմամբ՝ մեկնարկայինն արտոնյալ առևտրային պայմանագրերը, բարձրագույնը՝ քաղաքական ինտեգրումը: ՄՏԻ-ն ներկայացվում է նաև ***փուլային ու մակարդակային մոտեցումներով***: *Փուլային* մոտեցմամբ ՄՏԻ ամեն հաջորդ մակարդակ ներառում է նախորդի հատկանիշները՝ դրանց ավելացնելով նորերը, իսկ *մակարդակային* մոտեցումը մերժում է փուլային-գծային զարգացման տրամաբանությունը, օրինակ՝ պետությունների միջև կարող է ստեղծվել ընդհանուր շուկա, բայց առանց նախորդ՝ մաքսային միության հատկանիշների: Կամ կարող է ստեղծվել մաքսային միություն, բայց անցում չկատարել հաջորդ՝ ընդհանուր շուկայի մակարդակ:

Գործնականում անգամ միևնույն խմբավորման ներսում կարող են միաժամանակ գոյություն ունենալ ՄՏԻ մեկից ավելի մակարդակներ: Այսինքն՝ անդամ-պետությունների մի մասը հասել է ՄՏԻ ավելի բարձր մակարդակի, քան մյուսները: Այս դեպքում մենք գործ ունենք *ճկուն ինտեգրման* (*տե՛ս* նաև **5.4.2.5**) հետ:

Նկատենք նաև, որ 1. ՄՏԻ ցածր մակարդակի օրինակներն աշխարհում ավելի շատ են, քան բարձրերը, 2. ոչ բոլոր առևտրատնտեսական խմբավորումներն են հաջորդաբար անցել ՄՏԻ

---

[2] Ժողովածուի այս բաժինը հեղինակի՝ ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտության հիմունքներ» ձեռնարկում ընդգրկված դասախոսությունների 2.3.2.2.1. մասի լրամշակված տարբերակն է:

բոլոր փուլերը, և 3. գործնականում հանդիպում են նաև «միջանկյալ» փուլեր՝ հիմնական փուլերի տարբեր համակցություններ:

Համակցելով ***ՄՏԻ փուլերի*** մասին տեսահայեցակարգային մի քանի մոտեցումներ [7, pp. 254-255, 5, pp. 1-2, 8, pp. 1-2, 9, c. 44, 10, c. 22, 11, c. 7-13, 12, էջ 108-110] ՝ կարող ենք նշել ՄՏԻ ութ փուլեր (մակարդակներ), որոնցից առաջին յոթը տնտեսական են, իսկ վերջինը՝ քաղաքական:

1. **Արտոնյալ առևտրային պայնագիր (ԱԱՊ)** – գործընկեր-պետությունները միմյանց տրամադրում են արտոնյալ առևտրային պայմաններ, օրինակ՝ նվազեցնում են կոնկրետ ապրանքատեսակների մաքսահարկերը: Երբեմն պահպանվում են ապրանքների քանակական որոշ սահմանափակումներ (քվոտաներ): ԱԱՊ-ները կարող են լինել երկկողմ (երկու պետությունների միջև) և բազմակողմ (երկու և ավելի պետությունների միջև): ԱԱՊ-ներ կարող են կնքվել նաև առևտրային բլոկների միջև կամ առևտրային բլոկի ու դրան չանդամակցող պետությունների միջև:

Բազմակողմ ԱԱՊ-ների օրինակներ են Ասիա-խաղաղօվկիանոսյան առևտրային համաձայնագիրը (1975 թ.), Տնտեսական համագործակցության կազմակերպությունը (1985 թ.), Լատինաամերիկյան ինտեգրման ընկերակցությունը (1980 թ.), ԵՄ արտոնությունների համընդհանուր համակարգը (GSP)՝ նախատեսված զարգացող երկրների համար և այլն:

2. **Ազատ առևտրի գոտի (ԱԱԳ)** – մասնակից-պետությունների միջև վերացվում են մաքսահարկերն ու քանակական սահմանափակումները տեղական արտադրության ապրանքների ու ծառայությունների մեծամասնության (եթե ոչ բոլորի) շրջանառության համար՝ պահպանելով ԱԱԳ-ին չմասնակցող երրորդ երկրների նկատմամբ ինքնուրույն մաքսային քաղաքականություն վարելու իրավունքը: Մասնակիցների միջև պահպանվում

են նաև մաքսային սահմաններն ու մաքսակետերը, որտեղ ստուգում են սահմանը հատող ապրանքների ծագումը՝ կանխելու համար ԱԱԳ-ին չմասնակցող երկրներում արտադրված ու ԱԱԳ մասնակից որևէ երկիր ներմուծված ապրանքատեսակների վերաարտահանումը մեկ այլ մասնակից-երկիր: ԱԱԳ-ները ևս լինում են երկկողմ և բազմակողմ, դրանք ևս կարող են կնքվել առևտրային խմբավորումների կամ դրանց ու առանձին պետությունների միջև: Հաճախ ԱԱԳ-ներին զուգահեռ կնքվում են նաև ***մարդկանց ազատ տեղաշարժի*** մասին պայմանագրեր:

ԱԱԳ օրինակներ են ՆԱՖԹԱ-ն, ԱԱԵԱ-ն, ԱՍԵԱՆ-ի պայմանագրերը Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Կորեայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի հետ, ԱՊՀ ԱԱԳ-ն, ԵՄ պայմանագրերն Ալբանիայի, Ալժիրի, Բոսնիա-Հերցեգովինայի, Կոլումբիայի, Մեքսիկայի, Սերբիայի, Թունիսի, ինչպես նաև Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի հետ:

3. **Մաքսային միություն (ՄՄ)** – մասնակից-պետությունները, նրանց միջև ԱԱԳ-ին զուգահեռ, պարտավորվում են երրորդ պետությունների նկատմամբ կիրառել համաձայնեցված մաքսային քաղաքականություն՝ զրկվելով, փաստորեն, այն ինքնուրույն որոշելու իրավունքից, թեև որոշ դեպքերում կարող են պահպանել ներմուծման քվոտաներն ինքնուրույն սահմանելու իրավունքը: ՄՄ-ի դեպքում մասնակից-երկրների տարածքը վերածվում է միասնական մաքսային տարածության:

ՄՄ-ների հիմնական նպատակը դրան չմիացած երկրների նկատմամբ մաքսային հովանավորչության (պրոտեկցիոնիզմի) կիրառման միջոցով ՄՄ անդամ-երկրների արտադրողների համար արտոնյալ պայմանների ստեղծումն է: Որպես կանոն, ՄՄ-ները ենթադրում են միջկառավարական կամ վերպետական մարմինների ստեղծում, որոնց էլ անդամ-երկրները պատվիրա-

կում են միասնական մաքսային քաղաքականության մշակման ու կիրառման լիազորությունները:

Երբեմն ՄՄ-ների շրջանակներում կիրառվում է ***միասնական մրցակցային քաղաքականություն***՝ շուկայում արտադրողների մրցակցությունը խթանելու նպատակով, իսկ երբեմն էլ կիրառվում են բացառություններ որոշ ապրանքատեսակների (հաճախ՝ գյուղատնտեսական) նկատմամբ:

ՄՄ համաձայնագրեր են գործում ԵՄ-ի և Անդորրայի, Մոնակոյի, Սան Մարինոյի ու Թուրքիայի միջև, ԵԱՏՄ շրջանակներում՝ Բելառուսի, Հայաստանի, ՌԴ-ի, Ղազախստանի և Ղրղզստանի միջև: Այդպիսի խմբավորման օրինակ են նաև Անդյան ընկերակցությունը (Բոլիվիա, Կոլումբիա, Էկվադոր, Պերու) և ՄԵՐԿՈՍՈՒՐ-ը (Արգենտինա, Բրազիլիա, Պարագվայ, Ուրուգվայ, Վենեսուելա):

4. **Ընդհանուր շուկա (ԸՇ)** – ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ խմբավորման ներսում (***«չորս ազատություններ»***): Մասնակից երկրները վերացնում են վերը նշված գործոնների ազատ տեղաշարժը խոչընդոտող միջպետական տնտեսական սահմանները, տեխնիկական ու մաքսային սահմանափակումները: Աշխատուժի ազատ տեղաշարժն իր հերթին ենթադրում է ***վիզային քաղաքականության միասնականացում***: ԸՇ-ն ենթադրում է նաև ***սուբսիդավորման, առողջապահության և սոցիալական ապահովության, հակամենաշնորհային ու լիցենզավորման ոլորտներում ստանդարտների միասնականացում***:

ԸՇ օրինակներ են ԵՄ-ն և ԵՏՏ-ն, ԵԱՏՄ Եվրասիական տնտեսական տարածությունը, Հարավասիական ազատ առևտրի տարածությունը (ՍԱՖԹԱ – Բանգլադեշ, Բութան, Հնդկաստան, Մալդիվներ, Նեպալ, Պակիստան, Շրի Լանկա):

5. **Տնտեսական միություն (ՏՄ)** – մասնակիցների միջև ԸՇ, ՄՄ, ինչպես նաև նրանց հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ներդաշնակեցում: ՏՄ-ները գործնականում հանդես են գալիս ՄՏԻ հաջորդ՝ *արժութային միությունների* հետ միասին: ՏՄ-ների օրինակ են ԵՄ-ն, Կարիբյան ընկերակցությունը, Ռուսաստան-Բելառուս միութենական պետությունը:

6. **Արժութային միություն (ԱՄ)** – երկու կամ ավելի պետություններ պաշտոնապես կիրառում են միևնույն դրամական արժույթը:

Տեսականորեն ԱՄ-ները կարող են լինել ***երեք տեսակ***՝

1. ***ոչ ֆորմալ***, երբ որևէ պետություն միակողմանիորեն ընդունում է որևէ այլ պետության կամ խմբավորման դրամական միավորը (օրինակ՝ ՀՀ դրամը Արցախի Հանրապետությունում, ՌԴ ռուբլին՝ Հարավային Օսիայում և Աբխազիայում, Իսրայելի շեկելը և Հորդանանի դինարը՝ Պաղեստինում, ԵՄ եվրոն՝ Չեռնոգորիայում, Ավստրալիայի դոլարը՝ Կիրիբատիում, Նաուրուում և Տուվալուում, ԱՄՆ դոլարը՝ մի շարք երկրներում և այլն),

2. ***ֆորմալ***, երբ մի պետություն միջազգային համաձայնագրի հիման վրա ընդունում է մեկ այլ պետության կամ միջպետական խմբավորման դրամական միավորը,

3. ***ֆորմալ միասնական արժութային քաղաքականություն***, երբ մեկից ավելի պետություններ ընդունում են միասնական արժութային միավոր՝ վարելով միասնական արժութային քաղաքականություն: Ֆորմալ ԱՄ օրինակ է եվրոն՝ եվրոյի գոտու երկրներում:

ԱՄ-ները կարող են համակցված լինել նաև ՄՄ-ների հետ (***մաքսային և արժութային միություն***), ինչպես, օրինակ, Արևմտաաֆրիկյան տնտեսական և արժութային միությունը, Կենտրոնական Աֆրիկայի տնտեսական և արժութային ընկե-

ռակցությունը, փաստացի նաև Հարավաֆրիկյան ՄՄ ընդհանուր արժութային տարածությունը, ԵՄ-Անդորրա, ԵՄ-Մոնակո, ԵՄ-Սան Մարինո և այլն:

7. **Տնտեսական և արժութային միություն (ՏԱՄ)** – ՏՄ և ԱՄ յուրօրինակ համակցություն է, որը ներառում է ՄՄ, ԸՇ ու ՏՄ հիմնական հատկանիշները, և դրանց գումարվում են նաև կառավարման վերազգային (վերպետական) մարմինների ստեղծումն ու միասնական մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը:

ՏԱՄ օրինակներ են ԵՄ-ի ՏԱՄ-ը՝ եվրոյի գոտու մեջ մտնող ԵՄ անդամ-պետություններով, փաստացի՝ ԵՄ-Մոնակո, Շվեյցարիա-Լիխտենշտայն և այլն: Ինքնավար ու կախյալ տարածքները ևս (օրինակ՝ ԵՄ որոշ երկրների անդրծովային տարածքները) երբեմն համարվում են իրենց մայր տարածքից առանձին մաքսային տարածքներ կամ ունեն ՄՄ, ԸՇ և ԱՄ տարատեսակ ֆորմալ և ոչ ֆորմալ համակցությունների կարգավիճակ:

Լիարժեք տնտեսական ինտեգրումը (ԼՏԻ) համարվում է ՏԱՄ-ի և հաջորդ՝ քաղաքական ինտեգրման միջև ընկած միջանկյալ փուլ, որը նաև տնտեսական ինտեգրման բարձրագույն մակարդակն է: ԼՏԻ-ից հետո ինտեգրված միավորներն ամբողջությամբ կորցնում են տնտեսական քաղաքականության ոլորտում իրենց ինքնիշխանությունը՝ այդ լիազորություններն ամբողջությամբ փոխանցելով վերազգային (վերպետական) մարմիններին: Գործնականում ԼՏԻ-ն առկա է միայն պետությունների ներսում: Միջազգային կազմակերպությունների շրջանակներում նման օրինակներ չկան: ԼՏԻ-ի օրինակ են երբեմն համարում ԱՄՆ-ն՝ որպես կեղծ-ինքնուրույն պետական կազմավորումների միություն:

8. **Քաղաքական ինտեգրում (ՔԻ)** – համարվում է տարածաշրջանային ինտեգրման վերջնակետը, որը ենթադրում է տնտեսական խմբավորման մասնակիցների լիարժեք տնտեսական ու քաղաքական միասնականացում, այդ թվում՝ մասնակիցպետությունների ինքնիշխան լիազորությունների փոխանցում վերազգային-վերպետական կառավարման մարմիններին, որով, փաստորեն, ՄՏԻ խմբավորումը մոտեցվում է դաշնության կամ համադաշնության մակարդակին:

ՔԻ-ի գործնական օրինակներ աշխարհում չկան:

5.4. Տարածաշրջանային միջպետական ինտեգրման մեկնաբանման ընդհանուր և հատուկ տեսությունները

5.4.1. Միջազգային հարաբերությունների տեսությունները և տարածաշրջանային միջպետական ինտեգրումը

Ի տարբերություն ՄՏԻ հատուկ տեսությունների՝ միջազգային հարաբերությունների ընդհանուր տեսությունները ՄՏԻ-ն դիտարկում են ոչ թե միջազգային հարաբերությունների տարածաշրջանային ենթահամակարգի ու ներտարածաշրջանային գործընթացների, այլ հենց միջազգային հարաբերությունների համակարգի ու համաշխարհային գործընթացների, մասնավորապես համաշխարհային մակարդակով ուժերի բալանսի ու գերիշխանության դիտանկյունից: Այսպես, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, **ռեալիզմի** շրջանակում պետությունները, նրանց մրցակցությունը, պատերազմը համարվում են բնական, համաշխարհային քաղաքականությունը՝ «զրոյական հաշվով խաղ», որտեղ ուժեղները հաղթում են, իսկ թույլերը՝ պարտվում: Այդ տեսանկյունից նրանք անբնական են համարում

պետությունների միջև երկարաժամկետ համագործակցությունը, նրանց հարաբերությունների կարգավորումը ինտեգրացիոն ինստիտուտների ու միջազգային իրավանորմերի միջոցով, այդ ինստիտուտների գերակայությունը պետությունների նկատմամբ: Առաջնայնությունը տալով միջազգային անվտանգության հարցերին՝ միջպետական հարաբերություններում սոցիալ-տնտեսական համագործակցության հարցերը նրանք համարում են երկրորդական, ածանցյալ: Ռեալիստների համոզմամբ միջպետական խմբավորումներն ի հայտ են գալիս կա՛մ երբ պետությունները միավորվում են՝ առավել հզորներին բալանսավորելու նպատակով, կա՛մ երբ փոքր պետությունները միավորվում են առավել հզորների հետ՝ սեփական անվտանգությունն ամրապնդելու նպատակով: Հետագայում նեոռեալիզմի շրջանակներում ի հայտ եկավ գերիշխանական կայունության տեսությունը, որի համաձայն՝ մյուսներին գերազանցող ռեսուրսներ ու կարողություններ ունեցող պետությունը վերածվում է գերիշխանի, որն իր շուրջ է համախմբում մյուս պետություններին և շահագրգռված լինելով այդ համակարգում կայունության պահպանման մեջ՝ նա ձևավորում է իր շահերն սպասարկող միջազգային ռեժիմ: Իսկ երբ գերիշխանը թուլանում է, միջազգային այդ ռեժիմն սկսում է քայքայվել [13, c. 76-80, 14, c. 21-22]:

Չժխտելով միջազգային թատերաբեմում պետությունների՝ եսասիրական շահերով առաջնորդվելու հիմնարար թեզը՝ **նեոլիբերալիզմի** ներկայացուցիչները պնդում են, որ, այդուհանդերձ, նրանց մրցակցությունը «զրոյական հաշվով խաղ» չէ, քանի որ միջազգային առևտուրը պետություններին տալիս է առավել էժան ապրանքներ և ծառայություններ ստանալու հնարավորություն: Նրանց համոզմամբ միջպետական ինտեգրման գլխավոր նպատակը ծախսերի կրճատումն է և օգուտի մեծացումը, և հենց

այդ նպատակով էլ պետություններն սկսում են ենթարկվել միջազգային իրավանորմերին, միավորվել խմբավորումների մեջ: Դա երկարաժամկետ հեռանկարում պետությունների համար ավելի շահեկան է, քան պատերազմը, որը կարող է երաշխավորել միայն կարճաժամկետ օգուտ [14, c. 22-23]:

Նեոմարքսիստական հայեցակարգի շրջանակներում աշխարհը բաժանված է Կենտրոն-միջուկի և Ծայրամասի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ևս բաժանված է կենտրոնի ու ծայրամասի, ինչպես նաև Կիսածայրամասի: Պետությունը չհամարելով միջազգային հարաբերությունների գլխավոր սուբյեկտ՝ նեոմարքսիստները գտնում են նաև, որ «շահերի ներդաշնակություն» համապատասխանաբար կա միայն Կենտրոնի ու Ծայրամասի կենտրոնական պետությունների միջև, որոնք Կենտրոնի ծայրամասային պետությունների հետ միասին հակադրվում են Ծայրամասի ծայրամասային պետություններին: Ավելին, այս հեղինակների համոզմամբ Ծայրամասի ու Կիսածայրամասի պետությունները գտնվում են Կենտրոնի պետություններից տնտեսական ու քաղաքական կախվածության մեջ: Ըստ այդմ էլ՝ նեոմարքսիստներն ինտեգրումը համարում են կենտրոնական պետությունների կողմից ծայրամասային պետությունների շահագործման բարձրագույն փուլ [14, c. 23]:

Նեոմարքսիստական այս մոտեցումների հետ սերտ աղերսներ ունի նաև **կախվածության տեսությունը**, որի համաձայն՝ ծայրամասային պետությունների թույլ զարգացվածության պատճառն այն չէ, որ նրանք ինտեգրված չեն կամ թույլ են ինտեգրված աշխարհ-համակարգին, այլ այն է, թե ինչպես են նրանք ինտեգրված: Այս տեսության հետևորդների համոզմամբ աղքատ պետությունները հարուստներին տրամադրում են բնական պաշարներ, էժան աշխատուժ, հնացած տեխնոլոգիաների և ապ-

ռանքների սպառման շուկաներ, առանց որոնց կենտրոնական պետությունները չէին կարող հարուստ լինել: Իսկ թույլ զարգացած պետությունների՝ հարուստներին ընդդիմանալու ցանկացած փորձ կարող է հանգեցնել նրանց նկատմամբ տնտեսական ու ռազմական պատժամիջոցների կիրառման: Այս տեսության հետևորդները տնտեսական ինտեգրումը համարում են հարուստ և աղքատ պետությունների միջև հարկադրված փոխկախվածության հետևանք [15, pp. 196-197]:

5.4.2. ՄՏԻ հատուկ տեսությունները[3]

ՄՏԻ հատուկ տեսությունները ձևավորվել և զարգացել են եվրոպական ինտեգրման փորձի հիման վրա, ուստի դրանց համընդհանրությանը և կիրառելիությանը այլ տարածաշրջաններում ինտեգրման գործընթացների մեկնաբանման ու ուղենշման հարցում պետք է մոտենալ վերապահումներով: Ստորև կխոսենք այդ տեսություններից մի քանիսի մասին:

5.4.2.1. Ֆեդերալիզմ [16, pp. 29-30, 1, էջ 25-26]

Ֆեդերալիզմի (դաշնապետություն) հետևորդները պնդում են, որ ***ինտեգրվող պետությունների փոխհարաբերությունների հիմքում պետք է ընկած լինի միութենական (դաշնային) պետության մոդելը, որը նաև պետք է լինի ինտեգրման վերջնարդյունքը***: Խաղաղության պահպանմանն ու անվտանգության ապահովմանն ուղղված այդ դաշնության ստեղծումը, նրանց համոզմամբ, վերջ կդնի բռնությանը միջպետական տարաձայնությունների կարգավորման գործում:

---

[3] Ժողովածուի այս բաժինը հեղինակի՝ ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտության հիմունքներ» ձեռնարկում ընդգրկված դասախոսությունների 1.3 մասի լրամշակված տարբերակն է:

Ֆեդերալիստներն ընդգծում են վերազգային դաշնապետության երեք կարևոր ***առավելություններ***՝ 1. խոշոր խնդիրներն ավելի փոքր զրկանքներով լուծելու հնարավորությունը, քան դա հնարավոր է ապակենտրոնացման պայմաններում, 2. սահմանադրորեն ամրագրված դաշնությունում որևէ մի խմբի կողմից իշխանության զավթման անհնարինությունը և 3. այն հանգամանքը, որ գումարը (դաշնությունը) ավելին է, քան այն կազմող երկրների ամբողջությունը:

5.4.2.2. Նոր ֆունկցիոնալիզմ [17, pp. 46, 49, 55, 18, pp. 8-10, 19, p. 15, 1, pp. 27-29]

Նորաֆունկցիոնալիզմի ուշադրության կենտրոնում ինտեգրման մեխանիզմն է: Այս հեղինակների կարծիքով ինտեգրումը գործընթաց է, որի դեպքում իրենց ընդհանուր շահերի ներկայացումն ու իրականացումն ապահովելու նպատակով **ինտեգրվող պետություններն իրենց *ինքնիշխան իրավունքների մի մասը փոխանցում են*** իրենց կողմից ստեղծվող և բոլորի համար **միասնական ինստիտուցիոնալ կառույցին**: Ինտեգրման **մասնակից-երկրներն ու նրանց կառավարությունները խաղում են բավական պասիվ դեր, մինչդեռ վերազգային ինստիտուտներն ակտիվ կազմակերպիչներ են և ինտեգրման «ոգեշնչողներ», իսկ ոչ պետական կազմակերպված խմբերը և քաղաքական ուժերն իրականացնում են ինտեգրման յուրօրինակ «խթանիչի» դեր**:

Նորաֆունկցիոնալիզմի կենտրոնական տարրը ***«ցայտյունի»*** **(«spill-over») հայեցակարգն է, որը ենթադրում է *ոչ միայն նոր ոլորտների վրա ինտեգրման տարածում, այլև դրա խորքային, որակական զարգացում՝ ինտեգրման ցածր ձևերից անցում առավել բարձրերին***: Սակայն նրանք մերժում են այդ «ցայտյունի» մեխանիկական ազդեցության գաղափարը և

պնդում, որ դրանում դրված օբյեկտիվ հնարավորությունների իրագործման համար անհրաժեշտ են նպատակաուղղված քաղաքական գործողություններ: Ավելին, ինտեգրումը պետք է զարգանա նախևառաջ այն ոլորտներում, որտեղ այն կարող է շոշափելի արդյունքներ տալ, այսինքն՝ ինտեգրումը պետք է լինի (նաև) տնտեսապես արդարացված՝ ակնկալելով, որ ***տնտեսական ինտեգրման հետևողական զարգացումը կհանգեցնի ինստիտուցիոնալ փոփոխությունների՝ նոր մակարդակի բարձրացնելով քաղաքական ինտեգրումը***:

«Ցայտյունի» հայեցակարգը նորաֆունկցիոնալիսները կիրառում են տնտեսական ինտեգրման ողջ շղթայի՝ ազատ առևտրային գոտուց մաքսային միության, ապա՝ ընդհանուր շուկայի, այնուհետև՝ տնտեսական ու արժութային միության անցման տեսական մեկնաբանության համար: Նորաֆունկցիոնալիստները հանգուցային նշանակություն են տալիս վերազգային ինստիտուտներին, որոնց **վերազգային բնույթը ոչ միայն գործառութային առավելություն է, որը թույլ է տալիս լավագույնս առանձնացնել ու պաշտպանել ինտեգրման մասնակիցների ընդհանուր շահերը, այլ նաև ինտեգրման ամրության ու անշրջելիության գլխավոր երաշխիքն է**:

Գործնականում նկատելի են «ցայտյունի» տարբեր դրսևորումներ: Դրանցից ամենատարածվածը ***գործառութայինն*** է, որը ենթադրում է, որ քաղաքականությունը մի ոլորտում կարող է *անկանխատեսելի* ազդեցություն ունենալ այլ ոլորտների վրա: ***Քաղաքական*** «ցայտյունը», ի տարբերություն նախորդի, անդամ-պետությունների միջև միջկառավարական գործարք է, որն ունի *կանխատեսելի* հետևանքներ: ***Խթանվող*** «ցայտյունի» օրինակ է, երբ ինտեգրացիոն խմբավորման բարձրագույն վերպետական մարմինը քաղաքական այնպիսի օրակարգ է կազմում,

որը *նպաստում է* անդամ-պետությունների ավելի խորը ինտեգրմանը:

Նորաֆունկցիոնալիստները խոսում են նաև ինտեգրման հնարավոր հետընթացների («spill-backs»)՝ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների սառեցման ու ճգնաժամների մասին:

5.4.2.3. Միջկառավարական մոտեցում [20, pp. 68, 70-71, 18, pp. 11-13, 19, pp. 16-17, 1, էջ 29-31]

Միջկառավարական մոտեցման շրջանակներում ինտեգրումը դիտարկվում է որպես պետությունների շահերի փոխազդեցության, բանակցությունների կամ առևտրի արդյունք, խիստ սահմանափակ համաձայնություն ինքնիշխան ազգային պետությունների միջև: **Միջկառավարական մոտեցումը չի ընդունում վերպետական ինքնիշխանության գոյության հնարավորությունը և կարևորում է անդամ-պետությունների ինքնիշխանության պահպանումը**:

Սթենլի Հոֆմանի կարծիքով, ***քանի որ ոչ բոլոր շահերն են ընդհանուր, և ոչ բոլոր ընդհանուր շահերն են միատեսակ կարևոր բոլոր պետությունների համար, ապա բոլորին համախմբելու միակ ուղին բնական ընտրությունն է՝ 1. կապակցելով այն շահերը, որոնք ընդհանուր են, 2. այնտեղ, որտեղ դրանք ընդհանուր են, և 3. այն չափով, որքանով դրանք ընդհանուր են***:

Էնդրյու Մորավչիկն ինտեգրումը ներկայացնում է որպես «ծախք-օգուտ» ռացիոնալ հաշվարկի վրա հիմնված ***երկմակարդակ խաղ***: Առաջին՝ ազգային շահերի ձևակերպման մակարդակում, քաղաքական ու սոցիալական խմբերի շահերի համաձայնեցման և պետության ու հասարակության փոխազդեցության արդյունքում ձևավորվում են որոշակի նպատակներ ու նախա-

պատվություններ («**ինտեգրման պահանջմունք**»), որոնցով պետությունը դուրս է գալիս խաղի երկրորդ մակարդակ՝ առևտուր միջկառավարական մակարդակում («**ինտեգրացիոն որոշումների առաջարկ**»): Հենց դրանով է նա բացատրում ազգային պետությունների հակասական վարքը, երբ վերջիններս ընդունում են իրենց ինքնավարությունը սահմանափակող որոշումներ՝ փոխարենը որոշակի առավելություններ ստանալով ավելի լայն՝ ինտեգրացիոն ինստիտուտների դաշտում, որտեղ միջկառավարական առևտուրը վերածվում է դրական գումարով խաղի:

Ուիլյամ Ուոլեսն իր հերթին խոսում է ***«ձևային» և «ոչ ձևային» ինտեգրման*** մասին. «ձևային ինտեգրումը» ենթադրում է պետության ինտեգրացիոն քաղաքականություն, իսկ «ոչ ձևային ինտեգրումը» տեղի է ունենում ոչ պետական դերակատարների անդրսահմանային փոխգործակցության շրջանակներում: Եվ եթե ոչ ձևային ինտեգրումը տեղի է ունենում քաղաքական որոշումներից անկախ՝ հետևելով շուկայի օրենքներին, ապա ձևային ինտեգրումն արտահայտվում է քաղաքական որոշումներում, իրավական ակտերում, որոնք խթանում կամ վերակողմնորոշում են տարերային գործընթացները, հակազդում դրանց բացասական հետևանքներին: Ինտեգրման այդ երկու տիպերը փոխկապակցված են: Ձևային ինտեգրման շրջանակներում որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում նաև ոչ ձևային ինտեգրման մասնակիցների շահերը՝ երբեմն ուղղակիորեն խթանելով ոչ ձևային ինտեգրումը կամ դրա այս կամ այն կողմերը:

5.4.2.4. Քաղաքական ցանց [18, pp. 29-30, 21, pp. 36-37, 1, էջ 31-32]

Եթե ռեալիստական հայեցակարգերը պետությունների մրցակցությունը ներկայացնում են որպես «զրոյական հաշվով խաղ», որտեղ ուժեղն անպայման հաղթում է, իսկ թույլը՝ պարտվում, ապա **քաղաքական ցանցը համագործակցության մի շրջանակ է, որտեղ փոխկախվածության շնորհիվ շահում են բոլոր մասնակիցները՝ անկախ նրանց ուժային հնարավորությունների հարաբերակցությունից («հաղթանակ-հաղթանակ» իրավիճակ)**: Սակայն հարկ է նշել, որ սա բոլորովին չի նշանակում, որ բոլոր մասնակիցներն են հավասարապես օգտվում: Այդուհանդերձ, կա նաև «մեդալի հակառակ կողմը». նույն **ցանցային էֆեկտի պատճառով ինտեգրման մասնակից-պետություններից մեկի խնդիրը կարող է դառնալ խնդիր ինտեգրացիոն ամբողջ խմբավորման համար**:

5.4.2.5. Տարբերակված (ճկուն) ինտեգրում [22, pp. 2-3, 23, pp. 95-97, 102, 1, էջ 32-33]

Տարբերակված (ճկուն) ինտեգրման տեսության շրջանակներում օգտագործվում է երեք հայեցակարգ՝ «ըստ ընտրության», «տարբեր արագությունների» և «փոփոխական երկրաչափություն»:

Ի տարբերություն մյուս երկուսի՝ **«ըստ ընտրության»** հայեցակարգը մերժում է բոլոր անդամ-պետությունների համար միասնական իրավական ժառանգության անհրաժեշտությունը՝ ենթադրելով, որ ***յուրաքանչյուր անդամ-պետություն հնարավորություն և իրավունք ունի ընտրելու այն ոլորտը, որտեղ նա շահագրգռված է մասնակցելու համագործակցությանը***:

«Տարբեր արագությունների» հայեցակարգի համաձայն՝ առավել զարգացած երկրները կարող են սկսել ավելի խորը համագործակցություն՝ նախատեսելով որոշակի ժամանակահատվածում մյուս երկրների մասնակցությունը ևս ապահովող մեխա-

նիզմներ: Այս դեպքում ***պահպանվում է միասնական իրավական ժառանգությունը, սակայն միևնույն նպատակին անդամ-պետությունները հասնում են տարբեր «արագություններով» և տարբեր ժամանակահատվածներում***:

«Փոփոխական երկրաչափությունը» ևս ենթադրում է, որ ***ինտեգրացիոն ընկերակցության ներսում կան սկզբունքային, էական տարբերություններ, որոնց պատճառով անդամ-պետությունները ժամանակավորապես խմբավորվում են տարբեր «շրջանակների» մեջ***: Այդ ***օղակներից առաջինը*** կամ «միջուկը» պետք է կազմեն ինտեգրվածության բարձր աստիճան ունեցող երկրները, որոնք պետք է առաջ մղեն ինտեգրման ողջ գործընթացը: ***Երկրորդ օղակը*** պետք է կազմեն ինտեգրման ավելի ցածր մակարդակում գտնվող պետությունները: ***Երրորդ օղակը*** ներառում է ինտեգրացիոն խմբավորմանն անդամակցության թեկնածու-պետությունները: ***Չորրորդ օղակը*** պետք է կազմեն ինտեգրացիոն խմբավորման հետ սերտորեն համագործակցող պետությունները, որոնք, հնարավոր է, ոչ մոտ ապագայում կանդամակցեն այդ խմբավորմանը: Եվ վերջին՝ ***հինգերորդ օղակը*** ներառում է բոլոր այն պետությունները, որոնք երբևէ կարող են խմբավորմանն անդամակցության ցանկություն հայտնել:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է միջպետական ինտեգրումը, և ինչո՞վ է այն տարբերվում միջպետական համագործակցության մյուս ձևերից:

2. Որո՞նք են ՄՏԻ պայմանները (փոփոխականներ, նախապայմաններ և հիմնապայմաններ, նպատակներ), և ի՞նչ նշանակություն ունեն դրանք ՄՏԻ սկզբնավորման ու զարգացման համար:

3. Որո՞նք են ՄՏԻ մակարդակները և ինչո՞վ են տարբերվում միմյանցից:

4. Որո՞նք են միջպետական ինտեգրման մասին ռեալիստական, ազատական և մարքսիստական տեսությունների հիմնադրույթները: Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն այդ հայեցակարգերը միջպետական ինտեգրման տեսանկյունից:

5. Որո՞նք են միջպետական ինտեգրման մասին ֆեդերալիզմի, նոր ֆունկցիոնալիզմի, միջկառավարական մոտեցման, քաղաքական ցանցի և տարբերակված ինտեգրման տեսությունների հիմնադրույթները: Ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ ունեն այդ հայեցակարգերը միջպետական ինտեգրման հարցում:

6. Ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ ունեն միջազգային հարաբերությունների ընդհանուր և ինտեգրման հատուկ տեսությունները միջպետական ինտեգրման հարցում:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Behr T. & Jokela J. (2011). Regionalism & Global Governance: The Emerging Agenda, Notre Europe, Paris, pp. 3-19.

Closa C. (2016). Governance structures and processes in integration organizations, in Comparative Regional Integration. Governance and Legal Models, Cambridge, Cambridge University Press, pp. 43-68, 141-152.

Hancock K. J. (2009). Regional Integration. Choosing Plutocracy, Palgrave Macmillan, New York, pp. 17-34.

Kimbugwe K. et all (2012). Economic Development Through Regional Trade: A Role for the New East African Community?, Palgrave Macmillan, New York, pp. 76-98.

Laursen F. (2008). Theory and Practice of Regional Integration. Jean Monnet/Robert Schuman Paper Series Vol. 8, No. 3, pp. 3-17.

Wiener A. and Diez T., Eds. (2009). *European Integration Theory. 2nd Ed.*, Oxford, Oxford University Press, pp. 25-90.

Սողոմոնյան Մ. (2014). Միջազգային հարաբերությունների տեսություններ և վերլուծության մակարդակներ: Դասախոսություններ, Երևան: ԵՊՀ հրատ., էջ 12-44:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

600-700 բառային ծավալի շրջանակում կազմե՛ք ընտրված տարածաշրջանում տարածաշրջանայնացման ձևերի մասին տեղեկանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] Ն. Գալստյան (2011). Եվրոպական ինտեգրման տեսություն և արդիականություն: Դասախոսությունների ժողովածու, Երևան: ԵՊՀ հրատ.

[2] E. Best (1997). Capacities for Regional Integration: Conceptual Framework for Comparative Analysis // *Free Trade Agreements and Customs Unions: Experiences, Challenges and Constraints*, Maastricht, TACIS/European Commission – EIPA, pp. 51-79.

[3] F. Laursen (2003). Comparative regional integration: theoretical perspectives, Hampshire: Ashgate Publishing Company.

[4] Ю. Шишков, ЕС как стимулятор интеграционных процессов в других регионах мира [Online]. Available: www.edc.spb.ru/-activities/conferences/40years/shishkov.html. [Accessed 15.11.2018].

[5] A. M. El-Agraa (1999). Regional Integration. Experience, Theory and Measurement, London: MacMillan Press LTD.

[6] К. Якобайт (1995). Теория региональной интеграции // *Региональная интеграция в Центральной Азии*, Берлин, Германский фонд международного развития, 1995, с. 1-22.

[7] R. Carbaugh (2005). International Economics, 10th ed., Ohio: Thomson-South-Western.

[8] W. J. Kehoe (2006). Conference Proceedings, Academy of Business Education, Financial Education Association //*Regional and Global Economic Integration: Implications for Global Business*, Savannah, GA, the U.S.

[9] А. Бельянинов (2013). Региональная интеграция в условиях глобализации, *Обозреватель-Observer,* No. 2, с. 43-57.

[10] О. Буторина (2011). Региональная интеграция: основные понятия // *Европейская интеграция: Учебник*, О. Буторина, ред., Москва, Издательский Дом «Деловая литература», с 12-30.

[11] А. Книга (2004). В. Пархаев, Европейская интеграция: Учеб. пособие, Барнаул: Изд-во АлтГТУ.

[12] Ժ. Սարգսյան (2013). Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների պատմական ակնարկ. Եվրամիությունը՝ որպես ամենախոշոր տարածաշրջանային միջպետական ինտեգրացիոն միավորում,*Տարածաշրջանային խնդիրներ,* No. 2, էջ 108-116:

[13] Т. Кирабаев (2014). Теоретические подходы к исследованию процессов регионализации и региональной интеграции, *Международная жизнь. Проблемы внешней политики, дипломатии и национальной безопасности,* No. 11, pp. 73-95.

[14] К. Кулматов, А. Митрофанова (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[15] C. Chase-Dunn (2015). Dependency Theory // *International Encyclopedia of the Social & Behavioral Sciences*, J. D. Wright, Ed., Amsterdam, Elsevier B.V., pp. 196-198.

[16] M. Burgess (2009). Federalis // *European Integration Theory. 2nd Edition*, A. Wiener and T. Diez, Eds., Oxford, Oxford University Press, pp. 25-44.

[17] A. Niemann and P. C. Schmitter (2009). Neofunctionalism // *European Integration Theory*, Oxford, Oxford University Press, pp. 45-66.

[18] I. Bache, S. George and S. Bulmer (2011). Politics in the European Union, 3 ed., Oxford: Oxford University Press.

[19] S. Hix (2005). The political system of European Union, 2 ed., New York: Palgrave MacMacmillan.

[20] A. Moravcsik and F. Schimmelfennig (2009). Liberal Intergovernmentalism // *European Integration Theory*, Oxford, Oxford University Press, pp. 67-90.

[21] М. Стрежнева (2011). Теории интеграции // *Европейская интеграция: учебник*, О. Буторина, ред., Москва: «Деловая литература», с. 31-41.

[22] C. Closa (2010). Differentiated Integration and Flexibility in the EU under the Lisbon Treaty: challenges for the Trio Presidency, *Analysis of the Real Instituto Elcano,* pp. 1-6, 26.04.

[23] A. Jones (2008). A Glossary of the European Union, Edinburgh: Edinburgh University Press, 2008.

ԹԵՄԱ 6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ կկատարենք միջազգային տարածաշրջանայնության (ռեգիոնալիզմի) էությանը, դրա բնորոշումներին, «հին» ու «նոր», կոշտ ու փափուկ, բաց ու փակ տիպերին, ցածր ու բարձր մակարդակներին, ինչպես նաև միջտարածաշրջանայնությանն ու դրա տեսակներին:

6.1. Միջազգային տարածաշրջանայնության բնորոշումները

Տարածաշրջանայնությունը սերտորեն փոխկապակցված է տարածաշրջանայնացմանը, միջազգային տարածաշրջանագիտության առանցքային հասկացություններից է, ինչպես «տարածաշրջանը» կամ «տարածաշրջանայնացումը»: Սակայն մասնագիտական գրականության մեջ միջազգային տարածաշրջանայնության բնորոշման հարցում համաձայնություն չկա, որի պատճառը ոչ միայն «տարածաշրջան» հասկացության մեկնաբանության տարբեր մոտեցումներն են, այլ նաև «տարածաշրջանայնացում» ու «տարածաշրջանայնություն» հասկացությունների հարաբերակցության շուրջ տարակարծությունները: Պայմանականորեն տարածաշրջանայնության գիտական բնորոշումները կարելի է բաժանել երեք խմբի՝ համալիր, գործընթացահենք և արդյունքահենք: Այսպես, համակցված կամ *համալիր* մոտեցմամբ տարածաշրջնայնացման ու տարածաշրջանայնության հասկացութային հարաբերակցության ինքնատիպ մոտեցում է առաջ քաշում **Էնդրյու Հարելը**՝ տարածաշրջանայնացումը համարելով տարածաշրջանայնության տեսականորեն ու գործնականում փոխկապակցված, մասամբ համընկնող հինգ տարատե-

սակներից մեկը: ***Տարածաշրջանայնության*** այդ հինգ ***կարգերն*** են.

1. տարածաշրջանայնացումը՝ տարածաշրջանի ներսում ոչ ֆորմալ ինտեգրումը, որի խթանը տարատեսակ գործարար շրջանակների, հասարակական կազմակերպությունների ու մասնավոր անձանց միջև սոցիալ-տնտեսական փոխազդեցությունն է (*փափուկ տարածաշրջանայնություն*),

2. տարածաշրջանային ինքնագիտակցության և ինքնության ձևավորումը՝ տարածաշրջանի բնակիչների մոտ որոշակի հանրույթին պատկանելու գիտակցության ու պատկերացման ձևավորումը, որն ի հայտ է գալիս ներքին (ընդհանուր մշակույթ, պատմություն, ավանդույթներ) ու արտաքին («մենքից» տարբերվող «ուրիշի», «օտարի» կերպարը) գործոնների ազդեցությամբ (*կոգնիտիվ-ճանաչողական տարածաշրջանայնություն*),

3. միջպետական տարածաշրջանային համագործակցությունը՝ միջպետական-միջկառավարական համաձայնագրերի կնքումը, միջազգային համապատասխան ռեժիմների ստեղծումը, որը կարող է ուղեկցվել նաև միջազգային-տարածաշրջանային կազմակերպությունների հիմնադրմամբ, և որի նպատակը մասնակից-պետությունների քաղաքականությունների ներդաշնակեցումն է (*համագործակցային տարածաշրջանայնություն*),

4. պետությունների կողմից առաջ մղվող տարածաշրջանային ինտեգրումը՝ տարածաշրջանի պետությունների կողմից նրանց միջև ապրանքների, մարդկանց, կապիտալի ու ծառայությունների փոխանակության խոչընդոտների կրճատմանը կամ վերացմանն ուղղված քաղաքականությունը *(ինտեգրացիոն տարածաշրջանայնություն)*,

5. տարածաշրջանային համախմբումը՝ նախորդ չորս գործընթացների զարգացման համակցված արդյունքը, որը կարող է

դրսևորվել և՛ որպես տարածաշրջանի պետությունների՝ արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությունների տարածաշրջանային մակարդակ, և՛ որպես տարածաշրջանային խնդիրների նկատմամբ տարածաշրջանային քաղաքականություն (*տարածաշրջան-սուբյեկտ*) [1, pp. 37-45]:

Հաջորդ՝ *գործընթացահենք* մոտեցմամբ **Տանյա Բյորզելն** ու **Թոմաս Ռիսեն** տարածաշրջանայնությունը համարում են առնվազն երեք պետությունների միջև տարածաշրջանային ֆորմալ ինստիտուտների ու կազմակերպությունների ստեղծման ու խթանման՝ գերազանցապես պետությունների կողմից նախաձեռնվող-կառավարվող գործընթաց [2, p. 7]: Նմանատիպ բնորոշում է տալիս նաև **Ջոզեֆ Նայը**՝ տարածաշրջանային հիմքի վրա միջպետական ընկերակցությունների կամ խմբավորումների ձևավորում [3, p. vii]: Այս մոտեցմամբ, ինչպես տեսնում ենք, տարածաշրջանայնությունը նույնացվում է տարածաշրջանի ձևավորման գործընթացի՝ տարածաշրջանայնացման, իսկ ավելի կոնկրետ, ըստ Հեթնեի, ձևային տարածաշրջանի փուլի հետ:

Վոսկրեսենսկին առաջարկում է *արդյունքահենք* մոտեցում՝ (քաղաքական) տարածաշրջանայնությունը դիտարկելով որպես փոխհարաբերություն սահմանակից այնպիսի պետությունների աշխարհագրական խմբի ներսում, որոնք ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ, փոխազդեցության ու փոխգործակցության ինստիտուցիոնալացման բարձր մակարդակ, որն իրականացվում է բազմակողմ ֆորմալ կառուցվածքի միջոցով [4, c. 107]: Այսպիսի մոտեցման դեպքում շեշտադրվում է ոչ թե տարածաշրջանի պետությունների միջև փոխազդեցության ինստիտուցիոնալացման (կամ տարածաշրջանայնացման) գործընթացը, այլ հենց այդ գործընթացի արդյունքը: Այսինքն՝ եթե տարածաշրջանայնացումը տարածաշրջանի ձևավորման՝ պետական-կառա-

վարական մարմինների և/կամ ոչ պետական-ոչ կառավարական դերակատարների (նախևառաջ բիզնես-առևտրային կազմակերպությունների) կողմից նախաձեռնվող-խթանվող գործընթաց է, ապա տարածաշրջանայնությունը տարածաշրջանայնացման արդյունքում միջպետական-միջկառավարական մակարդակում տվյալ տարածաշրջանի՝ որպես միասնական օրգանիզմի ձևակերպման, արտաքին հարաբերություններում այդ տարածաշրջանին սուբյեկտի կարգավիճակ տալն է:

Հարկ է նշել, որ, ինչպես իրավամբ պնդում է Էռնսթ Հասը, անհրաժեշտ է տարբերակել փոխկապակցված, բայց չհամընկնող «տարածաշրջանային ինտեգրումը», «տարածաշրջանային համագործակցությունը», «տարածաշրջանային կազմակերպությունը» և «տարածաշրջանայնությունը» [5, p. 610]: Առաջնորդվելով Հասի մոտեցմամբ՝ տարածաշրջանայնությունը թերևս կարելի է բնորոշել որպես ***տարածաշրջանի պետությունների էլիտաների միջև խորը և լայն փոխհամաձայնություն տարածաշրջանի ներքին ու արտաքին խնդիրների շուրջ, որի արդյունքում այդ խնդիրների լուծման նպատակով այդ պետությունները որդեգրում են միասնական, ներդաշնակեցված ռազմավարություն տարածաշրջանի պետությունների միջև***: Տարածաշրջանայնության այսպիսի արդյունքահենք բնորոշման դեպքում շեշտադրվում են ոչ թե որևէ տարածաշրջանի ներսում պետությունների, ոչ պետական դերակատարների փոխազդեցությունների, միասնացման, փոխկապվածության սկզբնավորումն ու զարգացումը, այլ դրանց արդյունքը: Այսինքն՝ եթե տարածաշրջանայնացումը տարածաշրջանի ձևավորման գործընթացն է, ապա տարածաշրջանայնությունն այդ գործընթացի արդյունքում ի հայտ եկած միասնականության դրսևորումն է: Եվ եթե տեսականորեն տարածաշրջանային այդ միասնականությունը

կարող է դրսևորվել ինչպես միջազգային կյանքի բոլոր, այնպես էլ առանձին ոլորտներում՝ տնտեսաքաղաքական, ռազմաքաղաքական, սոցիոմշակութային և այլն, ապա գործնականում հանդիպում ենք տարածաշրջանայնության համընդհանուր (օրինակ՝ եվրոպական տարածաշրջանայնությունը) կամ բազմոլորտ (օրինակ՝ հարավամերիկյան և ասիական տարածաշրջանայնությունը) ընդգրկման դեպքերի:

6.2. Հին և նոր, փակ և բաց, կոշտ և փափուկ տարածաշրջանայնություն

Մեթյու Դոյջն առանձնացնում է տարածաշրջանայնության ***էվոլյուցիայի*** երեք ***փուլ***՝ «կայսերական» (1920-1930-ական թթ.), «փակ» կամ «հին» (Երկրորդ աշխարհամարտի ավարտից մինչև 1970-ական թթ. կեսերը) և «բաց» կամ «նոր» (սկսած 1980-ական թթ. վերջերից): «*Կայսերական» տարածաշրջանայնությունը*, ըստ Մ. Դոյջի, ի հայտ է եկել երկու աշխարհամարտների միջև ընկած ժամանակահատվածում կայսերապաշտական խմբավորումների ներսում: Այս շրջանում նախաձեռնությունները կոչված էին սպասարկելու այդ խմբավորումներում գերակայող գերիշխան-տերությունների տնտեսական, քաղաքական ու ռազմական շահերը: Արդյունքում այդ խմբավորումները վերածվեցին միմյանց հետ մրցակցող «փակ տարածաշրջանների», որոնք ապահովում էին հովանավոր տերության, այլ ոչ թե բոլոր մասնակից պետությունների զարգացումը: Ուստի, ինչպես իրավամբ նկատում է Դոյջը, այսպիսի «ակումբների» վրա հիմնված միջազգային կարգն ի զորու չեղավ ստեղծել միջազգային գործակցային համակարգ, փոխարենը գերիշխանների միջև կոշտ մրցակցության, նրանց փոխհարաբերություններում լարվածու-

թյան աճը հանգեցրեց նոր աշխարհամարտի: Երկրորդ աշխարհամարտից հետո ի հայտ եկած *«փակ» տարածաշրջանայնությունը*, ի տարբերություն կայսերականի, հիմնված էր մասնակից պետությունների ինքնիշխան հավասարության վրա և ուղղված էր դեպի ընդհանուր օգուտը: Այդուհանդերձ, ինչպես նշում է հեղինակը, «փակ» տարածաշրջանայնությունն իր նախորդի նմանությամբ պահպանում էր դեպի ներս ուղղվածությունը, համագործակցության ոլորտների համեմատաբար սակավությունը և հովանավորչական հատկանիշները: Մասնավորապես այն ուղղված էր մասնակիցների միջև միասնական-ընդհանուր շուկայի ձևավորմանն ու ընդլայնմանը, ինչպես նաև խմբավորման մասնակից պետությունների արտադրողներին արտաքին՝ խմբավորումից դուրս գտնվող պետությունների արտադրողներից պաշտպանելուն: Որոշ դեպքերում (օրինակ՝ Եվրոպայում) «փակ» տարածաշրջանայնությունն ուներ նաև անվտանգության բաղադրիչ՝ ուղղված լինելով հետպատերազմյան խաղաղության ինստիտուցիոնալացմանը և մասնակից պետությունների միջև պատերազմի հիմքերի վերացմանը: Երկբևեռ աշխարհակարգի փլուզմամբ մեկնարկած *«բաց» տարածաշրջանայնությունն* իր հերթին բնորոշվում է պետությունների ու հասարակությունների միջև համաշխարհային մասշտաբով փոխկապվածության ու փոխկախվածության աճով, փոխազդեցությունների ինտենսիվացմամբ: Եթե «հին» տարածաշրջանայնությունը ծագմամբ գերազանցապես պետականակենտրոն էր, միջկառավարական «գործարքների» արդյունք, ապա «նոր» տարածաշրջանայնությունը տնտեսական անդրազգային-անդրպետական տարածությունների և համաշխարհայնացման գործընթացներին արձագանքելու անհրաժեշտության արդյունք է: Այս պայմաններում թեև ազգային պետությունը շարունակում է ղեկավարել տարա-

ծաշրջանայնությունը, այդուհանդերձ վերջինս արդեն և՛ արձագանք է մասնավոր շուկայի դերակատարների գործունեությանը, և՛ ազգային-պետական կառավարությունների քաղաքական առաջնահերթություն: Ավելին, ժամանակակից՝ «նոր-բաց» տարածաշրջանայնությունը, ի տարբերություն «հին-փակի», այլևս գերազանցապես տնտեսական չէ և ներառում է թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, սոցիալական, մշակութային ոլորտներ, և դրա օրակարգը չի սահմանափակվում միայն տարածաշրջանային առևտրային ռեժիմների կամ ռազմական դաշիքների ստեղծմամբ: Բացի դրանից, եթե «հին-փակին» բնորոշող էին դեպի ներս ուղղվածությունն ու հովանավորչությունը՝ մասնակից պետությունների տնտեսություններն արտաքին մրցակիցներից պաշտպանելու նպատակով, ապա «նոր-բացն» ուղղված է դեպի դուրս՝ դեպի արտաքին աշխարհը՝ նպատակ ունենալով արդյունավետորեն ներգրավվել և մրցակցել համաշխարհային շուկայում, ոչ թե մեկուսանալ դրանից: Այդ հանգամանքն ստիպում է տարածաշրջանային կազմակերպություններին փոխազդել միմյանց հետ՝ այդկերպ ծնունդ տալով և զարգացնելով նաև միջտարածաշրջանայնությունը [6, pp. 3-12]:

«Հին» և «նոր» տարածաշրջանայնության գլխավոր բնութագրիչների մասին խոսում է նաև **Բ. Հեթնեն**՝ նշելով դրանց հետևյալ առանցքային տարբերությունները:

- Հին տարածաշրջանայնությունը ձևավորվել է «սառը պատերազմի» երկբևեռ, իսկ նորը՝ «սառը պատերազմի» ավարտից հետո ձևավորված բազմաբևեռ աշխարհակարգի տրամաբանության համատեքստում, որոնցից առաջինի պայմաններում «կեղծ տարածաշրջանները» հակված էին վերարտադրելու երկբևեռայնությունն իրենց շրջանակներում:

- Եթե հին տարածաշրջանայնությունը ձևավորվել է «վերևից»՝ հաճախ գերտերությունների արտաքին միջամտությամբ, ապա նորը տարածաշրջանների ներքին գործընթացների արդյունք է, երբ մասնակից երկրներն ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար զգում են փոխգործակցության խորացման անհրաժեշտություն:
- Եթե հին տարածաշրջանայնությունն ուղղված էր դեպի ներս և նպաստում էր տնտեսական հովանավորչության ի հայտ գալուն, ապա նորն առավել «բաց» է և համատեղելի փոխկապակցված համաշխարհային տնտեսության հետ, որը, սակայն, չի բացառում տարածաշրջանային տնտեսական ռեժիմի ձևավորումը:
- Հին տարածաշրջանայնության նպատակներն առավել միակողմանի ու հստակ էին (անվտանգություն, կայունություն և այլն), իսկ նորը ներառում է բազմաչափ նպատակների համալիր (նաև սոցիալ-տնտեսական զարգացում, շրջակա միջավայր և այլն):
- Եթե հին տարածաշրջանայնությունը կենտրոնացած էր միջպետական հարաբերությունների վրա, ապա նորը դարձել է համաշխարհային կառուցվածքային փոխակերպման մաս, որում ոչ կառավարական դերակատարները ևս ունեն ազդեցիկ դերակատարում [10, pp. 7-8]:

Հարկ է նկատել, որ նոր տարածաշրջանայնությունը չի սահմանափակվում ազատ առևտրով և ունի տնտեսական, քաղաքական, սոցիալական ու մշակութային չափումներ, որի համատեքստում առաջնային նշանակություն են ստանում տարածաշրջանային ինքնության ու միասնականության հարցերը: Նոր տարածաշրջանայնությունը չի կարելի դիտարկել համաշխարհայնացումից անկախ, քանզի արդի համաշխարհային կարգը բնու-

թագրվում է տարբեր տարածաշրջաններին ներհատուկ առանձնահատկություններին զուգահեռ տարածաշրջանայնացման զարգացման ընդհանրական օրինաչափություններով:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է տարածաշրջանայնության նաև ***«կոշտ» և «փափուկ» տիպերի*** մասին: Այսպես, **Լուիզա Ֆոսեթի** մոտեցմամբ *կոշտ* տարածաշրջանայնության դեպքում տարածաշրջանային փոխազդեցությունները ֆորմալացված են և կառավարվում, կանոնակարգվում են միջպետական համաձայնությունների ու կազմակերպությունների միջոցով, իսկ *փափուկի* դեպքում գլխավոր նպատակը տարածաշրջանային ինքնության ու ինքնագիտակցության ձևավորումն է տարածաշրջանային խմբերի ու ցանցերի համախմբման միջոցով [8, p. 433]: Մասնագետները նշում են, որ կոշտ տարածաշրջանայնությունը բնորոշվում է տնտեսական ուղղվածություն ունեցող տարածաշրջանային ինտեգրման միջպետական ու միջկառավարական համաձայնագրերով, իսկ փափուկը՝ սոցիալական փոխազդեցությունների շեշտադրվածությամբ, քաղաքացիական հասարակության դերակատարների ներգրավմամբ, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական ինտեգրման կարևորության նվազմամբ [9, pp. 45-46]:

Ընդհանուր առմամբ, *կոշտ* տարածաշրջանայնության դեպքում նախաձեռնությունն ունի «վերից վար» ուղղվածություն, այսինքն՝ նախաձեռնողի դերում հանդես է գալիս պետությունը: Փոխգործակցությունն այս դեպքում ունի ինստիտուտացված-ձևայնացված բնույթ և բնութագրվում է հստակ (իշխանական) աստիճանակարգության առկայությամբ՝ հիմնված վարչական ու դիվանագիտական գերատեսչությունների որոշիչ ազդեցության վրա, որոնք հստակորեն առաջնորդվում են պետական շահի մասին ռեալիստական պատկերացումներով:

Փափուկ տարածաշրջանայնությունը ձևավորվում է «վարից վեր»՝ շարժընթացի լայն հնարավորություններ ապահովելով հորիզոնական, ապակենտրոնացված աստիճանակարգության մակարդակում փոխգործակցող սուբյեկտների ինքնավարության ու բազմազանության համար: Այս դեպքում գերիշխող է «բաց աշխարհագրությունը»՝ հիմնված ոչ այնքան տարածքային մերձության, որքան ընդհանուր ինքնության ձևավորման վրա: Ըստ որում, առաջնային դերակատարումն այստեղ վերապահված է ոչ կառավարական և/կամ ենթաազգային ինստիտուտներին, որոնց միջև ինտեգրումը կառուցված է ցանցային հայեցակարգի վրա: Այստեղ փոխգործակցությունը համատեքստային է, առավել ճկուն ու պակաս ձևայնացված: Այսպիսի ընկալումը ներառում է կոգնիտիվիզմի ու ինստիտուցիոնալիզմի մոտեցումներ՝ ենթադրելով, մասնավորապես, որ «կոգնիտիվ» (ճանաչողական, իմացական) կապիտալն էականորեն ազդում է տարածաշրջանի ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման վրա, այսինքն՝ գաղափարների բացակայության դեպքում, մի կողմից, ինստիտուտներն ուղղակի չէին կարող ձևավորվել, իսկ մյուս կողմից՝ գաղափարների ազդեցությունը որոշումների ընդունման ոլորտի վրա կարող է ամրապնդվել արդյունավետ ինստիտուտների միջոցով:

Բ. Հեթնեն նշում է նաև ***տարածաշրջանայնության*** մի քանի ***չափումներ***՝ համագործակցության ուղղություններ:

- *Առևտրային խմբավորումները*, որոնց քանակական կտրուկ աճ նկատվեց հատկապես «հին» տարածաշրջանայնության շրջանում՝ 1950-1960-ական թթ.: Դրանք ուղղված էին դեպի «ներս» և ունեին հովանավորչական բնույթ՝ նպատակ ունենալով մասնակից պետությունների շուկաները և արտադրողներին պաշտպանել արտաքին մրցակցությունից:

- *Արժութային տարածաշրջանայնությունը* առևտրային խնդիրների վրա շեշտադրվածության պատճառով դուրս է եղել մասնագիտական շրջանակների ուշադրությունից: Այդ տարածաշրջանայնության գլխավոր նպատակ հեղինակը համարում է ֆինանսական կայունությունը, որն իր հերթին, ինչպես առևտրային տարածաշրջանայնության դեպքում, պահանջում է մասնակիցների հավաքական գործողություններ և նրանց ֆինանսաարժութային փոխհարաբերությունների կարգավորման համապատասխան գործիքակազմ, այդ թվում՝ տարածաշրջանային համապատասխան ինստիտուտների առկայություն:
- *Զարգացման տարածաշրջանայնությունը* ենթադրում է աշխարհագրական տարածաշրջանի շրջանակում դրա պետությունների միջև համաձայնեցված գործողություններ նրանց միջև տնտեսական փոխլրացման ու տնտեսական ներուժի ամրապնդման ուղղությամբ: Դա կարող է հիմնված լինել ինչպես առևտրային համաձայնագրերի, այնպես էլ ավելի ընդգրկուն զարգացման ռազմավարությունների վրա, ներառել ու համակցել տնտեսական զանազան բաղադրիչներ (օրինակ՝ ներդրումներ, վճարումներ, արժութային ինտեգրում և ներդաշնակեցում), տնտեսության առանձին ճյուղերում (օրինակ՝ տրանսպորտ ու հաղորդակցություն) համագործակցությունը:
- *Անվտանգության տարածաշրջանայնությունը* եղել է «հին» տարածաշրջանայնության առաջին ալիքի հիմնական բաղադրիչը. այդ շրջանի տարածաշրջանային ինտեգրումը գերազանցապես ուներ տնտեսական բնույթ և խաղաղության ու անվտանգության ամրապնդման նպատակներ: Սակայն այսօր հեղինակի համոզմամբ անվտանգության հարցերով տարածաշրջանային փոխգործակցությունն ստացել է ինքնուրույն տրամաբանություն: Այն ներկայումս դիտարկվում է որպես տարա-

ծաշրջանի պետությունների և այլ դերակատարների գործողությունների համախումբ, որի նպատակը մասնակիցների հակամարտային ու հակամարտածին փոխհարաբերությունների վրա հիմնված տարածաշրջանը զարգացնելն է, այն անվտանգության ընկերակցություն դարձնելը [10, pp. 550-554]:

Հեթնեն խոսում է նաև տարածաշրջանայնության ***ցածր ու բարձր մակարդակների*** մասին: *Ցածր մակարդակի* տարածաշրջանայնությունը նկատվում է ենթատարածաշրջանի կամ միկրոտարածաշրջանի շրջանակում և նպատակ ունի պաշտպանելու դրան մասնակցող ու համեմատաբար թույլ զարգացած պետություններին մակրոտարածաշրջանի զարգացած միջուկ-պետություններից: Տարածաշրջանայնության այս մակարդակը հիմնականում պակաս ինստիտուցիոնալացված-ձևայնացված է, պակաս չափով է ազդվում պետական ու քաղաքացիական հասարակության դերակատարներից, ավելի արձագանքող է շուկայի մասնավոր սեկտորի շահերին, քան տարածաշրջանայնությունը մակրոտարածաշրջանի մակարդակում: Վերջին շրջանում թե՛ ցածր, թե՛ բարձր մակարդակի տարածաշրջանայնության մեջ նկատելի է ոչ կառավարական դերակատարների ակտիվության ու ազդեցության նշանակալի աճ: *Բարձր մակարդակի* տարածաշրջանայնությունը՝ միջտարածաշրջանայնությունը, տարածաշրջանայնության տեսական բարձրագույն մակարդակն է, որը բնորոշվում է աշխարհի տարբեր տարածաշրջանների պետությունների ու տարածաշրջանային խմբավորումների միջև փոխկապակցության ու փոխկախվածության աճով այնպես, ինչպես պետությունների փոխազդեցությունները որևէ կոնկրետ տարածաշրջանի ներսում [10, pp. 557-558]:

6.3. Միջտարածաշրջանայնություն

Համաշխարհայնացման ու տարածաշրջանայնացման գործընթացների ինտենսիվացման, դրանց փոխկապակցման ու փոխազդեցության արդյունքում աստիճանաբար ի հայտ է եկել մի երևույթ, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «միջտարածաշրջանայնություն» (Interregionalism) անունով: Եթե միջազգային տարածաշրջանայնացման ու տարածաշրջանայնության երևույթները ներկայումս լայնորեն ուսումնասիրվում են, կան արդեն գիտական քիչ թե շատ կայացած ավանդույթներ ու հասկացութային համակարգ, ապա միջտարածաշրջանայնության ուսումնասիրությունները գտնվում են զարգացման սկզբնական փուլում: Դրանով պայմանավորված՝ միջտարածաշրջանայնությունը պակաս չափով է հայեցակարգայնացված. դրա մեկնաբանությունները, մեկնաբանման ու տիպավորման մոտեցումները համեմատաբար սակավ են:

Միջտարածաշրջանայնությանը վերաբերող գրականության մեջ այդ հասկացությամբ բնորոշում են տարածաշրջանային երկու խմբավորումների, տարածաշրջանային որևէ խմբավորման և այլ տարածաշրջանում գտնվող որևէ պետության կամ դրանց խմբի համագործակցությունը, երբեմն՝ տարբեր տարածաշրջաններում գտվող պետությունների չինստիտուցիոնալացված խմբերի միջև փոխազդեցությունը: Չնայած այդ երևույթի դրսևորման բազմազանությանը՝ առանցքային ու անհրաժեշտ պայմանը տարբեր տարածաշրջաններում գտնվող սուբյեկտների փոխազդեցության առկայությունն է:

Միջտարածաշրջանայնությունը դիտարկելով տարածաշրջանային որևէ կազմակերպության տեսանկյունից՝ ***Հայեր Հենգին*** առանձնացնում է այդ կազմակերպության արտաքին

հարաբերությունների երեք հնարավոր ձև՝ հարաբերությունները այլ տարածաշրջանային կազմակերպության հետ (օրինակ՝ ԵՄ-ԱՍԵԱՆ), այլ տարածաշրջանում գտնվող պետության հետ (օրինակ՝ ԵՄ-Հնդկաստան) և ուղղակի կամ անուղղակի ներգրավվածությանը միջտարածաշրջանային այլ մեխանիզմներում (օրինակ՝ Եվրամեդ) [11, p. 34]: Նրա համոզմամբ, կազմակերպություն-կազմակերպություն համագործակցային ձևը միջտարածաշրջանայնության «իդեալական տեսակ» է, որը թեև բնորոշ է «հին» տարածաշրջանայնությանը, այն այսօր էլ լայն տարածում ունի: Միջտարածաշրջանայնության կազմակերպություն-պետություն ձևաչափը, որպես կանոն, ստեղծվում է գլխավոր առևտրային կամ անվտանգային գործընկերների հետ: Համագործակցային այս ձևաչափը ևս այսօր լայն տարածում ունի: «Նոր» տարածաշրջանայնությանը բնորոշ է կազմակերպության ներգրավումը միջտարածաշրջանային այլ մեխանիզմներում, որի գործնական օրինակներն ու տեսակներն այսօր գնալով աճում են, որոշ տեսակներն էլ աստիճանաբար նմանվում են տարածաշրջանայնության ձևերին: Միջտարածաշրջանայնության այս ձևում հեղինակը նշում է երեք *տարատեսակ*՝

1. փոխհարաբերությունները որևէ տարածաշրջանային կազմակերպության և այլ տարածաշրջանում գտնվող պետությունների քիչ թե շատ կոորդինացված խմբի միջև (ԱՍԵՄ՝ ԱՍԵԱՆ-Եվրոպա գագաթնաժողովներ),

2. փոխհարաբերությունները տարբեր տարածաշրջաններ կամ ենթատարածաշրջաններ ներկայացնող պետությունների քիչ թե շատ կոորդինացված երկու խմբերի միջև (Արևելյան Ասիա-Լատինական Ամերիկա համագործակցության համաժողով),

3. փոխհարաբերությունները երկու կամ ավելի տարածաշրջաններ կամ ենթատարածաշրջաններ ներկայացնող պետությունների, նրանց խմբերի և տարածաշրջանային կազմակերպությունների միջև (ԱՊԵԿ՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը) [11, pp. 38-39]:

Շինտարո Համանական իր հերթին նշում է միջտարածաշրջանայնության հինգ ձև (տե՛ս նաև ***Գծապատկեր 1***) [12, pp. 5-6].

1. Բուն *միջտարածաշրջանայնություն* (Interregionalism)՝ տարածաշրջան-տարածաշրջան համագործակցությունը, որն իրականացվում է միջպետական տարածաշրջանային երկու ու ավելի խմբավորումների՝ միջպետական տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով: Դրա տիպային օրինակ են Եվրոպա-Ասիա համագործակցությունը ԵՄ-ԱՍԵԱՆ, Եվրոպա-Հարավային Ամերիկա համագործակցությունը ԵՄ-ՄԵՐԿՈՍՈՒՐ, Հարավարևելյան Ասիա–Հարավային Ամերիկա համագործակցությունը ԱՍԵԱՆ-ՄԵՐԿՈՍՈՒՐ փոխգործակցության տեսքով:

Հարկ է նկատել, որ միջտարածաշրջանայնության այս ձևի առաջամարտիկը և միակ հանգույցը տևական ժամանակ եղել է ԵՄ-ն, բայց «սառը պատերազմի» ավարտից հետո տարածաշրջանային այլ խմբավորումներ (ՍԱԱՐԿ-ԱՍԵԱՆ, ԱՍԵԱՆ–ՄԵՐԿՈՍՈՒՐ, ՄԵՐԿՈՍՈՒՐ-ԽՏՀ և այլն) ևս սկսեցին զարգացնել կապերը միմյանց հետ :

2. *Արտատարածաշրջանայնությունը* (Extraregionalism), որը տարածաշրջանային որևէ խմբավորման և դրանից դուրս գտնվող որևէ մի պետության համագործակցությունն է (ԵՄ-Ճապոնիա, ԵՄ-Հնդկաստան, ԱՍԵԱՆ-Ճապոնիա, ԱՍԵԱՆ-Ավստրալիա):

Որոշ հեղինակների կարծիքով արտատարածաշրջանայնությունը կարող է լինել *ինստիտուցիոնալացված*՝ հիմնված իրավա-

պայմանագրային հարաբերությունների, պարբերական-կանոնավոր հանիպումների վրա, և *չինստիտուցինալացված*, երբ այդ երկխոսությունն իրավականորեն կանոնակարգված չէ, և հանդիպումները կանոնավոր չեն կազմակերպվում: Նրանք արտատարածաշրջանայնության ձև են համարում նաև որևէ տարածաշրջանային կազմակերպությունում այլ տարածաշրջանում գտնվող պետությանը դիտորդի կամ գործընկերոջ կարգավիճակի տրամադրումը [13, pp. 105-106]:

3. *Խաչաձև տարածաշրջանայնությունը* (Cross-regional), որը տարածաշրջանային տարբեր խմբավորումներին պատկանող պետությունների երկկողմ համագործակցությունն է (Գերմանիա-Ճապոնիա):

4. *Անդրտարածաշրջանայնություն* (Trans-regionalism), երբ տարածաշրջանային երկու ու ավելի խմբավորումներին պատկանող երկու ու ավելի պետություններ ստեղծում են նոր խմբավորում: Սրա օրինակ Համանական նշում է Աֆրիկա-Եվրոպա 5+5 համագործակցության ձևաչափն Ալժիրի, Թունիսի, Լիբիայի, Մարոկկոյի, Մավրիկիոսի և Իսպանիայի, Իտալիայի, Մալթայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի միջև, ինչպես նաև Իբերոամերիկյան ամենամյա գագաթնաժողովը Լատինական Ամերիկայից 19 և Եվրոպայից 3 երկրների (Անդորրա, Իսպանիա, Պորտուգալիա) մասնակցությամբ:

5. *Համատարածաշրջանայնությունը* (Pan-regional cooperation), որը միջտարածաշրջանայնության հիպոթետիկ ձև է և կարող է ներառել տարածաշրջանային տարբեր խմբավորումների բազմաթիվ անդամների: Այդպիսի համագործակցության օրինակ է Համաեվրասիական համագործակցությունը, որը կարող է ներառել Եվրոպան, Արևելյան, Հարավային, Արևմտյան և Կենտրոնական Ասիան, ինչպես նաև Ռուսաստանը:

Գծապատկեր 1. Միջտարածաշրջանայնության հինգ ձևերը՝ ըստ Շ. Համանակայի

Inter-regionalism (Europe-Asia)



Extra-regionalism (EU-Japan)



Cross-regionalism (Germany-Japan)



Trans-regionalism (Ibero-American Summit)



Pan-regionalism (Pan-Eurasian)



Համաշխարհային մասշտաբով միջտարածաշրջանայնացման գործընթացները ***Յուրգեն Ռյուլանդը*** բացատրում է մի քանի պատճառով:

1. Միջտարածաշրջանայնությունը համաշխարհային մասշտաբով «Եռյակին»՝ Հյուսիսային Ամերիկային, Արևեմտյան Եվրոպային, Հարավային ու Հարավարևելյան Ասիային բալանսավորելու մեխանիզմների փնտրտուքի արդյունք է: Այդ իմաստով հեղինակն ԱՍԵՄ-ն ու ԱՊԵԿ-ը դիտարկում է որպես «Եռյակի» երկու բաղադրիչների կոալիցիա՝ ընդդեմ երրորդի:

2. Միջտարածաշրջանայնությունը՝ գլոբալ կառավարման մեխանիզմ: «Եռյակի» կազմակերպություններն ու պետությունները փորձում են գլոբալ տնտեսաքաղաքական հարթակներ դուրս գալ միջտարածաշրջանային հարթակներում մասնակիցների միջև արդեն համաձայնեցված դիրքորոշումներով՝ այդկերպ, մի կողմից, դյուրացնելով գլոբալ մակարդակում որոշումների ընդունումը, մյուս կողմից՝ պաշտպանելով միջտարածաշրջանային հարթակների մասնակիցների հավաքական շահերը գլոբալ մակարդակում:

3. Միջտարածաշրջանայնությունը նպաստում է նաև դրան մասնակցող տարածաշրջանային խմբավորումների փոխհարաբերություններում «ուրիշի» կերպարի ձևավորմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է այդ խմբավորումների ներսում հավաքական՝ տարածաշրջանային ինքնության ձևավորմանը [14, pp. 62-67]:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ մասնագիտական հանրույթում չկա միջազգային տարածաշրջանայնության միասնական՝ բոլորի համար ընդունելի ըմբռնում:

2. Ինչո՞վ են տարբերվում միջազգային տարածաշրջանայնության բնորոշման համալիր, գործընթացահենք ու արդյունքահենք մոտեցումները:

3. Ինչպե՞ս է մեկնաբանվում տարածաշրջանայնությունը համալիր-համակցված մոտեցմամբ: Ի՞նչն է շեշտադրվում այս մոտեցման շրջանակում:

4. Ինչպե՞ս է մեկնաբանվում տարածաշրջանայնությունը գործընթացահենք մոտեցմամբ: Ի՞նչն է շեշտադրվում այս մոտեցման շրջանակում:

5. Ինչպե՞ս է մեկնաբանվում տարածաշրջանայնությունն արդյունքահենք մոտեցմամբ: Ի՞նչն է շեշտադրվում այս մոտեցման շրջանակում:

6. Մեկնաբանե՛ք տարածաշրջանայնության մեկնաբանման գործընթացահենք մոտեցման ու տարածաշրջանայնացման բնորոշման առնչությունները:

7. Որո՞նք են տարածաշրջանայնության՝ Է. Հարելի առաջարկած կարգերը և ինչպես են դրանք բնութագրվում:

8. Որո՞նք են միջազգային տարածաշրջանայնության էվոլյուցիոն փուլերը, ինչո՞վ է բնութագրվում դրանցից յուրաքանչյուրը, և ինչո՞վ են դրանք տարբերվում միմյանցից:

9. Ինչո՞վ են տարբերվում տարածաշրջանայնության բաց ու փակ տիպերը:

10. Որո՞նք են տարածաշրջանայնության հին-նոր տարբերակման հիմնական բնութագրերը՝ ըստ Բ. Հեթնեի:

11. Ինչպե՞ս է բնութագրում Լ. Ֆոսեթը տարածաշրջանայնության կոշտ և փափուկ տիպերը:

12. Ի՞նչ փոխկապակցություններ կան տարածաշրջանայնության հին ու նոր, բաց ու փակ, կոշտ ու փափուկ տիպերի միջև:

13. Տարածաշրջանայնության ի՞նչ չափումներ է առանձնացնում, և ինչպե՞ս է դրանք բնութագրում Բ. Հեթնեն:

14. Ինչո՞վ է պայմանավորված տարածաշրջանայնության բարձր-ցածր մակարդակների տարբերակումը:

15. Ի՞նչ է միջտարածաշրջանայնությունը, և ինչո՞վ է այն տարբերվում տարածաշրջանայնությունից:

16. Ինչո՞վ է պայմանավորված միջտարածաշրջանայնության ի հայտ գալը համաշխարհային մասշտաբով:

17. Ո՞րն է Հ. Հենգիի՝ միջտարածաշրջանայնության բնորոշման ելակետը, և միջտարածաշրջանայնության ի՞նչ ձևեր ու տարատեսակներ է նա առանձնացնում: Բնութագրե՛ք այդ ձևերը:

18. Ո՞րն է Շ. Համանակայի՝ միջտարածաշրջանայնության բնորոշման ելակետը, և նա միջտարածաշրջանայնության ի՞նչ ձևեր ու տարատեսակներ է առանձնացնում: Բնութագրե՛ք այդ ձևերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Amin S. (1999). Regionalization in Response to Polarizing Globalization// *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 54-84.

Doidge M. (2011), The European Union and Interregionalism: Patterns of Engagement, New York: Ashgate/Routledge, pp. 2-26, 31-56.

Hänggi H. (2005), Interregionalism as a Multifaceted Phenomenon: In Search of a Typology // *Interregionalism and International Relations: A Stepping Stone to Global Governance?*, H. Hänggi, R. Roloff and J. Rüland, Eds., New York, Routledge, pp. 31-62.

Hettne B. (1999), Globalization and the New Regionalism: The Second Great Transformation // *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 1-24.

Mittelman J. H. (1999). Rethinking the “New Regionalism” in the Context of Globalization, // *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 25-53.

Slocum N., Van Langenhove L. *(*2005). Identity and Regional Integration// M. Farrell, B. Hettne & L. Van Langenhove, Eds., *Global Politics of Regionalism. Theory and Practice*. London: Pluto Press, 321 p., pp. 137-154.

Кулматов К., Митрофанова А. (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад», 536 с., с. 104-117.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Օգտագործելով միջազգային տարածաշրջանայնության վերը տրված բնորոշումները՝ 600-700 բառային ծավալի շրջանակում կազմե՛ք ընտրված տարածաշրջանում միջպետական համագործակցության մասին տեղեկանք:

2. Օգտագործելով միջտարածաշրջանայնության վերը տրված բնորոշումները՝ 600-700 բառային ծավալի շրջանակում կազմե՛ք ընտրված տարածաշրջանային խմբավորման արտա-տարածաշրջանային կապերի մասին տեղեկանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] A. Hurrell (1995). Regionalism in Theoretical Perspective // *Regionalism in World Politics. Regional Organization and International Order*, L. Fawcett and A. Hurrell, Eds., Oxford, Oxford University Press, pp. 37-73.

[2] T. A. Börzel and T. Risse (2016). Introduction // *The Oxford Handbook of Comparative Regionalism*, Oxford, Oxford University Press, pp. 3-15.

[3] J. S. Nye (1968). Introduction in *International Regionalism: Readings*, Boston, Little, Brown and Company, pp. v-xvi.

[4] А. Воскресенский (2017). Регионализация в международных отношениях // *Современные международные отношения: Учебник*, А. Торкунов and А. Мальгина, ред., Москва: «Аспект Пресс», pp. 103-117.

[5] E. B. Haas (1970). The Study of Regional Integration: Reflections on the Joy and Anguish of Pretheorizing. *International Organization,* Vol. 24, No. 4, pp. 606-646.

[6] M. Doidge (2011). The European Union and Interregionalism: Patterns of Engagement, New York: «Ashgate/Routledge».

[7] B. Hettne (1999). Globalization and the New Regionalism: The Second Great Transformation, // *Globalism and the New Regionalism" Volume 1*, B. Hettne, A. Inotai and O. Sunkel, Eds., Basingstoke, St. Martin's Press, Inc., pp. 1-24.

[8] L. Fawcett (2004). Exploring Regional Domains: A Comparative History of Regionalism, *International Affairs,* Vol. 80, No. 3, pp. 429-446.

[9] A. Ohanyan (2015). Networked Regionalism as Conflict Management, Stanford University Press: Stanford.

[10] B. Hettne (2005), Beyond the "new" regionalism, *New Political Economy,* Vol. 10, No. 4, pp. 543-571.

[11] H. Hänggi (2005). Interregionalism as a Multifaceted Phenomenon: In Search of a Typology, // *Interregionalism and International Relations: A Stepping Stone to Global Governance?*, H. Hänggi, R. Roloff and J. Rüland, Eds., New York, Routledge, pp. 31-62.

[12] S. Hamanaka (2019). Inter-regionalism in the developing world: comparison with extra-, cross-, trans-, and pan-regionalism, *IDE Discussion Paper,* Vol. 737, No. 02, pp. 1-24.

[13] К. Кулматов (2010). А. Митрофанова, Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[14] J. Rüland (2002), ASEM - Transregional Forum at the Crossroads, // *Asian-European Perspectives. Developing the ASEM Process*, London: «Routledge», pp. 60-76.

ԹԵՄԱ 7. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ կկատարենք տարածաշրջանային անվտանգության համալիրներին՝ որպես տարածաշրջաններում միջպետական փոխհարաբերությունների ուսումնասիրության մեթոդական մոտեցմանը, այդ տեսության հիմքում ընկած անվտանգայնացման տեսությանն ու այդ համալիրների տիպավորմանը:

7.1. Միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակները. տարածաշրջանը՝ որպես վերլուծության ենթամակարդակ

Համաշխարհային քաղաքականության մեջ պետությունների մասնակցությամբ տեղի ունեցող իրադարձություններն ու գործընթացները մեկնաբանելու համար մասնագիտական գրականության մեջ հաճախ առաջարկվում է կիրառել *մակարդակային* վերլուծության մեթոդը: Այդ մեթոդի դասական՝ եռամակարդակ տարբերակը (ըստ ***Քենեթ Ուոլցի***) ենթադրում է, որ այդ գործընթացների կամ իրադարձությունների համակողմանի վերլուծությունը պետք է իրականացվի երեք մակարդակով՝ անհատի, պետության ու համակարգի: *Անհատի* մակարդակում ուսումնասիրության առարկան որոշում ընդունող(ներ)ի անձնային հատկանիշներն են, օրինակ՝ համոզմունքները, ընկալումները, վարքը, *պետության մակարդակում՝* տվյալ պետության ներքին միջավայրի հատկանիշները, օրինակ՝ քաղաքական ռեժիմը, կառավարման ձևը, տնտեսական կացութաձևը, քաղաքական մշակույթը, հանրային կարծիքը, շահերի ու ճնշման խմբերը, իսկ *համակարգի մակարդակում՝* արտաքին միջավայրի հատկանիշները՝ մի-

ջազգային համակարգի կառուցվածքը, ուժային հարաբերակցությունը և այլն: *Միջազգային հարաբերությունների տեսություններից* յուրաքանչյուրն իր հերթին, ինչպես գիտենք, կարևորում է այս կամ այն գործոնների համախմբի ազդեցությունը պետության արտաքին քաղաքականության վրա [1, p. 57], օրինակ՝ անհատի մակարդակում հատկանիշների վերլուծության կարևորությունն ընդգծում է կոնստրուկտիվիզմը, պետության մակարդակում՝ ռեալիզմը, մարքսիզմը, միջազգային համակարգում՝ նոր ռեալիզմը, նոր-ազատական ինստիտուցիոնալիզմը: Սակայն ավանդական այս մոտեցումների կողքին վերջին շրջանում լայնորեն կիրառվում է վերլուծության ևս մեկ՝ *տարածաշրջանային մակարդակը* (տե՛ս նաև ***Գծապատկեր 1***): Այսպես՝ միջազգային հարաբերությունները դիտարկելով որպես համակարգ՝ համակարգային մոտեցման շրջանակում խոսվում է միջազգային հարաբերությունների գլոբալ համակարգի կառուցվածքային տարրերի, այդ թվում՝ միջազգային հարաբերությունների *տարածաշրջանային (ենթա)համակարգերի* առկայության մասին՝ որպես դրանց բնորոշող հատկանիշներ նշելով այն, որ [2, c. 112].

- միջազգային քաղաքական կյանքի հիմնասկզբունքները բնորոշ են ամբողջ աշխարհին, և տարածաշրջանային ենթահամակարգերը՝ որպես միջազգային կյանքի կազմակերպման առավել ցածր մակարդակ, ևս բնութագրվում են գլոբալ համակարգի հատկանիշներով,
- քանի որ տարածաշրջաններն ինքնատիպ են, և տարածաշրջանային որևէ ենթահամակարգի գործառնության ուսումնասիրությունը կարող է միայն սահմանափակ նշանակություն ունենալ տարածաշրջանային այլ ենթահամակարգերի գործառնությունը հասկանալու համար,

• այդուհանդերձ, տարածաշրջանը որպես վերլուծության առանձին մակարդակ դիտարկելը, տարածաշրջանային որևէ ենթահամակարգի կառուցվածքն ու գործառնման առանձնահատկություններն ըմբռնելը կարող են օգնել՝ հասկանալու այլ տարածաշրջաններ, անգամ եթե դրանց ներքին գործընթացներն ունեն տարբերություններ:

Գծապատկեր 1. Միջազգային հարաբերությունների վերլուծության մակարդակները



Ա. Վոսկրեսենսկին միջազգային հարաբերությունների *տարածաշրջանային ենթահամակարգը* սահմանում է որպես միջազգային հարաբերությունների համակարգի տարածական չափման մեջ տնտեսաքաղաքական, մշակութային-քաղաքակրթական, սոցիալ-մշակութային և սոցիալ-պատմական փոխազդեցությունների ամբողջություն: Ենթահամակարգային փոխազդեցությունների այդ համախմբի հիմքում այդ ենթահամակարգի

մաս կազմող պետությունների տարածաշրջանային-աշխարհագրական, սոցիալ-պատմական և տնտեսաքաղաքական ընդհանուր պատկանելությունն է: Ըստ որում, հեղինակի համոզմամբ միևնույն պետությունը տարբեր չափորոշիչներով կարող է պատկանել մեկից ավելի տարածաշրջանային հատվող ենթահամակարգերի [2, pp. 112-113]:

Ա. Վոսկրեսենսկին խոսում է նաև տարածաշրջանային համալիրի ու տարածաշրջանային կարգի մասին: Նա նշում է, «տարածաշրջանային ենթահամակարգն» ավելի ընդգրկուն է, քան «*տարածաշրջանային համալիրը*», և եթե դրանցից առաջինը շեշտում է պետությունների փոխազդեցությունների տարածական ընդգրկումը, ապա երկրորդը՝ այդ փոխազդեցությունների ծավալը, եթե առաջինը շեշտում է մակրոտարածաշրջանը՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ, ապա երկրորդը՝ այդ համակարգի որևէ «ոլորտային» հատվածը: Որպես տնտեսության մեջ տարածաշրջանային համալիրի այդպիսի «ոլորտային» դրսևորման օրինակ՝ նա նշում է տարածաշրջանային ինտեգրման մակարդակները (տե՛ս *5.3*), իսկ անվտանգության ոլորտում՝ տարածաշրջանային անվտանգության համալիրը՝ տարածաշրջանի պետությունների փոխհարաբերությունների բնույթն ազգային-պետական և միջազգային անվտանգության հարցերում [2, c. 115-116]: Իսկ «*տարածաշրջանային կարգը*» հեղինակը սահմանում է որպես տարածաշրջանային ենթահամակարգի կամ համալիրի ներքին կառուցվածքի կազմակերպման միջոց, որն առաջնահերթորեն պայմանավորված է տարածաշրջանի պետությունների ուժային հարաբերակցությամբ ու նրանց փոխհարաբերությունների բնույթով [2, c. 116]:

7.2. Տարածաշրջանային անվտանգության համալիրներ

Համակցելով նոր ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի որոշ տարրեր՝ Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչներ ***Բարի Բուզանը*** **և** ***Օլե Վեվերն*** առաջ քաշեցին տարածաշրջանային անվտանգության համալիրների տեսությունը (ՏԱՀՏ): Այն ուշադրությունը կենտրոնացնում է ուսումնասիրվող պետության անմիջական՝ տարածաշրջանային միջավայրի վրա: Տեսության հեղինակները պնդում են, որ համաշխարհային քաղաքականության իրողությունները պետք է բացատրել ոչ միայն համաշխարհային՝ ընդհանուր միջազգային համակարգի, այլ նաև դրա մաս կազմող տարածաշրջանային ենթահամակարգերի հատկանիշներով: Փաստորեն, վերլուծության տարածաշրջանային մակարդակը նրանք տեղադրում են միջազգային համակարգի ու պետության մակարդակների միջև: Ըստ այդմ՝ տարածաշրջանները դիտարկվում են որպես համաշխարհային համակարգի բաղադրիչներ՝ ենթահամակարգեր, որոնց շրջանակներում տարածաշրջանի պետությունների միջև ուժային հարաբերակցությունն ու թշնամական կամ բարեկամական փոխհարաբերություններն այն աստիճան են փոխկապակցված, որ հնարավոր չէ այդ երկրների անվտանգության խնդիրները դիտարկել մյուսներից առանձին: Այդ սերտ փոխկապակցություններն էլ ստեղծում են *տարածաշրջանային անվտանգության համալիր* [3, pp. 40, 43-44]: Պետությունների թշնամական-բարեկամական փոխհարաբերությունների զարգացման շարժընթացը բացատրելու և դրա հիման վրա ՏԱՀ–երը կառուցելու համար հեղինակները կիրառում են ***անվտանգայնացման տեսությունը***: Անվտանգայնացումը, ըստ նրանց կողմից տրված ձևակերպման, խոսույթային (դիսկուրսիվ) գերքաղաքականացված գործընթաց է, որի ընթացքում քաղա-

քական հանրույթը (իմա՝ կառավարող էլիտան) ձևավորում է այս կամ այն գործոնի, երևույթի՝ պետության համար կենսական սպառնալիք կամ վտանգավոր լինելու մասին պատկերացումներ և դրան դիմակայելու կամ չեզոքացնելու նպատակով ստեղծում է հրատապ ու բացառիկ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն [4, pp. 23-25]:

Փաստորեն՝ ՏԱՀ-երն անվտանգային մակրոտարածաշրջաններ կամ ենթատարածաշրջաններ են: Պետությունների խումբը անվտանգության (ենթա)համալիր անվանելու համար նրանց միջև անվտանգության ոլորտում պետք է լինեն այնպիսի խորը փոխազդեցություններ, որոնք պետությունների այդ խմբին կառանձնացնեն հարակից տարածքներից ու դրանցում գտնվող պետություններից: Այս առումով հատկանշական է, որ Բուզանն ու Վեվերը խոսում են նաև ՏԱՀ-ի բացակայության կամ ձևավորման անհնարինության երկու խումբ պայմանների մասին՝ «ծածկելու» ու «չկառուցվածքայնացվածության» դեպքերը: Առաջին դեպքում անվտանգային տարածաշրջանից դուրս գտնվող մեծ տերության շահերն այդ տարածաշրջանում այն աստիճան են մեծանում, որ նրա գործողություններն այդ տարածաշրջանում դուրս են գալիս ***ներթափանցման***[4] տրամաբանությունից: Մեծ

[4] Ներթափանցումը, ըստ Բ. Բուզանի և Օ. Վեվերի բնորոշման, մեծ տերության գործողություններն են որևէ տարածաշրջանում, որոնց արդյունքում այդ մեծ տերությունն սկսում է ազդել տարածաշրջանի ներքին գործընթացների վրա՝ որպես դրանց ուղղակի կամ անուղղակի մասնակից: Ներթափանցման օրինակներ կարելի է համարել ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, ՆԱՏՕ-ի ԳՀԽ ծրագիրը, Ամերիկայի Միացյալ Նահանգների և եվրոպական մի շարք երկրների սերտ գործակցությունը Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի քաղաքական էլիտաների ու քաղաքացիական հասարակության հետ, Արևմուտք-ՌԴ «պատժամիջոցների պատերազմը», Թուրքիայի ռազմատեխնիկական, տնտեսական, կրթական և մշակութային սերտ գործակցությունը Վրաստանի, Ադրբեջանի ու թյուրքախոս կենտրոնասիական երկրների հետ, Չինաստանի աճող ակտիվությունը Կենտրոնական Ասիայում ու Հարավային Կովկասում և այլն:

տերությունն սկսում է այն աստիճան «*ծածկել*» այդ տարածաշրջանը, որ անվտանգության ոլորտում տարածաշրջանի պետությունների փոխհարաբերությունների «տեղական» կառուցվածքը պարզապես դադարում է գործառնել: Արդյունքում, որպես կանոն, մեծ տերությունն այս տարածաշրջանում երկարաժամկետ կտրվածքով տեղակայում է իր ՋՈՒ-ները և իրեն է ենթարկեցնում տարածաշրջանի պետություններին: Այդպիսի իրավիճակի օրինակների թվում հեղինակները հիշատակում են Աֆրիկայի, Ասիայի և Ամերիկաների գաղութացման շրջանը, Եվրոպան «սառը պատերազմի» ժամանակաշրջանում: Երկրորդ՝ անվտանգային տարածաշրջանում *կառուցվածքի բացակայությունը* հեղինակները պայմանավորում են երկու հնարավորությամբ.

1. տարածաշրջանի պետություններն այնքան թույլ են, որ նրանց հզորությունը դուրս չի գալիս նրանց սեփական սահմաններից (օրինակ՝ Սահարայից հարավ գտնվող աֆրիկյան մի շարք պետությունների դեպքը),

2. աշխարհագրական մեկուսացումը (օրինակ՝ Խաղաղ օվկիանոսում գտնվող կղզային պետությունների դեպքը) պարզապես դժվարացնում է տարածաշրջանի պետությունների փոխազդեցությունը:

Այսպիսով, եթե «ծածկելու» դեպքը պայմանավորված է նրանով, որ արտաքին մեծ տերությունն է սահմանում անվտանգային տարածաշրջանի սահմաններն ու նրա ներքին փոխհարաբերությունները՝ այդկերպ բացառելով ինքնուրույն ՏԱՀ-ի գոյությունը, ապա չկառուցվածքայնացման դեպքում ինքնուրույն ՏԱՀ-ի բացակայությունը պայմանավորված է մասամբ աշխարհագրական խոչընդոտներով, մասամբ էլ՝ դրանց՝ պետությունների փոխազդեցությունների վրա ունեցած բացասական ազդեցությամբ [3, pp. 61-63]:

Հեղինակները նշում են նաև չկառուցվածքայնացված տարածաշրջանների երկու տեսակների մասին՝ *մինչհամալիր*, երբ տարածաշրջանի պետությունների երկկողմ փոխհարաբերություններն ունեն ներուժ ՏԱՀ-ի ձևավորման համար, բայց դեռ թերզարգացած են անվտանգության ոլորտում նրանց բազմակողմ հարաբերությունները (օրինակ՝ Սոմալի թերակղզին), և *նախահամալիր*, երբ հստակորեն ուրվագծվում են անվտանգության ոլորտում տվյալ տարածաշրջանի պետությունների փոխկապակցվածությունն ու տարանջատվածությունը հարևան պետություններից, բայց, այդուհանդերձ, նրանց ներտարածաշրջանային բազմակողմ կապերը դեռևս շատ թույլ են՝ լիարժեք համալիր ձևավորելու համար (օրինակ՝ Արևմտյան Աֆրիկան) [3, p. 64]:

Տարածաշրջանը ՏԱՀ համարելու համար այն, ըստ հեղինակների, պետք է բավարարի չորս **հիմնարար պայմանի** [3, p. 53].

1. ունենա անվտանգային սահմաններ, որոնք տվյալ ՏԱՀ-ն կտարանջատեն հարևաններից,
2. ունենա անիշխանական կառուցվածք. բաղկացած լինի երկու և ավելի ինքնուրույն միավորներից,
3. ունենա բևեռայնություն՝ այդ միավորների միջև հզորության բաշխվածության որևէ ձև,
4. ունենա սոցիալական կառուցվածք՝ այդ միավորների միջև հստակ արտահայտված թշնամական կամ բարեկամական փոխհարաբերություններ (այդ պայմաններին բավարարող համալիրները տրված են ***Գծապատկեր 2***-ում):

Գծապատկեր 2. Աշխարհի ՏԱՀ–երն ըստ Բուզանի և Վեվերի



Բ. Բուզանը և Օ. Վեվերը խոսում են նաև ՏԱՀ-երի՝ տարբեր սկզբունքների վրա տիպաբանության մասին: Այսպես, *ըստ պետությունների փոխհարաբերությունների բնույթի*՝ նրանք տարբերում են ՏԱՀ-ի երեք տեսակ՝ *հակամարտային կազմավորում* (բացահայտ թշնամանք, զինված հակամարտություններ, ինչպես, օրինակ, հետխորհրդային տարածքում), *անվտանգության ռեժիմ* (հակամարտությունները զսպվում են ՏԱՀ-ի պետությունների՝ միջազգային նորմերին ու ինստիտուտներին հավատարմության միջոցով, ինչպես, օրինակ, Հարավարևելյան Ասիայում) և *անվտանգության ընկերակցություն* (սերտ փոխկապվածության շնորհիվ ՏԱՀ-ի պետությունների միջև պատերազմներն անպատկերացնելի են, ինչպես, օրինակ, ԵՄ տարածքում) (***տե՛ս նաև 8.2***): Իսկ *ըստ հզորության բաշխվածության ու համամասնության*՝ հեղինակները նշում են ՏԱՀ-ի չորս տեսակ՝ *տիպային*, *կենտրոնացված* (իր չորս ենթատեսակներով), *մեծ տերության* ՏԱՀ և *տարածաշրջանային անվտանգության գերհամալիր*, ո-

որոնց բնութագրերն ու օրինակները տրված են ***Աղյուսակ 1-ում*** [3, pp. 53-62]:

Աղյուսակ 1. ՏԱՀ-երի տեսակները՝ ըստ բևեռայնության

ՏԵՍԱԿ	ԲՆՈՒԹԱԳԻՐ	ՕՐԻՆԱԿ
Ստանդարտ (տիպային)	Բևեռայնությունը որոշվում է տարածաշրջանային տերությունների թվով՝ միաբևեռ, երկբևեռ և բազմաբևեռ:	Հարավային Աֆրիկա, Հարավային Ասիա, Հարավարևելյան Ասիա
Կենտրոնացված՝ *հետևյալ ենթատեսակներով*		
Գերտերության	Միաբևեռ, որի կենտրոնը գերտերություն է:	Հյուսիսային Ամերիկա
Մեծ տերության	Միաբևեռ, որի կենտրոնը խոշոր տերություն է:	Հետխորհրդային տարածք
Տարածաշրջանային տերության	Միաբևեռ, որի կենտրոնը տարածաշրջանային տերություն է:	*Չկա (հիպոթետիկ)*
Ինստիտուցիոնալ	Տարածաշրջանը՝ միասնական դերակատար	Եվրոպական միություն
Մեծ տերությունների ՏԱՀ	Երկբևեռ կամ բազմաբևեռ, որի կենտրոնը մեծ տերություններ են:	Արևելյան Ասիա
ՏԱ գերհամալիր	Մեծ տերությունների «ներթափանցումների» պատճառով միջտարածաշրջանային սերտ փոխկապակցություններ	Արևելյան և Հարավային Ասիաներ

Բ. Բուզանը և Օ. Վեվերը նշում են նաև ժամանակային միջակայքում ՏԱՀ-երի ***զարգացման երեք հնարավոր սցենար*** [3, p. 53]՝

1. *սպասում–քվոյի պահպանում.* տվյալ ՏԱՀ-ի կառուցվածքում որևէ նշանակալի փոփոխություն տեղի չի ունենում,

2. *ներքին փոխակերպում.* ՏԱՀ-ի կառուցվածքը փոփոխվում է ներքուստ (օրինակ՝ անարխիկ համակարգը, բևեռայնությունը կամ սոցիալական կառուցվածքը),

3. *արտաքին փոխակերպում.* ՏԱՀ-ի սահմաններն ընդլայնվում կամ նեղանում են. փոխվում է ՏԱՀ-ի մաս կազմող միավորների թիվը հարևան պետությունների հաշվին:

7.3. ՏԱՀՏ համալրումը նոր չափումներով

Որոշ հեղինակներ քննադատում են ՏԱՀ բազային տեսությունը՝ նկատելով, որ դրանում գերիշխող պետականակենտրոն մոտեցումը հաշվի չի առնում ոչ պետական դերակատարներին, տնտեսական ու անդրազգային գործընթացները: Մեթոդաբանական այդ խնդիրն իր հերթին դժվարացնում է մակրոտարածաշրջանային համալիրների համալիր տեսության կառուցումը: Ուստի Բուզանի և Վեվերի բազային տեսությունը չի արտացոլում տարածաշրջան ձևավորող անվտանգային բոլոր գործընթացները, մասնավորապես նվազեցնում է տնտեսական ու նորատիպ քաղաքական գործընթացների նշանակությունը, հաշվի չի առնում նոր մարտահրավերներն ու սպառնալիքները, հետևաբար այդ տեսությունը վերաիմաստավորման կարիք ունի [5, c. 197-198]:

ՏԱՀ-ի բազային տեսությունը նոր բաղադրիչներով համալրելու մի փորձ է ***Ջոնգ–Յուն Բայի*** և ***Չունգ-ին Մունի*** հայեցա-

կարգը: Այդ հեղինակներն առաջարկում են, մասնավորապես, **հինգ լրացուցիչ-նոր չափումներ** [6, pp. 11-13]:

1. Ավանդաբար ՏԱՀ-ի միավորներ դիտարկվում են միայն պետությունները, մինչդեռ ժամանակակակից աշխարհում նշանակալի ազդեցություն ունեն նաև այնպիսի ***ոչ կառավարական դերակատարներ***, ինչպիսիք են անդրազգային կորպորացիաները, քաղաքացիական հասարակության կառույցները, ահաբեկչական ու միջազգային հանցավոր խմբավորումները:

2. Հաջորդ լրացումը միավորների միջև փոխկապակցությունների մոդելն է՝ ***կարգը***, որը, ըստ հեղինակների, կարող է լինել անիշխանական, գերիշխանական կամ միաբևեռ, աստիճանակարգային, ուժային հավասարակշռության և ապակենտրոնացված:

3. Մյուս լրացումը վերաբերում է ՏԱՀ-ի ***գործառնական*** առանձնահատկություններին: Եթե նախկինում անվտանգությունն ընկալվում էր գերազանցապես ռազմական իմաստով, ապա հեղինակների համոզմամբ այսօր ռազմականն ընդամենը մի ոլորտ է, որը պետք է դիտարկել տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ ոլորտների հետ փոխկապակցության մեջ:

4. Եվս մի լրացում վերաբերում է ՏԱՀ-ի ***նորմատիվ-գաղափարական հիմքերին***՝ դրա միավորների վարքը կանոնակարգող պատկերացումներին, նորմերին, գաղափարներին, պատմական հիշողությանը:

5. Եվ որպես վերջին լրացում՝ հեղինակները նշում են ՏԱՀ-ի ներսում խնդիրների կարգավորման ***մեխանիզմների մասին***, որոնք բաժանում են երեք խմբի՝ *ռեալիստական* (դաշինք, տերությունների համույթ, գերիշխանություն), *ազատական* (տարածաշրջանային համագործակցության ռեժիմ, հավաքական անվտանգության համակարգ) և *կոնստրուկտիվիստական* (ընդհա-

նուր անցյալ, հավաքական հիշողություն, հավաքական տարածաշրջանային ինքնություն):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են արտաքին քաղաքականության վերլուծության անվանդական մակարդակները, և ո՞ր գործոնների, հանգամանքների վերլուծությունն է անհրաժեշտ համարում դրանցից յուրաքանչյուրը:

2. Ինչո՞վ է պայմանավորված արտաքին քաղաքականության վերլուծության տարածաշրջանային մակարդակի ի հայտ գալը, և ի՞նչ գործոնների վրա է այն անհրաժեշտ համարում կենտրոնացնել ուշադրությունը:

3. Ի՞նչ է միջազգային հարաբերությունների տարածաշրջանային (ենթա)համակարգը, և ի՞նչ հատկանիշներով է այն բնորոշվում:

4. Ի՞նչ է տարածաշրջանային համալիրը, և ինչո՞վ է այն տարբերվում տարածաշրջանային ենթահամակարգից:

5. Ի՞նչ է տարածաշրջանային անվտանգության համալիրը, և միջպետական հարաբերությունների ի՞նչ հատկանիշների հիման վրա է այն ձևավորվում:

6. Ի՞նչ պայմանների պետք է համապատասխանի պետությունների խումբը, որպեսզի այն համարվի ՏԱՀ:

7. Ի՞նչ է ենթադրում անվտանգայնացման տեսությունը և ինչպե՞ս է այն կապված ՏԱՀ-ի տեսության հետ:

8. Ի՞նչ է ներթափանցումը ՏԱՀ-ի տեսության մեջ: Գործնական ի՞նչ օրինակներ կարող եք նշել:

9. Ո՞ր երկու գործոնների, պայմանների դեպքում է անհնար ՏԱՀ-ի ձևավորումը: Նշեք ՏԱՀ չունեցող տարածաշրջանի գործ-

նական օրինակներ՝ բացատրելով դրանցում ՏԱՀ-ի բացակայությունը:

10.Ինչպե՞ս են ՏԱՀ-ի տեսության հեղինակները բնութագրում չկառուցվածքայնացված տարածաշրջանի երկու տեսակները:

11. Որո՞նք են այն չորս պայմանները, որոնց պետք է համապատասխանի տարածաշրջանը՝ ՏԱՀ համարվելու համար:

12. Ի՞նչ սկզբունքներով են տիպաբանվում ՏԱՀ-երը, և ըստ այդմ՝ ի՞նչ տարատեսակներ են նշվում:

13. ՏԱՀ-ի զարգացման ի՞նչ սցենարներ են նշում ՏԱՀ-ի տեսության հեղինակները:

14. Որո՞նք են ՏԱՀ-ի տեսության համալրման հինգ չափումները: Բնութագրե՛ք դրանցից յուրաքանչյուրը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Bae J.-Y. and Moon C.-i. (2005). Unraveling the Northeast Asian Regional Security Complex" Old Patterns and New Insights, *The Korean Journal of Defense Analysis,* Vol. XVII, No. 2, pp. 9-14.

Buzan B. (2003). Regional Security Complex Theory in the Post-Cold War World// Fredrik Söderbaum and Timothy M. Shaw (Ed.), Theories of New Regionalism. A Palgrave Reader, Palgrave Macmillan, New York, pp. 141-144, 152-156.

Buzan B. and Wæver O. (2003). Regions and Powers. The Structure of International Security, New York: Cambridge University Press, pp. 10-12, 43-70.

Soltani F., Naji S. and Amiri R. E. (2014). Levels of Analysis in International Relations and Regional Security Complex Theory, Journal of Public Administration and Governance, Vol. 4, No. 4, pp. 167-169.

Воскресенский А., Колдунова Е., Лунев С. (2014). Макрорегионализация и региональные комплексы. Виды регионов. Региональные подсистемы и региональный порядок// Воскресенский А. (ред.), Мировое комплексное регионоведение: Учебник. Москва: «Магистр», 416 с., с. 192-200.

Лукин А. Л. (2011). Теория комплексов региональной безопасности и Восточная Азия, *Ойкумена*, № 2, с. 7-10.

Սողոմոնյան Մ. (2014). Միջազգային հարաբերությունների տեսություններ և վերլուծության մակարդակներ: Դասախոսություններ, Երևան: ԵՊՀ հրատ., էջ 6-10:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտագործելով ՏԱՀ-երի՝ վերը տրված բնորոշումները, ինչպես նաև Բուզան-Վեվերի՝ 2003 թ. գրքում տրված գործնական օրինակ-բնորոշումները (էջ 93-443)՝ 600-700 բառային ծավալի շրջանակում կազմե՛ք ընտրված տարածաշրջանի ՏԱՀ-ի ընդհանուր բնութագիրը՝ տալով դրա տեսակը՝ ըստ միջպետական փոխհարաբերությունների բնույթի ու հզորության բաշխվածության համամասնության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] K. L. Shimko (2010). International Relations: Perspectives and Controversies, 3 ed., Boston: Cengage Learning.

[2] А. Воскресенский (2017). Регионализация в международных отношениях // *Современные международные отношения: Учебник*, А. Торкунов and А. Мальгина, ред., Москва: «Аспект Пресс», с. 103-117.

[3] B. Buzan and O. Wæver (2003). Regions and Powers. The Structure of International Security, New York: Cambridge University Press.

[4] B. Buzan, O. Wæver and J. de Wilde (1998). Security. A New Framework for Analysis, London: Lynne Rienner.

[5] А. Воскресенский, Е. Колдунова, С. Лунев (2014). Макрорегионализация и региональные комплексы. Виды регионов. Региональные подсистемы и региональный порядок // *Мировое комплексное регионоведение: Учебник*, Москва, ИНФРА-М, с. 176-200.

[6] J.-Y. Bae and C.-i. Moon (2005). Unraveling the Northeast Asian Regional Security Complex. Old Patterns and New Insights, *The Korean Journal of Defense Analysis,* Vol. XVII, No. 2, pp. 7-34.

[7] M. Doidge (2011). The European Union and Interregionalism: Patterns of Engagement, New York: Ashgate/Routledge.

[8] В. Дергачёв, Л. Вардомский (2015). Регионоведение: Учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальностям «Регионоведение», «Международные отношения», 2 ed., Москва: ЮНИТИ-ДАНА.

[9] R. Stewart-Ingersoll and D. Frazier (2012). Regional Powers and Security Orders: A Theoretical Framework, London: Routledge, p. 278.

ԹԵՄԱ 8. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳ

Այս թեմայի շրջանակում անդրադարձ կկատարենք տարածաշրջանների «ուժային» կառուցվածքին՝ դրանց ներսում պետությունների՝ ըստ հզորության տիպաբանության, պետությունների աստիճանակարգմանը, ինչպես նաև տարածաշրջանի բևեռ-պետությունների միջև փոխհարաբերությունների բնույթի վրա հիմնված տարածաշրջանային կարգերին ու դրանց տեսակներին:

8.1. Տարածաշրջանի կառուցվածքը

Եթե, ինչպես կարծում են որոշ հեղինակներ, ***տարածաշրջանային կարգը*** *տարածաշրջանային համալիրի կառուցվածքի կազմակերպման միջոց է, և այն որոշվում է տարածաշրջանի պետությունների ուժային հարաբերակցությամբ ու նրանց փոխհարաբերությունների բնույթով* [1, c. 116], ապա ***տարածաշրջանի կառուցվածքը*** *որոշվում է բևեռայնությամբ՝ նրանում հզոր պետությունների (ուժի կենտրոնների) առկայությամբ, դրանց թվով ու հզորությունների հարաբերակցությամբ*: Այս հանգամանքն անհրաժեշտ է դարձնում անդրադառնալ պետությունների աստիճանակարգման հիմնահարցին:

8.1.1. Պետությունների աստիճանակարգումը միջազգային համակարգում

Հարկ է նշել, որ միջազգային համակարգում պետությունների աստիճանակարգության և աստիճանակարգման չափանիշների հարցում մասնագիտական գրականության մեջ չկա միաս-

նական մոտեցում: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել միջազգային համակարգում *ըստ հզորության պետությունների աստիճանակարգման երեք մոտեցում՝ քանակական, որակական ու համալիր* [2, էջ 4-5]: ***Քանակական մոտեցման*** հիմքում ընկած են պետությունների չափման քանակական չափանիշները (օրինակ՝ տարածքի չափը, բնակչության թիվը, ՀՆԱ մեծությունը, ԶՈՒ թիվը, սպառազինությունների քանակը) և չափորոշիչները (քանակական տվյալների շեմերը): Օրինակ՝ **Թոմ Քրովարդսը**, սահմանելով տարածքի չափի, բնակչության թվի և ՀՆԱ մեծության շեմեր, նշում է պետությունների հինգ տիպ՝ գաճաճ, փոքր, միջին-փոքր, միջին-մեծ և մեծ (տե՛ս ***Աղյուսակ 1***):

Աղյուսակ 1. Պետությունների աստիճանակարգությունը՝ ըստ Քրովարդսի [3, p. 152]

ԿԱՐԳԸ	ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
Մեծ	**Տարածքը** > 250,000 քկմ **Բնակչությունը** > 12 մլն **ՀՆԱ** > 19 մլրդ ԱՄՆ $
Միջին մեծ	**Տարածքը** 125-250,000 քկմ **Բնակչությունը** 6.7-12 մլն **ՀՆԱ** 7-19 մլրդ ԱՄՆ $
Միջին փոքր	**Տարածքը** 40-125,000 քկմ **Բնակչությունը** 2.7-6.7 մլն **ՀՆԱ** 2.5-7 մլրդ ԱՄՆ $
Փոքր	**Տարածքը** 7-40,000 քկմ **Բնակչությունը** 0.5-2.7 մլն **ՀՆԱ** 0.7-2.5 մլրդ ԱՄՆ $

Գաճաճ	**Տարածքը** < 7,000 քկմ **Բնակչությունը** < 0.5 մլն **ՀՆԱ** < 0.7 մլրդ ԱՄՆ $

Որակական մոտեցման հիմքում ընկած են որակական չափանիշները (օրինակ՝ տվյալ երկրի քաղաքական էլիտայի ընկալումները) և չափորոշիչները (սեփական երկրի միջազգային կշռի մասին էլիտայի պատկերացումները): Օրինակ՝ **Ռոբերտ Քոհեյնը**, հիմք ընդունելով միջազգային համակարգի վրա պետության ազդեցության մասին քաղաքական էլիտայի պատկերացումները, տարբերակում է պետությունների չորս տիպ՝ մեծ, երկրորդական, միջին և փոքր (տե՛ս ***Աղյուսակ 2***):

Աղյուսակ 2. Պետությունների աստիճանակարգությունը՝ ըստ Քոհեյնի [4, p. 296]

ԿԱՐԳԸ	Երկրի առաջնորդները կարծում են, որ իրենց երկիրը...
Մեծ	միայնակ կարող է ունենալ վճռորոշ ազդեցություն միջազգային համակարգի վրա
Երկրորդային	միայնակ կարող է ունենալ ոչ վճռորոշ ազդեցություն միջազգային համակարգի վրա
Միջին	միայնակ չի կարող արդյունավետորեն գործել, բայց փոքր խմբում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ
Փոքր	միայնակ կամ փոքր խմբով չի կարող էական ազդեցություն ունենալ համակարգի վրա

Երրորդ՝ ***համալիր մոտեցումը*** ներառում է նախորդ երկուսի չափանիշ-չափորոշիչները: Օրինակ՝ **Բալդուր Թյոռհալսոնն** ա-

ռաջ է քաշում միջազգային համակարգում պետությունների աստիճանակարգման վեց չափանիշ-չափորոշիչ, որոնք ներկայացված են ***Աղյուսակ 3***-ում:

Աղյուսակ 3. Թյոռհալսոնի վեց «չափումները» [5, p. 8]

ՉԱՓՈՒՄԸ	ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
Ամրագրված	Տարածքի մեծությունը և բնակչության թիվը
Ինքնիշխանության	Կարողությունը՝ ապահովել ներքին ինքնիշխանություն պետության ամբողջ տարածքում և արտաքին ինքնիշխանություն միջազգային թատերաբեմում
Քաղաքական	Ռազմական և վարչական կարողությունները, միասնականությունը ներքին ու արտաքին հարցերում
Տնտեսական	ՀՆԱ մեծությունը, շուկայի տարողությունը, զարգացման հաջողությունները
Ընկալման	Տվյալ պետության և արտաքին դերակատարների ընկալումները, վերաբերմունքը
Հավակնությունների	Կառավարող էլիտայի հավակնությունները և նրա գաղափարների տարածումը միջազգային ասպարեզում

8.1.2. Պետությունների աստիճանակարգումը տարածաշրջանային ենթահամակարգում

Տարածաշրջանի կառուցվածքում, ըստ հզորության, առանձնացնում են պետությունների մի քանի «քաշային» կարգեր՝ գերտերություններ, խոշոր տերություններ կամ տարածաշրջանային

գերիշխաններ, գործընկեր պետություններ և ծայրամասային վասալներ:

Ինչպես նշում են որոշ հեղինակներ, **գերտերություններն** (օրինակ՝ ԱՄՆ-ն) ունակ են նշանակալիորեն ազդելու միջազգային ամբողջ համակարգի և դրա մաս կազմող տարածաշրջանային ենթահամակարգերի վրա՝ փոխելով իրավիճակը, ուղղորդելով գործընթացները, և, ինչպես արդեն նշվեց նախորդիվ, կարող են անգամ իրենցով «ծածկել» որևէ տարածաշրջան կամ ենթատարածաշրջան՝ թույլ չտալով այնտեղ ինքնուրույն համալիրի ձևավորումը: Նրանք նաև ունակ են տարածաշրջանների ներսում կամ դրանց միջև ստեղծելու կցորդ-գոտիներ (բուֆերներ) [6, p. 197]: *Ներթափանցման շնորհիվ գերտերությունները միջազգային բոլոր տարածաշրջանների կառուցվածքի մաս են*:

Խոշոր տերությունները (օրինակ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան) գերտերություններից տարբերվում են նրանով, որ տվյալ պահին չեն կարող փոխել միջազգային համակարգը, բայց ունեն ներուժ՝ որոշ ժամանակ անց վերածվելու գերտերության: *Նրանց ազդեցությունը, ի տարբերություն գերտերությունների, սահմանափակվում է գերազանցապես սեփական տարածաշրջանով ու մի քանի այլ տարածաշրջանով*: Որոշ հեղինակներ խոշորներին բաժանում են երկու խմբի՝ «*հների*» (օրինակ՝ նույն վերոհիշյալները), որոնք ներկայիս համաշխարհային ստատուս-քվոյի պահապաններն են, և «*նորերի*» (օրինակ՝ ՌԴ–ն, Չինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Իրանը), որոնք, հակառակը, ձգտում են փոփոխել այդ ստատուս-քվոն [1, c. 115-116]:

Եթե միջազգային-գլոբալ համակարգում խոշոր տերությունը երկրորդային կամ միջին տերություն է, ապա որոշ հեղինակների ձևակերպմամբ [7, c. 39-40] սեփական տարածաշրջանում այն

ունի **տարածաշրջանային գերիշխանի** (եթե նրան տարածաշրջանի ներսից կամ դրսից չեն դիմակայում այլ խոշոր տերություններ կամ գերտերություններ) կամ գերակայողի՝ **նախագերիշխանի** (եթե նրան դիմակայող կա) կարգավիճակ: Տարածաշրջանի իր մյուս հարևանների համեմատ՝ տարածաշրջանային գերիշխանի հզորությունը (նախևառաջ՝ ռազմականը, ՀՆԱ-ն, բնակչության թիվը) նշանակալիորեն մեծ է: Որպես կանոն, տարածաշրջանային (նախա)գերիշխանը միջուկային տերություն է (օրինակ՝ ՌԴ, Հնդկաստան, Պակիստան) կամ գտնվում է միջուկային զենքի ստեղծման ճանապարհին: Ավելին, ցանկացած գերտերություն իր տարածաշրջանում ունի գերիշխանի կարգավիճակ (օրինակ՝ ԱՄՆ-ն Հյուսիսային Ամերիկայում): Անհրաժեշտության դեպքում տարածաշրջանային (նախա)-գերիշխանն ունակ է ինքնուրույն՝ առանց այլ տերությունների աջակցության կարգավորելու տարածաշրջանի ներքին խնդիրները, պատասխանատվություն կրելու տարածաշրջանային խաղաղության, անվտանգության ու կայունության համար, ստեղծելու տարածաշրջանային ուժային աստիճանակարգությունն արտացոլող տարածաշրջանային ռազմաքաղաքական ու տնտեսական խմբավորումներ: Ընդհանուր առմամբ, **Ռոբերտ Ստյուարտ-Ինգերսոլը** և **Դերիկ Ֆրայզերը** տարածաշրջանային տերություն են համարում այն պետություններին, որոնք ունեն բավարար հնարավորություններ իրենց ուժն ամբողջ ՏԱՀ-ում արտածելու համար և այդ համալիրի շրջանակներում անհամամասնորեն ազդում են անվտանգության շարժընթացի վրա [8, p. 7]:

Հաճախ նշվում են տարածաշրջանային (նախագերիշխանի հետևյալ ***հատկանիշները*** [7, c. 40].

1. այդ տերությունն աշխարհագրորեն պատկանում է տվյալ տարածաշրջանին,

2. ունակ է դիմակայելու տարածաշրջանի պետությունների ցանկացած կոալիցիային,

3. մեծ ազդեցություն ունի տարածաշրջանում,

4. նրա գերիշխանական կամ գերակայող կարգավիճակն ընդունվում է տարածաշրջանի ներսում և դրսում:

Այդ կարգավիճակն ստանալու և պահպանելու համար տարածաշրջանային պետությունը, բնականաբար, պետք է լինի ***ուժեղ*** պետություն: Բուզանը և Վեվերն ուժեղ են համարում ներհասարակական սոցիալ-քաղաքական համախմբվածության բարձր մակարդակ ու ներքաղաքական բռնության ցածր մակարդակ ունեցող պետություններին: Այդպիսի պետությունները, որպես կանոն, ժողովրդավարական վարչակարգեր ունեն և կենտրոնացած են գերազանցապես *արտաքին* սպառնալիքներին դիմակայելու վրա: Դրանց հակապատկերը ***թույլ*** պետություններն են, որոնք, ըստ հեղինակների, որպես կանոն, ոչ ժողովրդավարական վարչակարգեր ունեն, աչքի են ընկնում ներքին սուր երկպառակություններով, անկայունություններով և գերազանցապես կենտրոնացած են իրենց ներքին խնդիրներին, սպառնալիքներին դիմակայելու վրա [9, p. 492]:

Ինչպես նկատում են մի շարք հեղինակներ, որոշ տարածաշրջաններում կարելի է հանդիպել նաև **«օտարված (նախա)գերիշխանի»** (օրինակ՝ Իսրայելը Միջին Արևելքում), որոնք ունեն գերիշխանական ձգտումներ, բայց դրանք լիարժեք իրագործել չեն կարող, քանի որ նրանց (նախագերիշխանի կարգավիճակը չեն ընդունում ո՛չ հարևան պետությունները, ո՛չ էլ երբեմն միջազգային հանրությունը [7, c. 46]:

Տարածաշրջանի մաս են նաև **գործընկեր-պետությունները**, որոնք այնքան հզոր չեն, որ կարողանան մրցակցել տարածաշրջանային (նախա)գերիշխանի հետ, բայց այնքան հզոր են,

որ նրա հետ փոխշահավետ գործարքի մեջ կմտնեն՝ պահպանելով իրենց ինքնուրույնությունը: Այդպիսի պետությունները, ինչպես նշում են հեղինակները [7, c. 46], կա՛մ ձգտում են պահպանել տարածաշրջանային ուժային առկա ստատուս-քվոն և դրա համար աջակցում են (նախա)գերիշխանին, կա՛մ, հակառակը, ձգտում են վերանայել ստատուս-քվոն՝ դրա համար փորձելով տարածաշրջանի այլ պետությունների հետ խմբավորում կազմել կամ որևէ այլ խոշոր տերության հետ դաշինքի միջոցով դիմակայել տարածաշրջանային (նախա)գերիշխանին: Դրան հակառակ՝ տարածաշրջանային (նախա)գերիշխանի կարգավիճակը երբեք կասկածի տակ չեն դնում, հակառակը՝ ամեն կերպ աջակցում են նրանից կախյալ պետությունները՝ **ծայրամասային վասալները**:

Խոսելով տարածաշրջանային ենթահամակարգի և միջազգային համակարգի ու դրա մաս տարածաշրջանային ենթահամակարգի մասին տարածաշրջանի պետությունների դիտանկյունից՝ **Բուզանն** ու **Վեվերը** նշում են, որ եթե խոշոր տերությունները կարող են «ցատկել» համալիրից համալիր և «ներթափանցման» (օրինակ՝ ռազմաքաղաքական կամ տնտեսաքաղաքական դաշինք ստեղծելով այդ համալիրի փոքր կամ միջին տերությունների հետ) միջոցով ազդել նրանց ներքին գործընթացների վրա, ապա փոքր պետությունն իր հարևանների հետ «փակված» է մի ՏԱՀ-ում և մշտապես ենթարկվում է դրա ներքին գործընթացների ազդեցությանը [9, p. 46]:

8.1.3. Տարածաշրջանի «բևեռային» կառուցվածքը

Ինչպես նշվեց վերևում, տարածաշրջանի կառուցվածքը որոշվում է բևեռայնությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված

է տվյալ տարածաշրջանում հզոր պետությունների առկայությամբ, դրանց թվով և հարաբերակցությամբ: Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել *ՏԱՀ-ի կառուցվածքի չորս տարբերակ՝ միաբևեռ, երկբևեռ, բազմաբևեռ* [7, c. 41-42] *և անբևեռ*:

Միաբևեռ ՏԱՀ-ի դեպքում կա տարածաշրջանային մեկ գերիշխան, որն ունի բավարար հզորություն տարածաշրջանում կայունություն ու անվտանգություն ապահովելու համար (ԱՄՆ-ն՝ Հյուսիսային Ամերիկայում, ՀԱՀ-ն՝ Հարավային Աֆրիկայում, Նիգերիան՝ Արևմտյան Աֆրիկայում, ՌԴ-ն՝ հետխորհրդային տարածքում):

ՏԱՀ-ը **երկբևեռ** ու **բազմաբևեռ** է, եթե դրանում կան միմյանց հավասարակշռող, հակակշռող, համապատասխանաբար երկու և ավելի տարածաշրջանային նախագերիշխաններ: Երկբևեռ տարածաշրջաններ են, օրինակ, Հարավային Ասիան (Հնդկաստան-Պակիստան), Արևելյան Ասիան (Չինաստան-Ճապոնիա), Հարավային Ամերիկան (Բրազիլիա-Արգենտինա): Բազմաբևեռ է Միջին Արևելքը (Իսրայել-Իրաք-Սաուդյան Արաբիա-Եգիպտոս), թեև նրա առանձին ենթատարածաշրջաններ ունեն այլ կառուցվածք՝ երկբևեռ Մաղրիբը (Թունիս-Մարոկկո) և Ծոցը (Իրան-Սաուդյան Արաբիա):

Անբևեռ ՏԱՀ–ի մասին արդեն խոսել ենք (*տե՛ս **7.2***): Սա այն դեպքն է, երբ տարածաշրջանի պետություններն այնքան թույլ են, որ նրանց հզորությունը սահմանափակվում է միայն սեփական տարածքով (Սահարայից հարավ ընկած տարածքը):

8.2. Տարածաշրջանային կարգ

Ստյուարտ-Ինգերսոլը և **Ֆրայզերը** պնդում են, որ ՏԱՀ-ի շրջանակներում տարածաշրջանային տերությունների (կամ,

վերևում կիրառված ձևակերպմամբ, տարածաշրջանային գերիշխանի) դերն ու քաղաքականությունն ուղղակիորեն ազդում են տվյալ ՏԱՀ-ի կառուցվածքի, կարգի, դրա շրջանակում անվտանգության խնդիրների, հետևաբար նաև համալիրի մյուս պետությունների քաղաքականության վրա [8, p. 6]: Հենց միջպետական փոխհարաբերությունների բնույթն էլ պայմանավորում է *տարածաշրջանային անվտանգության կարգը* (ՏԱԿ): Դա, ըստ հեղինակների, *համակարգի միավորների միջև փոխհարաբերությունների կարգավորման մեխանիզմների ամբողջություն է*, ներառյալ կանոնները, սկզբունքները, ինստիտուտները, որոնք կոչված են կանխատեսելի դարձնելու պետությունների փոխազդեցությունները [8, p. 18]: Հիմք ընդունելով ՏԱՀ-ի ներսում տարածաշրջանային տերությունների սահմանած խաղի կանոնների բնույթը՝ նրանք առանձնացնում են ՏԱԿ-ի հինգ տեսակ (տե՛ս ***Աղյուսակ 4***):

Աղյուսակ 4. Տարածաշրջանային անվտանգության կարգերը
[8, pp. 6-7, 18, 26]

ՏԵՍԱԿ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	ՀԻՄՔ
Գերիշխանության վրա հիմնված	Միաբևեռ	Կանոնները և ինստիտուտները, որոնք սպասարկում են դրանք ստեղծող տարածաշրջանային պետության շահերը:
Ուժի վրա հիմնված	Միաբևեռ, երկբևեռ կամ բազմաբևեռ	Անվտանգության սպառնալիքներին դիմակայելուն ուղղված ուժային ռազմավարությունները
Համույթի վրա հիմնված	Երկբևեռ կամ բազմաբևեռ	Ուժեղագույն մրցակից պետությունների համատեղ ջանքները՝ ուղղված ընդհանուր սպառնալիքների չեզոքացմանը

Ինտեգրման վրա հիմնված	Միաբևեռ, երկբևեռ կամ բազմաբևեռ	Պետությունների սերտ փոխկապակցությունները, որոնց հիման վրա ձևավորվում են նրանց ընդհանուր շահերը, արժեքներն ու ինքնությունը
Անկարգ	Առանց ուժային կենտրոնի	Կառավարման ընդհանուր-միասնական մեթոդների բացակայություն

Ինչպես նշում են հեղինակները [8, pp. 26-32], **գերիշխանության վրա հիմնված** ՏԱԿ-ի դեպքում ՏԱՀ-ը կարող է ունենալ միայն միաբևեռ կառուցվածք" կա տարածաշրջանային մեկ գերիշխան, որն ինքնուրույն (հաճախ իր իսկ կողմից ստեղծված և իր իսկ շահերն սպասարկող տարածաշրջանային կազմակերպությունների ու պայմանագրերի միջոցով) ապահովում է իր աներկբա գերակայությունը տարածաշրջանի մյուս պետությունների նկատմամբ: Վերջիններս ի վիճակի չեն ինքնուրույն կամ համատեղ դիմակայել գերիշխանին: Գերիշխանական կարգով միաբևեռ ՏԱՀ-ի օրինակ կարելի է համարել կոմունիստական ճամբարը «սառը պատերազմի» տարիներին:

Եթե որևէ արտաքին դերակատար կարողացել է ներթափանցել տարածաշրջան, ապա նրանում առկա կարգը, թեկուզ պահպանելով տարածաշրջանի միաբևեռ կառուցվածքը, այլևս չի կարող համարվել գերիշխանության վրա հիմնված: Միաբևեռ, երկբևեռ և բազմաբևեռ կառուցվածք ունեցող կամ արտաքին դերակատարի կողմից «ներթափանցված» ՏԱՀ-երում կարող է հաստատվել **ուժի վրա հիմնված** ՏԱԿ: Այսպիսի տարածաշրջաններում մրցակցող պետությունները միմյանց նկատմամբ կիրառում են ուժահենք ռազմավարություններ (օրինակ՝ բալանսավորում, դաշնակցում) և մեթոդներ (ուժի կիրառման սպառնալիք, շանտաժ), այդ թվում՝ տնտեսության ոլորտում: Բուզանը և

Վեվերն այսպիսի ՏԱՀ-ն անվանում են ***հակամարտային կազմավորում*** [9, pp. 53-54], և դրա գործնական օրինակ կարելի է համարել հետխորհրդային տարածքը:

Համույթի վրա հիմնված կարգի դեպքում նախագերիշխանները դադարում են միմյանց համարել թշնամի և պայմանավորվում են չհարձակվել միմյանց վրա, պաշտպանում են ձևավորված ստատուս-քվոն՝ հրաժարվելով տարածաշրջանում գերիշխանության ձգտումներից: Երաշխավորելով տարածաշրջանային անվտանգությունն արտաքին ու ներքին սպառնալիքներից՝ տարածաշրջանի հզոր պետությունները, այդուհանդերձ, չեն հրաժարվում միմյանց հետ մրցակցությունից, բայց այդ մրցակցությունը ևս ենթարկվում է խաղի համաձայնեցված կանոններին և չի վտանգում տարածաշրջանային կայունությունը, իսկ առավել լուրջ տարաձայնություններն այդ պետությունները կարգավորում են փոխզիջումների, գործարքների և միջազգային-տարածաշրջանային բազմակողմ ինստիտուտների միջոցով: Արդյունքում, ըստ Բուզանի ու Վեվերի ձևակերպման, ձևավորվում է ***անվտանգության ռեժիմ***. պետությունները ոչ միայն պարզապես ստեղծում են անվտանգության ոլորտում նրանց փոխհարաբերությունները կարգավորող նորմեր ու ինստիտուտներ, այլ նաև պահպանում են այդ համաձայնությունները միմյանց հետ փոխհարաբերություններում [9, p. 175]: Համույթի ժամանակակից օրինակներ են Հարավարևելյան Ասիան և Լատինական Ամերիկան:

Ընդհանրապես, մի շարք հեղինակներ համույթը համարում են *հավաքական անվտանգության համակարգի* երկու տարատեսակներից մեկը, որն անցումային ձև է ուժային հավասարակշռությամբ բնորոշվող քաոսային բազմաբևեռայնությունից, ուժի վրա հիմնված կարգից դեպի հավաքական անվտանգու-

թյան համակարգի մյուս՝ առավել կազմակերպված տարատեսակ՝ ***անվտանգության ընկերակցություն*** [7, pp. 42-44]: ՏԱՀ-ի այս տեսակն ունի **ինտեգրման վրա հիմնված** կարգ, որի դեպքում, ինչպես նշում են հեղինակները, համալիրի մաս կազմող պետությունները ոչ միայն հրաժարվում են միմյանց նկատմամբ ուժի կիրառման սպառնալիքից, այլ նաև չեն պատկերացնում, չեն պլանավորում միմյանց դեմ որևէ ռազմական գործողություն: Նրանց միջև միջպետական տարաձայնությունները հարթելու միակ ընդունելի ու հնարավոր միջոց նրանք համարում են դիվանագիտությունը: Սակայն հարկ է նկատել, որ անվտանգության ընկերակցության ներսում ռազմական հակամարտության բացառումը բոլորովին չի բացառում, որ այդ համայնքի մաս կազմող պետությունները կարող են զինված ուժ կիրառել այլ՝ ընկերակցությունից դուրս գտնող պետությունների նկատմամբ: Ինտեգրման վրա հիմնված կարգն ի հայտ է գալիս պետությունների ու նրանց հասարակությունների միջև տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական սերտ փոխազդեցության՝ ինտեգրման արդյունքում, որն էլ իր հերթին մասնակիցների միջև ստեղծում է խորը փոխկապվածություն ու փոխկախվածություն [8, pp. 30-31]: Սա ենթադրում է ոչ միայն կայուն կարգ, այլ նաև կայուն խաղաղություն, որի արդյունքում հաղթահարվում է ավանդական «անվտանգության երկընտրանքը»: Այսպիսի կարգ առկա է, օրինակ, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ներսում:

Տարածաշրջանային անվտանգության կարգերի վերջին տեսակն **անկարգն** է, երբ ՏԱՀ-ում չի ձևավորվել անվտանգության հարցերի կառավարման որևէ արդյունավետ համակարգ: Սակայն, ինչպես նշում են Ստյուարտ-Ինգերսոլը և Ֆրայզերը, եթե անգամ այդ ՏԱՀ-ի մաս կազմող որևէ պետությունն ունակ չէ իր հզորությունն արտածելու մյուսների վրա, այդ պետության գործո-

ղություններն ու ներքին գործընթացները, այդուհանդերձ, կարող են բացասաբար ազդել, մարտահրավերներ ստեղծել հարևան պետությունների համար [8, p. 31]: Այսպիսին են, օրինակ, Կենտրոնական Աֆրիկան և Սոմալի թերակղզին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս են բնորոշվում, սահմանվում տարածաշրջանային կարգը և տարածաշրջանի կառուցվածքը:

2. Ի՞նչ սկզբունքների հիման վրա է միջազգային համակարգում կատարվում պետությունների աստիճանակարգումը՝ ըստ հզորության:

3. Ի՞նչ չափանիշների ու չափորոշիչների վրա են հիմնված քանակական, որակական և համալիր մոտեցումները: Նշե՛ք այդ մոտեցումներից յուրաքանչյուրից որևէ օրինակ:

4. Պետությունների «քաշային» ի՞նչ կարգեր են առանձնացվում միջազգային-գլոբալ և տարածաշրջանային համակարգերում:

5. Ինչպե՞ս են բնորոշվում գերտերությունը և խոշոր տերությունը: Որո՞նք են դրանց տարբերությունները:

6. Ինչպե՞ս են բնորոշվում տարածաշրջանային գերիշխանը, նախագերիշխանը և «օտարված գերիշխանը»: Որո՞նք են դրանց տարբերությունները: Որո՞նք են տարածաշրջանային գերիշխանի հատկանիշները:

7. Ինչպե՞ս է բնորոշվում տարածաշրջանային տերությունը:

8. Ինչպե՞ս են բնորոշվում գործընկեր-պետությունը և ծայրամասային վասալը: Որո՞նք են դրանց տարբերությունները:

9. Բուզանը և Վեվերն ինչպե՞ս են բնորոշում ուժեղ և թույլ պետությունը:

10.Ինչպե՞ս են բնորոշվում ՏԱՀ-ի միաբևեռ, երկբևեռ, բազմաբևեռ և անբևեռ կառուցվածքները: Նշե՛ք դրանցից յուրաքանչյուրից որևէ գործնական օրինակ:

11. Ի՞նչ է տարածաշրջանային անվտանգության կարգ, և ինչո՞վ է այն պայմանավորված՝ ըստ Ստյուարտ-Ինգերսոլի և Ֆրայզերի:

12. Ինչպե՞ս են բնորոշվում գերիշխանության, ուժի, համույթի, ինտեգրման վրա հիմնված և անկարգ ՏԱԿ-երը, որո՞նք են դրանց տարբերությունները: Նշե՛ք դրանցից յուրաքանչյուրից որևէ գործնական օրինակ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Buzan B., Wæver O. (2003). Regions and Powers. The Structure of International Security, New York: Cambridge University Press, pp. 53-60.

Stewart-Ingersoll R., Frazier D. (2010). Regional powers and security: A framework for understanding order within regional security complexes, *European Journal of International Relations*, Vol. 16, No. 4, pp. 734-739.

Stewart-Ingersoll R., Frazier D. (2012). Regional Powers and Security Orders: A Theoretical Framework, London: Routledge, pp. 26-31.

Воскресенский А. (2017), Регионализация в международных отношениях // *Современные международные отношения: Учебник*, А. Торкунов, А. Мальгина, Ред.., Москва: «Аспект Пресс», с. 103-116.

Воскресенский А., Колдунова Е., Лунев С. (2014). Макрорегионализация и региональные комплексы. Виды регионов. Региональные подсистемы и региональный порядок// *Мировое*

комплексное регионоведение: Учебник, Москва: ИНФРА-М, 2014, с. 176-200.

Кулматов К. Н., Митрофанова А. В. (2010). *Региональные аспекты международных отношений. Учебник.* Москва; «Восток-Запад», с. 39-47.

Գալստյան Ն. (2019). Փոքր պետությունների արտաքին քաղաքական վարքի հիմնական հատկանիշներն ու պատճառները, «*Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*», հ. 29, N. 2, էջ 3-16:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Օգտագործելով Քրովարդսի մոտեցումը՝ չափե՛ք ու ըստ կարգերի դասակարգե՛ք ձեր ընտրած տարածաշրջանի պետությունները:

2. Օգտագործելով 8.1.2-ում տրված տիպաբանական մոտեցումը՝ ըստ հզորության տիպաբանե՛ք ձեր ընտրած տարածաշրջանի պետությունները:

3. Օգտագործելով 8.1.3-ում տրված մոտեցումը՝ տիպաբանե՛ք և բնութագրե՛ք ձեր ընտրած տարածաշրջանի բևեռային կառուցվածքը:

4. Օգտագործելով 8.2-ում տրված մոտեցումը՝ տիպաբանե՛ք և բնութագրե՛ք ձեր ընտրած տարածաշրջանի անվտանգային կարգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

[1] А. Воскресенский (2017). Регионализация в международных отношениях // *Современные международные отношения: Учебник*, А. Торкунов and А. Мальгина, ред., Москва: «Аспект Пресс», с. 103-117.

[2] Ն. Գալստյան (2019). Փոքր պետությունների արտաքին քաղաքական վարքի հիմնական հատկանիշներն ու պատճառները, *«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն»,* h. 29, N. 2, էջ 3-16.

[3] T. Crowards (2002). Defining the category of "small states", *Journal of International Development,* Vol. 14, No. 2, pp. 143-179.

[4] R. Keohane (1969). Lilliputians Dilemmas: Small States in International Politics, *International Organization,* Vol. 23, No. 2, pp. 291-310.

[5] B. Thorhallsson (2006). The size of states in the European Union: Theoretical and conceptual perspectives, *Journal of European Integration,* Vol. 28, No. 1, pp. 7-31.

[6] А. Воскресенский, Е. Колдунов, С. Лунев (2014). Макрорегионализация и региональные комплексы. Виды регионов. Региональные подсистемы и региональный порядок // *Мировое комплексное регионоведение: учебник*, Москва: ИНФРА-М, pp. 176-200.

[7] К. Кулматов, А. Митрофанова (2010). Региональные аспекты международных отношений. Учебник, Москва: «Восток-Запад».

[8] R. Stewart-Ingersoll and D. Frazier (2012). Regional Powers and Security Orders: A Theoretical Framework, London: Routledge, p. 278.

[9] B. Buzan and O. Wæver (2003). Regions and Powers. The Structure of International Security, New York: Cambridge University Press,.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԵԿ ԱՄԲԱՏԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 20.04.2021:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 8.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am